



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 101 2017

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, ղեկավար (գլխավոր խմբագիր)

Գևորգ Բաղդասարյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Միեր Հակոբյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Վահրամ Շահինյան Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետ, իրավ. գիտ. թեկնածու (համաձայնությամբ)

Հովհաննես Սրեփանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան Լեոնային Ղարաբաղի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Խմբագրության հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-589, ֆաքս՝ 585-152
Էլ. հասցե՝ orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը, ոճը, տառածները և էջադրումը՝ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 16.10.2017թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 5,5 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն» հրատարակչության տպարանում Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՅՑ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը հանդիպել է Հայաստանում Չինաստանի դեսպանին.....	3
ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը Պեկինում հանդիպել է ՉԺՀ գլխավոր դատախազին	3
ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Հայաստանում ԱՄՆ դեսպանին	4

ԿՈՒԵԳԻԱ

ՀՀ դատախազության կոլեգիայի ընդլայնված նիստ՝ նվիրված կալանավորման և հակընդդեմ հարցման իրավունքի վերաբերյալ ՄԻԵԴ սահմանած պահանջների ապահովմանը.....	5
ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը ելույթ է ունեցել Դատախազների միջազգային ասոցիացիայի 22-րդ համաժողովին	6
ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը ցավակցական ուղերձ է հղել Արտավազդ Գևորգյանի մահվան կապակցությամբ.....	7

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գևորգ Կոստանյան Հայեցողության սահմաններ սկզբունքի կիրառությունը միջազգային իրավունքում և դրա ուղղվածությունը	8
--	---

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Վարդգես Սարգսյան Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության նյութական արժեքները	16
Արգիշտի Քյարամյան, Հայկ Երեմյան Գործուն զոջալու ինստիտուտի քրեաիրավական և քրեադատավարական վերլուծություն	21

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Քազրատ Ղազինյան Գործադիր իշխանության մարմինների համակարգը սահմանադրական զարգացումների համատեքստում	28
Հայկ Կեսոյան Պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության ապահովումը և պետական իշխանության մարմինների միջև առաջացող վեճերի էությունը	33
Արման Ստեփանյան ՀՀ Նախագահի լիազորությունների իրական սահմանադրական բովանդակության բացահայտման հիմնախնդիրները	39
Լիլիթ Ղազանյան Անձի իրավական դրության իրացման իրավաբանական երաշխիքների առանձնահատկությունները	44
Կարեն Ամիրջան Պետական իշխանության և պաշտոնատար անձանց հանրային-իրավական պատասխանատվությունը սոցիալական պատասխանատվության համատեքստում	50
Овсеп Кочарян Некоторые правовые проблемы презумпции согласия на посмертное донорство в Республике Армения	55

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Նանե Սահակյան Պետական գնման պայմանագրի առարկան՝ որպես պայմանագրի էական պայման	59
Արտակ Գևորգյան Մարդու մարմինը՝ որպես իրավահարաբերության օբյեկտ	65

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Նարինե Մանասյան ՀՀ վարչական դատարան դիմելու իրավունքն անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա	71
---	----

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts	78
---	----

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները	88
--	----

ՀՀ ՂԵՄԱՎՈՐ ՂԱՏԱԽԱԶ ԱՐԹՈՒՐ ՂԱՎԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶԻՆԱՍՏԱՆԻ ՂԵՄՂԱՆԻՆ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընդունել է Հայաստանում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Թիան Էրլունին:



Կարևորելով երկու երկրների միջև առկա բարեկամական, գործընկերային բարձր

մակարդակի հարաբերությունները՝ կողմերն անդրադարձել են դատախազությունների միջև քրեական գործերով իրավական փոխօգնության ոլորտում համագործակցությանը, ընդգծել հանցավորության դեմ պայքարում գործակցության զարգացման անհրաժեշտությունը:

Քննարկվել են սեպտեմբերի 10-14-ին Պեկինում կայանալիք Դատախազների միջազգային ասոցիացիայի 22-րդ միջազգային կոնֆերանսին մասնակցելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի՝ Չինաստան կատարելիք այցի նախապատրաստական աշխատանքներին վերաբերող հարցեր:

Կողմերը մտքեր են փոխանակել նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի շուրջ:

ՀՀ ՂԵՄԱՎՈՐ ՂԱՏԱԽԱԶ ԱՐԹՈՒՐ ՂԱՎԹՅԱՆԸ ՂԵԿԻՆՈՒՄ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԶԺՀ ՂԵՄԱՎՈՐ ՂԱՏԱԽԱԶԻՆ

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն կատարած աշխատանքային այցի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը հանդիպել է ՉԺՀ գլխավոր դատախազ Ցաո Ցյանմինի հետ:

Հանդիպումն անցել է անկեղծ երկխոսության, ջերմ, անմիջական մթնոլորտում: Կողմերը բարձր են գնահատել Հայաստանի և Չինաստանի միջև բոլոր ոլորտներում հաստատված և դինամիկ զարգացող հարաբերությունները և վերահաստատել են ցանկությունը՝ ընդլայնելու և խորացնելու երկու երկրների դատախազությունների միջև ծավալվող արդյունավետ համագործակցությունը, որն սկզբնավորվել է 1999թ. Պեկինում ստորագրված համագործակցության մասին համաձայնագրով: Երկու երկրների գլխավոր դատախազները կարևորել են 2015թ. ՀՀ նախագահի՝ ՉԺՀ կատարած պետական այցի ընթացքում ստո-

րագրված՝ «ՀՀ-ի և ՉԺՀ-ի միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին» պայմանագիրը, որը նախադրյալներ է ստեղծում նոր մակարդակի բարձրացնելու միջազգային-իրավական համագործակցությունը:

ՉԺՀ գլխավոր դատախազ Ցաո Ցյանմինը արժևորել է Հայաստանի գլխավոր դատախազության հետ հաստատված սերտ գործընկերային կապերը, ինչպես նաև կարևորել բարձր մակարդակով Հայաստանի ակտիվ մասնակցությունը Պեկինում ընթացող Դատախազների միջազգային ասոցիացիայի 22-րդ ամենամյա համաժողովին, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության նախաձեռնողական ներգրավվածությունը միջազգային համագործակցության տարբեր ձևաչափերում: Պարոն Ցյանմինը համոզմունք է հայտնել, որ Հայաստանի և Չինաստանի դատախազությունների միջև հաստատված իրավապայմանագրային բազան հնարավորություն է տալիս

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 101 2017



բարձրացնելու իրավական օգնության փոխադարձ հարցումների արդյունավետությունը:

«Վ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը շնորհակալություն է հայտնել ՉԺՀ գլխավոր դատախազին ցուցաբերած ջերմ ընդունելության համար: Նա նշել է, որ հանցավորության դեմ պայքարում և իրավական փոխօգնության հարցում երկու երկրների դատախազությունների միջև փոխգործակցությունը զարգացնելու դեռևս չիրացված լուրջ ներուժ կա, և Հայաստանը մեծ հույսեր է կապում 2015թ. ստորագրված համաձայնագրի լիարժեք գործողության մեջ դրվելու հեռանկարի հետ:

«Վ գլխավոր դատախազը ՉԺՀ իր գործընկերոջը 2018թ. հրավիրել է Հայաստան՝ մասնակցելու հաջորդ տարի կայանալիք «Վ դատախազության կազմավորման 100-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառումներին: Արթուր Դավթյանը նշել է, որ այդ այցը կխթանի հետագա համագործակցությունը և դրա շրջանակներում համատեղ ծրագրերի իրականացումը: Պարոն Ցյանմինը սիրով ընդունել է հրավերը:

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒԿ ԱՄՆ ԴԵՍԴԱՆԻՆ

«Վ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընդունել է Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Միլսին:



Գլխավոր դատախազը կարևորել է ԱՄՆ դեսպանության և «Վ գլխավոր դատախազության միջև շարունակվող՝ համագործակցությանը միտված ակտիվ շփումները և բարձր է գնա-

հատել հատկապես քրեական գործերի թվայնացման, մասնագիտական վերապատրաստումների և իրականացվող այլ ծրագրերի շրջանակներում գործակցության ակտիվացման ուղղությամբ ամերիկյան կողմի ներդրած ջանքերը:

Դեսպան Միլսը պատրաստակամություն է հայտնել շարունակելու աջակցությունը համակարգային բարեփոխումներին՝ ուղղված ինչպես ընթացիկ, այնպես էլ հեռանկարային ծրագրերին: Նա ողջունելի է համարել քրեական վարույթի ընթացքում մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների կատարելագործման, այս հարցում շահագրգիռ բոլոր շրջանակների հետ երկխոսության գնալուն ուղղված Դատախազության վերջին նախաձեռնությունները, ինչպես նաև այն վճռականությունն ու գործողությունները, որոնք «Վ դատախազությունն արտահայտում է կոռուպցիայի դեմ պայքարում:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 101 2017

Անդրադառնալով այս ուղղությամբ իրականացված աշխատանքներին՝ Արթուր Դավթյանը կարևոր ձեռքբերում է համարել հատկապես իրավապահ մարմինների հետ քաղաքացիների համագործակցության նկատելի դրական միտումը, որը հակակոռուպցիոն պայքարի արդյունավետության բարձրացման առանցքային երաշխիքներից է:

Հանդիպման ընթացքում քննարկվել են փոխգործակցության հնարավոր նոր եզրեր գտնելու հեռանկարները, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Մանրամասն վերլուծվել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ իր դեմ ցուցմունք տված անձանց հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքի՝ Եվրոպական դատարանի կողմից Հայաստանի դեմ կայացված վճիռներում արձանագրված խախտումների պատճառները: Հատուկ կարևորվել է վկաներին դատարան ներկայացնելու ուղղությամբ պատշաճ ջանասիրություն ցուցաբերելու և որպես նշված իրավունքի ապահովմանն ուղղված լրացուցիչ երաշխիք՝ դատավարության ավելի վաղ փուլերում դրա իրացման անհրաժեշտությունը:

ՀՀ ԴԱՏԱՆԱԶՈՒԹՅԱՆ ԿՈՒՆԳԻԱՅԻ ԸՆԴԱՅՆՎԱԾ ՆԻՍՏ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱԿԸՆԴՐԵՄ ՀԱՐՋՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻԵԴ ՍԱՀՄԱՆԱԾ ԴԱՎԱՆՋՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆԸ

Օգոստոսի 4-ին տեղի է ունեցել Դատախազության կոլեգիայի ընդլայնված նիստ, որը նախագահել է ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը:

Նիստի ընթացքում քննարկվել են խափանման միջոց կալանավորման օրինականության և հիմնավորվածության, հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման գործնական խնդիրները:

Հուլիսի 3-ին դատախազության աշխատակցի օրվան նվիրված հանդիսավոր նիստում Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից իրավապահ գործունեության ընթացքում նշված հիմնարար կոնվենցիոնալ իրավունքների ապահովման առանձնահատուկ կարևորությունն ընդգծելուց հետո ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ ստեղծված աշխատանքային խմբերի կողմից նախորդ մեկ ամսվա ընթացքում ուսումնասիրվել և վեր են հանվել այս ոլորտում առկա գործնական խնդիրները և առաջարկվել հստակ լուծումներ:

Ուսումնասիրության շրջանակներում վերլուծվել են ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի վերաբերյալ ՄԻԵԴ ձևավորած նախադեպային իրավունքը և ներպետական իրավական կարգավորումները:

Հատուկ ուշադրության և վերլուծության են արժանացել Հայաստանի դեմ գործերով ՄԻԵԴ վճիռներում արձանագրված իրավիճակներն ու խախտումները՝ փաստելով, որ դրանք հետևանք

են նաև կալանավորման հիմքերի պարզմանն ու *հիմնավորմանն ուղղված բավարար միջոցներ չձեռնարկելու, ինչպես նաև նման փաստական տվյալների տիրապետելու դեպքում, անհետևողականության կամ չհիմնական պատճառով խափանման միջոց կալանավորում կիրառելու բավարար հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում քննիչի կողմից դրանք միջնորդության մեջ չարտացուլելը և չվերլուծելը:*

Մանրամասն վերլուծվել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ իր դեմ ցուցմունք տված անձանց հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքի՝ Եվրոպական դատարանի կողմից Հայաստանի դեմ կայացված վճիռներում արձանագրված խախտումների պատճառները: Հատուկ կարևորվել է վկաներին դատարան ներկայացնելու ուղղությամբ պատշաճ ջանասիրություն ցուցաբերելու և որպես նշված իրավունքի ապահովմանն ուղղված լրացուցիչ երաշխիք՝ դատավարության ավելի վաղ փուլերում դրա իրացման անհրաժեշտությունը:

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն առանձնահատուկ կարևորել է վեր հանված խնդիրների և ՄԻԵԴ ձևավորած չափանիշների համադրությամբ սահմանված կառուցակարգերի անշեղ պահպանման անհրաժեշտությունը՝ արձանագրելով դրանց խախտման դեպքում իրավասու պաշտոնատար անձանց պատասխանատվության անխուսափելիությունը:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 101 2017

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆԸ ԵՆՈՒՅԹ Է ՈՒՆԵՅԵԼ ԴԱՏԱԽԱՉՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ 22-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Պեկինում ընթացող Դատախազների միջազգային ասոցիացիայի 22-րդ տարեկան համաժողովին ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն այսօր հանդես է եկել կիրբերհանցագործությունների դեմ պայքարի և այդ համատեքստում թվային ապացույցների օգտագործման ոլորտում միջազգային համագործակցության վերաբերյալ ելույթով:

ՀՀ գլխավոր դատախազը ներկայացրել է կիրբերհանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը միտված միջազգային իրավական օգնության Հայաստանի իրավապայմանագրային դաշտը:

Նշելով, որ ընթացող համաժողովը կնպաստի դատախազների միջազգային ցանցում ընդգրկված երկրների իրավասու մարմինների միջև իրավական համագործակցության արդյունավետության բարձրացմանը՝ ՀՀ գլխավոր դատախազը շեշտադրում է կատարել հատկապես առկա խնդիրների, մասնավորապես՝ ազգային օրենսդրություններում առկա հակասությունների վերացման, դատախազությունների ղեկավար մարմինների դերակատարման ուժեղացման անհրաժեշտության վրա: «Սրանք առանցքային խնդիրներ են 21-րդ դարում, երբ հանցավորությունն այլևս սահմաններ չի ճանաչում, երբ, օրինակ, հանցագործությունների միջոցով ստացած եկամուտները բանկային օպերացիաների միջոցով փոխանցվում են այլ երկրներ, երբ երկրաչափական պրոգրեսիայով աճում է համացանցի միջոցով իրականացվող հանցագործությունների քանակը: Այս երևույթներն ունեն գլոբալ բնույթ և ներառում են անդրազգային տարրեր, ինչն առանցքային է դարձնում կիրբերհանցագործությունների հակազդման արդյունավետ միջոցների կիրառման առումով միջազգային համագործակցությունը», - նշել է Արթուր Դավթյանը:

Ելնելով ուժանցող մարտահրավերներից՝ ՀՀ գլխավոր դատախազն անհրաժեշտ է համարել համակարգչային հանցագործությունների բացահայտման արդյունավետությունը բարձրացնելու համար միջազգային համագործակցության կարևոր ուղղություն դարձնել քրեական գործերով համատեղ ապացույցների ձեռքբերումը: Նաև այդ նպատակով Հայաստանի կողմից առաջարկվել է ստեղծել համացանցային on-line ընդհանուր ռեսուրս, որի միջոցով ինչպես կիրբերհանցագործությունների դեմ պայքարի բուհապետության պայմանագրին միացած, այնպես էլ չմիացած երկրները կարող են ստեղծել համապատասխան հարցումների համար անհրաժեշտ տեղեկություններ և տվյալներ պարունակող անհատական բազաներ:

Պեկինում ընթացող համաժողովի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է տարբեր երկրների գլխավոր դատախազների, պատվիրակությունների ղեկավարների հետ՝ քննարկելով իրավական փոխգործակցության ակտիվացմանն ուղղված հնարավոր քայլերը և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Պեկինում ընթացող համաժողովի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է տարբեր երկրների գլխավոր դատախազների, պատվիրակությունների ղեկավարների հետ՝ քննարկելով իրավական փոխգործակցության ակտիվացմանն ուղղված հնարավոր քայլերը և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

ՀՀ զԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆԸ ՅԱՎԱԿՅԱԿԱՆ ՈՒՂԵՐՉ Է ՀՂԵԼ ԱՐՏԱՎԱՉԴ ՓԵՎՈՐՓՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ

Անձամբ իմ և դատախազության ողջ համակարգի անունից ցավակցություններս եմ հայտնում մեծանուն իրավաբանի ընտանիքին, հարազատներին, մերձավորներին և գործընկերներին:

ՀՀ դատախազության համակարգը Խորապես վշտացած է անվանի գիտնական, Հայաստանի Հանրապետության դատախազական համակարգի կայացման և զարգացման մեջ նշանակալի ավանդ թողած Արտավազդ Գևորգյանի մահվան կապակցությամբ:

Արտավազդ Գևորգյանն իր բազմաբեղուն գործունեությամբ մեծ հետք է թողել Խորհրդային Հայաստանի արդարադատության համակարգում, եղել է նորանկախ Հայաստանի Հանրապետության դատախազության կայացման ակունքներում, հանդիսացել իր ժամանակի ազնիվ և նվիրյալ, պետական մտածողությամբ օժտված պաշտոնյաներից մեկը՝

հսկայական վաստակ թողնելով պետականաշինության գործում:



ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՀՀ ԱԺ պատգամավոր, ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցիչ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ՀԱՅԵՂՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐ ՍԿՉԲՈՒՆՔԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՈՒՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
(ԳԻՏԱՎԵՐԼՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)**

Հայեցողության սահմաններ սկզբունքի գոյությունն ու կիրառությունը չեն սահմանափակվել և չեն սահմանափակվում բացառապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործադրմամբ: Նկատի ունենալով, որ դա, ըստ էության, հիմնական գործիքն է առավելագույնս մոտեցնելու տարբեր սովորույթներ, մշակույթ, կրոն և իրավական համակարգեր ունեցող երկրներին իրավունքի միատեսակ կիրառմանը, սկզբունքը բավականին լայն կիրառություն ունի նաև այլ միջազգային ատյաններում: Այս կապակցությամբ՝ Գ.Ի.Տունկինի գնահատմամբ. «Միջազգային կազմակերպությունները կարծես իրենց վրա են քաշում հարցերի մի զգալի քանակ, որոնցով մինչ այդ պետությունների միջև հարաբերություններն ունեցել են անմիջական երկկողմանի կամ բազմակողմանի բնույթ»¹: Հաշվի առնելով այն, որ պետությունները փոխանցում են իրենց լիազորությունների մի մասը միջազգային կազմակերպություններին, պետությունների հայեցողության ազատության օգտագործումը կարող էր զգալիորեն թեթևացնել պետությունների միջազգային համագործակցությունն այդպիսի միջազգային կազմակերպությունների շրջանակներում: Սկզբունքի կիրառման պրակտիկան կարելի է գտնել նաև այլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում:

Հետաքրքիր է, որ սկզբունքը լայն կիրառություն ունի Եվրոպական ընկերակցությունների դատարանի կողմից: Ընդ որում՝ հատկանշական է, որ այս դատարանի կողմից

սկզբունքի կիրառությունը մի շարք տեսաբաններ գնահատում են ավելի խորքային: Յու.Օրլովայի կարծիքով՝ Դատարանն այնպիսի պատասխանատվություն չի կրում սեփական որոշումների հետևանքների համար, որպիսին կրում է, օրինակ՝ ԵԸ դատարանը, ինչը թույլ է տալիս Դատարանին լինել առավել ազատ սեփական դատողություններում²: Ս.Ն.Կուզնեցովան հաստատել է Դատարանի վերահսկողական գործառույթի՝ ԵԸ անդամ պետությունների կողմից ԵԸ ակտերի կատարման նկատմամբ աստիճանական տարածման միտման առկայությունը, անգամ՝ չնայած ԵԸ-ն չի միացել Կոնվենցիային, բացատրելով այդպիսի միտումն այն հանգամանքով, որ Դատարանը ցանկություն չունի ընդունելու դա, որ պետությունները կարող են խուսափել Դատարանի կողմից իրականացվող վերահսկողությունից՝ փոխանցելով լիազորությունները միջազգային կազմակերպությանը³: Սակայն, Ս.Ն.Կուզնեցովայի պնդմամբ՝ Դատարանն ուշադրության չի առնում հայեցողության ազատությունը, որը ԵԸ տրամադրում է իր անդամներին ԵԸ համապատասխան օրենսդրությունն իրենց կողմից իրականացնելիս⁴: Այս ատյանի նախադեպային որոշումների ուսումնասիրությունն ուղակիորեն վկայում է, որ հայեցողության սահմանների սկզբունքի կիրառման հարցով դա առավել հստակ է և որոշակի: Առնվազն դատարանը հստակ սահմանում է այն ոլորտները, որտեղ երկրներն ունեն ընդգծված ավելի լայն հայեցողության սահմաններ: Այդ մասով

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 101 2017

¹ Տե՛ս Տունկին Գ.Ի. Միջազգային իրավունքի տեսություն. Մ., 1970, էջ 343:
² Տե՛ս Օրլովա Յու.Մ. ԵՄ Դատարանի համագործակցությունը միջազգային և ազգային դատական հաստատությունների հետ. ատեն. ... իր. գիտ. թեկն. 12.00.10 /Կազան, 2005, էջ 216:
³ Տե՛ս Կուզնեցովա Ս.Ն.: ԵՄ և ԵԻ համագործակցությունը մարդու հիմնական իրավունքների պաշտպանության ոլորտում. ատեն... իր. գիտ. թեկն. 12.00.10 / Կազան, 2005, էջ 209:
⁴ Տե՛ս նույն տեղը:

դատարանը սահմանել է⁵, որ ԵԸ անդամ երկրներն օժտված են հայեցողության որոշակի ազատությամբ՝ հասարակական անվտանգությանն սպառնալիքի առկայության դեպքում ապրանքների ներմուծման արգելք հայտարարելու իրավունքը կիրառելիս, «հանգամանքներից կախված՝ իրավասու պետական մարմիններն ունեն որոշակի աստիճանի ազատություն այն միջոցները ձեռնարկելիս, որոնք նրանք կհամարեն անհրաժեշտ՝ հասարակական անվտանգությունն ապահովելու համար...»:

ՄԱԿ Միջազգային դատարանը, նույնպես ուղղակիորեն ամրագրել է սկզբունքի անմիջական կիրառման փաստը: Առաջին դեպքը, երբ նա կիրառել է խնդրո առարկա սկզբունքը, Պարսից ծոցում ԱՄՆ և այլ չեզոք դրոշի ներքո լողացող նավթային տանկերների վրա հարձակման՝ պարսկական նավթային աշտարակների վրա ԱՄՆ երկու ռազմական հարձակումների օրինականության վերաբերյալ հարցն է: Քննության ընթացքում ԱՄՆ պնդում էին, որ ՄԱԿ Միջազգային դատարանը պետք է իրենց տրամադրի հայեցողության ազատություն այն հանգամանքը որոշելիս, թե արդյո՞ք պատասխան միջոցներին դիմելն անհրաժեշտ ու համամասնական է եղել: ՄԱԿ Միջազգային դատարանը մերժել է ԱՄՆ պահանջը հետևյալ հիմնավորմամբ.

«ԱՄՆ պնդում են, որ նավթային աշտարակների վրա հարձակումները բարեխղճորեն համարել են անհրաժեշտություն անվտանգության շահերը պաշտպանելու համար, ինչպես նաև «կողմին, որը բարեխղճորեն միջոցներ է ձեռնարկում անվտանգության հարցերին վերաբերող իր կարևորագույն շահերը պաշտպանելու համար, պետք է տրամադրվի հայեցողության ազատություն»... Սակայն դատարանի խնդիրը չէ պարզաբանել, թե արդյո՞ք սխալական չէ ԱՄՆ կողմից տվյալ դեպքում կիրառվող Բարեկամական նավիգացիայի և առևտրի մասին պայմանագրի [Friendship, Navigation and Commerce Treaty] XX հոդվածի կետ 1(d) մեկ-

նաբանումը, քանի որ ինքնապաշտպանության նպատակներով անհրաժեշտ միջոցներ կիրառելու միջազգային իրավունքի պահանջը խիստ ու օբյեկտիվ է և տարածություն չի թողնում որևէ հայեցողության ազատության համար»⁶:

Քննելով Նիկարագուայի և ԱՄՆ միջև բարեկամական նավիգացիայի և առևտրի մասին պայմանագրի XXI հոդվածի պահանջները՝ ՄԱԿ միջազգային դատարանը «Nicaragua» գործով վճռի մեջ սահմանեց, որ կողմերը տիրապետել են հայեցողության ոչ լրիվ ազատության անվտանգության շահերի պաշտպանությանը վերաբերող վերապահությունները կիրառելիս. «Անհրաժեշտ է արդյոք տվյալ միջոցը շահերը պաշտպանելու համար, ինչպես ընդգծել է դատարանը, այն հարցը չէ, որի լուծումը բացառապես կախված է պետության կամքից»⁷: Նման մոտեցումը ենթադրում է տվյալ պետության մեջ հայեցողության որոշակի ազատության առկայություն, ինչը վկայում է դատարանի կողմից սկզբունքի կիրառությունը:

Սկզբունքի օգտին առավել ակնհայտ կարծիք ՄԱԿ Միջազգային դատարանի դատական պրակտիկայի շրջանակներում առկա է հատկապես դատավոր Շահիարուդդենի՝ միջուկային զենքի օգտագործման օրինականության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության մեջ պարունակվող առանձին կարծիքում. «Անհրաժեշտ է պահպանել հավասարակշռություն առաջացող տառապանքների և ռազմական նպատակների միջև... Բնականաբար՝ դա պետությունների խնդիրն է: Դատարանը չի կարող ոտնձգություն կատարել նրանց իրավունքի նկատմամբ, սակայն այդ դեպքում դատարանը պարտավոր է պարզել, թե ինչպիսին է պետությունների որոշումը»⁸: Տվյալ դեպքում հաստատվում է սկզբունքի կիրառման կոնկրետ դեպք՝ գնահատման միջազգային նորմերի անորոշությունը, որը բացատրում է պետությունների կողմից դրանց ոչ միանշանակ կիրառելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով կոնկրետ հանգամանքները:

⁵ Տե՛ս ՄԱԿ Միջազգային դատարանի որոշումը «Oil Platforms (Iran v US)», 2003//ICJ Rep 90:

⁶ Տե՛ս նույն տեղը, կ. 73:

⁷ Տե՛ս ՄԱԿ Միջազգային դատարանի որոշումը «Military and Paramilitary Activities in and against Nicaragua (Nicaragua v USA)»// ICJ Rep 14,- 1986, էջ 282:

⁸ Տե՛ս ՄԱԿ Միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացություն «Legality of Nuclear Weapons»// ICJ Rep 226, 1996, Separate Opinion of Judge Shahabuddeen, մաս III, սեկցիա 2:

Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանն իր առաջին խորհրդատվական եզրակացություններից⁹ մեկի մեջ, որը վերաբերում է հպատակագրման սեփական ընթացակարգերը՝ որպես քաղաքացիության ձեռք բերման եղանակ, սահմանելու՝ պետությունների իրավունքի մասին նշում է. «Խոսքն այն արժեքների մասին է, որոնք ձեռք են բերում կոնկրետ ուրվագծեր դրանց կիրառման պահին ձևավորվող իրական իրավիճակների լույսի ներքո, և որոնք թույլ են տալիս հայեցողության որոշակի ազատություն դրանք իրացնելիս»¹⁰:

ՄԱԿ Մարդու իրավունքների հանձնաժողովը, որը 1979 թվականին զբաղված է եղել Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին պակտի ոչ պատշաճ կիրառման դեպքերի քննությամբ, «հայեցողության ազատություն» հարցով հետևյալ կերպ է արտահայտվել. «Յուրաքանչյուր հասարակությունում բարոյական արժեքները տարբեր են: Միասնական ունիվերսալ ստանդարտ գոյություն չունի: Հետևաբար՝ հայեցողության որոշակի ազատությունը պետք է տրամադրվի իրավասու պետական մարմինների»¹¹: Նույն հանձնաժողովը 1978 թվականին ուղղակիորեն խոսել է հայեցողության ազատության մասին՝ նշելով փաստացի անխուսափելի տարբերությունները վերը հիշատակված պակտի նորմերի կիրառման գործում. «Իրավական պաշտպանությունը և ծառայությունները, որոնք պետությունը կարող է տրամադրել առանձին ընտանիքի, նույնը չեն տարբեր երկրներում և կախված են տարբեր սոցիալական, տնտեսական, քաղա-

քական ու մշակութային պայմաններից և ավանդույթներից»¹²:

Նաև հայեցողության ազատության սկզբունքի մեթոդաբանական սահմանումների հետ, ըստ էության, համընկնող առանձին դրույթները հանդիպում են որոշ միջազգային հաստատությունների արբիտրաժային որոշումներում: Այսպես, օրինակ՝ Հիթրոու օդանավակայանի տուրքերի մասին ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի միջև վեճը քննած միջազգային արբիտրաժի կողմից կայացված որոշման մեջ սահմանվել է, որ Միացյալ Թագավորությունը տիրապետում էր «հայեցողության ազատությամբ» բոլոր ուղևորների համար համապատասխան պարտադիր վճարները սահմանելիս¹³:

Հայեցողության ազատության մասին հիշատակություն հանդիպում է նաև Ազատ առևտրի մասին հյուսիսատլանտյան համաձայնագրի տրիբունալի (NAFTA, գլուխ 11) արբիտրաժային պրակտիկայում. «1105 հոդվածի խախտումը տեղի է ունենում միայն այն դեպքում, երբ ապացուցվել է, որ ներդրողը ենթարկվել է այնքան անարդարացի և կամայական վերաբերմունքի, որն անընդունելի է միջազգային պրակտիկայի տեսանկյունից: Տվյալ եզրակացությունը կարող է կատարվել՝ հաշվի առնելով այն, որ միջազգային իրավունքը տրամադրում է իրավասու պետական մարմիններին հայեցողության մեծ ազատություն՝ իրենց ներքին գործերը կարգավորելիս»¹⁴:

Միանշանակ՝ վերը ներկայացված դեպքերում խոսքն սկզբունքի դրույթների լիարժեք կիրառման մասին չէ: Սակայն նշված օրինակ-

⁹ Տե՛ս Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանի խորհրդատվական եզրակացությունը «Proposed Amendments to the Naturalization Provision of the Constitution of Costa Rica», Inter-AmCtHR, Series A, N° 4 1984, կ. 58:

¹⁰ Տե՛ս Ն.Ս.Սիմոնովա, Միջազգային տարածաշրջանային դատական մարմինների խորհրդատվական իրավազորության ազդեցությունը միջազգային պայմանագրերով պարտավորությունների կատարման վրա// Միջազգային, հրապարակային և մասնավոր իրավունք.– 2015.– N° 2, էջ 9-12:

¹¹ Տե՛ս Comm. 61/1979, «Hertzberg v Finland», UN Doc. A/37/40 (1982), կ. 10.3// URL:http://www.iidh.ed.cr/comunidades/libertadexpresion/docs/le_comite/hertzberg%20and%20others%20v.%20finland.htm (դիմում 03.04.2007):

¹² Տե՛ս Comm. 35/1978, Aumeeruddy-Cziffra v Mauritius, UN Doc. A/36/40 (1981), կ. 9.2(b)(2)(ii)// UL:<http://www1.umn.edu/humanrts/cases/27%5E93can.pdf> (դիմում 03.04. 2007):

¹³ Տե՛ս «US/UK Arbitration concerning Heathrow Airport User Charges», 30 Nov. 1992, ch 5, at 84 (կ. 2.2.6)//Witten, ‘The US-UK Arbitration Award concerning Heathrow Airport User Charges’, 89 AJIL (Ամերիկյան հանդես Միջազգային իրավունք),– 1995.– N° 174, էջ 187:

¹⁴ Տե՛ս «D. Myers, Inc v Canada (Partial Award)», 40 ILM (2001), –է. 1408-1438. Տե՛ս նաև հայեցողության ազատության դոկտրինի տեղին լինելու հարցը Ազատ առևտրի հյուսիսատլանտյան համաձայնագրի արբիտրաժում. Freeman «Regulatory Expropriation Under NAFTA Chapter 11: Some Lessons From the European Court of Human Rights» («Բռնագանձում համաձայն 11 գլխի 11 NAFTA: ՄԻԵԴ դատեր – հեղինակի թարգմանություն), 42 Columbia J Transnat’l L 2003. 177, էջ 211–212:

ները թույլ են տալիս եզրակացնել պրակտիկա-յում բազմաթիվ միջազգային դատական և այլ ատյանների առկայության մասին, որոնք թույլ են տալիս որոշակի ճկունություն հաղորդել միջազգային իրավունքի համակարգին:

Արդարադատության եվրոպական դատարանը (ԱԵԴ) նույնպես իր որոշումներում կիրառում է հայեցողության սահմանների սկզբունքը մի շարք ոլորտներում: Ամենահաճախ հղումը խնդրո առարկա սկզբունքին կարելի է տեսնել հասարակական կարգի պաշտպանության կարգավորումները մեկնաբանելիս կամ դրանցից շեղվելու հիմնավորվածությունը քննարկելու ընթացքում, մասնավորապես՝ ԵՄ պայմանագրի հոդված 39 (3) (բաց. հոդված 48((3))), ինչպես նաև 64/221 Հրամանագրի դրույթները՝ աշխատողների ազատ տեղաշարժմանը վերաբերող: ԱԵԴ ճանաչել է, որ հասարակական կարգի հաստատման բացառությունները պետք է հիմնավորվեն՝ Կոնվենցիայի 8-11 հոդվածների կետերի սահմանափակումների համաձայն:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել. միջազգային իրավունքի նորմերի ոչ միանշանակ մեկնաբանությանը և կիրառությանը հավանություն տվող հայեցողության սահմանների սկզբունքի դրույթների օգտագործումը թույլ է տալիս միջազգային հարաբերությունների շրջանակներում որոշումների ընդունման ընթացակարգին տալ առավել ժողովրդավարական բնույթ և միաժամանակ մոտեցնել իրավունքի նորմն իրականությանը, քանի որ հենց իրավասու ներպետական մարմինները կարող են ճիշտ ու արդյունավետ կիրառել այս կամ այն նորմը կոնկրետ իրավահարաբերությունների նկատմամբ: Ընդ որում՝ սկզբունքը կիրառվում է միայն այն նորմերի նկատմամբ, որոնք ենթադրում են կամ ունակ են թույլատրել ոչ միանշանակ մեկնաբանություն, այն է՝ գնահատողական բնույթի նորմեր, լիազորություն տվող կամ հետևանքներ ենթադրող նորմեր: Երկրորդը՝ հայեցողության ազատության սահմանները փոփոխական են ժամանակի մեջ հասարակական և իրավական զարգացման

հետևանքով՝ հիմք ընդունելով նաև այն, որ սկզբունքի կիրառման հնարավորությունները տարբեր կլինեն՝ գործի և այս կամ այն նորմի կիրառման պահին ձևավորված իրավիճակի հանգամանքներից կախված:

Միջազգային տարբեր մարմինների կողմից սկզբունքի կիրառման պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ հայեցողության սահմանների սկզբունքը, ըստ էության, հիմնական կիրառություն և նշանակություն է ստացել հատկապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործունեության մեջ, որի նախադեպային իրավունքով և սահմանվել են այդ սկզբունքի կիրառման հիմնական եղանակներն ու հիմքերը:

Որպես արդյունք՝ Դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքը, ըստ էության, սահմանել է մի շարք սկզբունքներ, որոնց գործադրմամբ է Դատարանը որոշում յուրաքանչյուր պետության հայեցողության սահմանները, այսինքն՝ որոշակի հանգամանքներ, որոնք ազդեցություն ունեն Դատարանի կողմից հայեցողության սահմանները որոշելիս: Չնայած Դատարանի նախադեպերը, հայեցողության սահմանների որոշման հետ կապված, երբեմն կարելի է հակասական և ոչ ճշգրիտ համարել, սակայն կան մի շարք հանգամանքներ, որոնք, անկասկած, ազդեցություն են ունենում Դատարանի կողմից պետությանը լայն կամ նեղ սահմաններ տրամադրելու հարցում:¹⁵

Հայեցողության սահմանները կախված են նաև քննարկման դրված շահերի համադրությունից: Օրինակ՝ եթե անհատի շահը հակասում է որևէ կարևոր հասարակական շահին, ապա մեծ է հավանականությունը, որ Դատարանը տվյալ դեպքում պետությանը կտա հայեցողության լայն շրջանակ: Մյուս կողմից՝ եթե գործ ունենք անձի հիմնարար իրավունքի հետ, ապա այս դեպքում Դատարանը պետության հայեցողության սահմանը, անկասկած, համարելու է չափազանց նեղ:

Միջամտության նպատակը նույնպես կարևոր դեր է խաղում հայեցողության սահ-

¹⁵ St' u D. Spielmann, *Allowing the Right Margin the European Court of Human Rights and the National Margin of Appreciation Doctrine: Waiver or Subsidiarity of European Review?*, Center for European Legal Studies Working Paper Series, էջ 9-31:

մանները որոշելիս: Եթե միջամտությունը հետապնդում է այնպիսի նպատակ, որը հստակ սահմանված է Կոնվենցիայով կամ հաստատված է Դատարանի նախադեպային իրավունքով, ապա այս դեպքում Դատարանը պետությանը կտրամադրի հայեցողության լայն շրջանակ: Նման դեպքերը ներառում են, օրինակ, սոցիալական, տնտեսական նկատառումներ, ինչպես նաև ազգային անվտանգությանը վերաբերող դեպքեր:

Միջամտության համատեքստը նույնպես երբեմն ունենում է կարևոր նշանակություն հայեցողության սահմանները որոշելիս: Օրինակ՝ եթե միջամտությունը տեղի է ունեցել մի ժամանակաշրջանում, երբ հասարակության մեջ առկա են որոշ խնդիրներ և լարվածություն, դատարանն իշխանություններին երբեմն տրամադրում է հայեցողության ավելի լայն սահմաններ:

Որոշ հարցերի վերաբերյալ առկա այսպես կոչված Եվրոպական կոնսենսուսը կարող է մեծ ազդեցություն ունենալ հայեցողության սահմանների սահմանափակման վրա: Օրինակ՝ եթե առկա է որևէ հարցի վերաբերյալ կոնսենսուս Եվրոպական կոնվենցիայի անդամ պետությունների մեծամասնության մեջ, ապա որևէ պետության կողմից տվյալ հարցի վերաբերյալ կոնսենսուսից շեղման դեպքում Դատարանը պետությանը կտրամադրի հայեցողության սահմանափակ ազատություն: Եվ հակառակը՝ պետությունները, անկասկած, կունենան հայեցողության լայն սահմաններ, եթե տվյալ հարցով բացակայում է Եվրոպական կոնսենսուսը:

Միջամտության համաչափությունը հետապնդվող նպատակին նույնպես կարևոր է հայեցողության սահմանները որոշելիս: Ցանկացած միջամտություն, որը բացասաբար է ազդում անձի որևէ իրավունքի վրա, պետք է հստակ հիմնավորվի պատասխանող պետության կողմից և պետք է համաչափ լինի հետապնդվող նպատակին: Ինչքան համաչափ է կիրառված միջամտությունը, այնքան լայն են հայեցողության սահմանները:

Արդյո՞ք ներպետական աստիճանները համապարփակ քննության են ենթարկել. դիմումատուի գանգատը նույնպես ունի իր ազդեցությունը հայեցողության սահմանների որոշման

հարցում: Ինչքան խորն ուսումնասիրված և փաստարկված են ներպետական դատարանների վճիռներն ու դատավճիռները, այնքան լայն են Դատարանի կողմից պետությանը տրամադրվող հայեցողության սահմանները:

Սակայն վկայակոչված չափանիշները, ճիշտ է, ունեն համընդհանուր բնույթ, այնուամենայնիվ, Դատարանը որոշ դեպքերում այդ չափանիշներին տալիս է որոշակի ուղղվածություն՝ քննարկվող հարցի բնույթից կախված: Մասնավորապես՝ հատկապես կարևորություն ունեն խտրականության դրսևորման վերաբերյալ գործերը, որտեղ պետությանը տրամադրված հայեցողության սահմաններն առավելագույս նվազեցված են՝ այլ հարցերի վերաբերյալ դրանց հայեցողության համեմատությամբ:

Խտրականության արգելման կարևորությունը դժվար է գերազնահատել, ուստի այդ իրավունքների խախտման վերաբերյալ գործերը Դատարանի հատուկ ուշադրության և քննարկման առարկա են:

14-րդ հոդվածում թվարկված խտրականության համար հիմքերը սպառնիչ չեն: Սակայն 14-րդ հոդվածն արգելում է խտրականությունը նաև «ցանկացած այլ հատկանիշով»՝ բացի այն հատկանիշներից, որոնք ուղղակիորեն հոդվածում թվարկված են:

Դատարանի առանձնահատուկ վերաբերմունքը խտրականության դրսևորման վերաբերյալ գործերով պայմանավորված է այն կանխավարկածով, որ, երբ պետություններն օժտված են հայեցողության լայն ազատությամբ Կոնվենցիայով պաշտպանվող որոշակի իրավունքներ իրականացնելիս, նրանց մեջ առաջանում է պոտենցիալ հնարավորություն՝ այդ իրավունքներն իրացնելիս խտրական մոտեցում կիրառելու, ընդ որում՝ չխախտելով սեփական հայեցողության ազատությունը: Դրանով է պայմանավորված, որ Դատարանը կիրառում է առանձնահատուկ գործոններ այս հարցում պետության հայեցողության սահմանները որոշելու հարցում:

Դատարանը նշում է, որ Կոնվենցիայի 14-րդ հոդվածը չի արգելում պետություններին տարբեր կերպ լուծել մարդկանց տարբեր խմբերի միջև «փաստացի անհավասարությունը»՝ համանման հասարակական հարաբերությունների կարգավորման հետ կապված հարցերը

հարթելու համար¹⁶: Դատարանն իր մի շարք վճիռներում սահմանել է. «Ոչ միատեսակ մոտեցումը տվյալ դեպքում կարող էր համարվել 14-րդ հոդվածի խախտում միայն այն դեպքում, երբ չի հետապնդում իրավաչափ նպատակ և անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում, որը պայմանավորում է տվյալ միջոցների կիրառումը: Պետություններն օգտվում են հայեցողության ազատությունից՝ գնահատելիս, թե որքանով է տարբեր միջոցների կիրառումը համանման դեպքերում խտրական միջոց»¹⁷:

Ստորև ներկայացված գործերում Դատարանն ուղղակի արտահայտում է իր դիրքորոշումը, ըստ որի՝ պետությունների հայեցողության սահմանների ծավալը քննարկվող խնդրի լույսի ներքո կախված կլինի գործի հանգամանքից, ոտնձգության առարկայից և տվյալ գործի նախապատմությունից¹⁸:

Դատարանը մի քանի անգամ նշել է, որ 14-րդ հոդվածը պաշտպանում է խտրականությունից այն անձանց կամ անձանց խմբերին, «որոնք գտնվում են համեմատելի պայմաններում»¹⁹ կամ «համանման պայմաններում»²⁰: Դա նշանակում է, որ անձը կամ անձանց խումբը, ովքեր կարծնում են, թե իրենց նկատմամբ կիրառվել է խտրական վերաբերմունք, պետք է ապացուցեն, որ պայմանները, որոնցում իրենք գտնվել են, այնպիսին են, ում նկատմամբ թույլ են տրվում վերաբերմունքի տարբերություններ, որոնք համեմատելի են կամ համանման: Տվյալ պահանջն ամրապնդվել է Վան դեր Մյուսսել

գործում, որում ուսանող-իրավաբանը հարկադրված է եղել պաշտպանել մեղադրյալին՝ չստանալով ոչ վարձատրություն, ոչ էլ ծախսերի փոխհատուցում: Դիմումատուն բողոքում էր 14-րդ հոդվածի և 4-րդ հոդվածի հետ համատեղ խախտման վերաբերյալ՝ նշելով, որ միայն նրանք են ներգրավվել հարկադիր աշխատանքի մեջ, ովքեր սովորում են փաստաբան դառնալու համար՝ ի տարբերություն այլ մասնագիտությունների ուսանողների: Դատարանը չգտավ Կոնվենցիայի խախտում՝ նշելով փաստաբանական գործունեության և այլ մասնագիտությունների միջև «հիմնարար տարբերությունները»²¹: Դատարանը, այդպիսով, բավականին նեղ մեկնաբանեց «համանման պայմանների» հասկացությունը ոչ դիմումատուների օգտին²²: Քննարկման առարկա դարձնելով պետությունների խտրական միջոցների կիրառման հարցում հայեցողության սահմանների ծավալների հարցը՝ Դատարանը սահմանում է, որ հայեցողության լայն ազատությունը տրամադրվում է պետություններին, օրինակ՝ իրենց սոցիալական և տնտեսական քաղաքականությունն իրացնելիս²³. «Հասարակության և նրա պահանջունքների մասին ամենալավ իրազեկվածության պատճառով՝ ազգային իշխանություններն ի սկզբանե գտնվում են լավագույն դիրքում՝ սոցիալ-տնտեսական իրավիճակը գնահատելու համար, այդ պատճառով էլ Դատարանը մեծ մասամբ հարգում է պետության ընտրությունը, եթե միայն ձեռնարկված միջոցներն ակնհայտորեն հիմնավորված չեն»²⁴:

¹⁶ St' u Thlimmenos v. Greece.

¹⁷ St' u Giavi v. Greece.– 2013.– 3 հոկտեմբեր; Դատարանի որոշում Stec and Others v. The UK.– 2006.– 12 ապրիլ,– §50-51. URL:[http://hudoc.echr.coe.int/eng#{"documentcollectionid2":\["GRANDCHAMBER","CHAMBER"\]}](http://hudoc.echr.coe.int/eng#{) (դիմում՝ 30.04.2014):

¹⁸ St' u նույն տեղը, §52:

¹⁹ St' u National Union of Belgian Police.– 1975.– 27 հոկտեմբեր // Որոշումների պաշտոնական ժողովածու.– №A 19,– §44; Դատարանի որոշում Andriele v. The Czech Republic.– 2011.– 17 փետրվար URL:[http://hudoc.echr.coe.int/eng#{"documentcollectionid2":\["GRANDCHAMBER","CHAMBER"\]}](http://hudoc.echr.coe.int/eng#{)(դիմում՝ 12.05.2014):

²⁰ St' u Lithgow and Others v.UK.– 1986.– 8 հուլիս // Որոշումների պաշտոնական ժողովածու.– №A 102,– §177; Դատարանի որոշում Danis and The Association of Ethnic Turks v. Romania.– 2015.– 21 ապրիլ; URL:[http://hudoc.echr.coe.int/eng#{"documentcollectionid2":\["GRANDCHAMBER","CHAMBER"\]}](http://hudoc.echr.coe.int/eng#{)(դիմում՝ 12.09.2015)

²¹ St' u Van der Mussele v. Belgium.– 1983.– 23 նոյեմբեր // Որոշումների պաշտոնական ժողովածու.– №A 70,– §46:

²² St' u The National and Provincial Building Society, The Leeds Permanent Building Society and The Yorkshire Building Society v. UK.– 1997.– 23 հոկտեմբեր,– § 88-89; URL:[http://hudoc.echr.coe.int/eng#{"documentcollectionid2":\["GRANDCHAMBER","CHAMBER"\]}](http://hudoc.echr.coe.int/eng#{) (դիմում՝ 23.04.2014).

²³ St' u Stec and Others v. The UK.– 2006.

²⁴ St' u CHBIHI Loudoudi and others v. Belgium.– 2014.– 16 դեկտեմբեր. URL:[http://hudoc.echr.coe.int/eng#{"documentcollectionid2":\["GRANDCHAMBER","CHAMBER"\]}](http://hudoc.echr.coe.int/eng#{) (դիմում՝ 27.03.2015).; Դատարանի որոշում Willis v. The UK.– 2002.– 11 հունիս. §64-70. նույն տեղը:

Այսպես, օրինակ՝ Սթեքը և ուրիշները Միացյալ Թագավորության դեմ գործում²⁵, որը վերաբերում էր տղամարդկանց և կանանց համար սահմանված կենսաթոշակի անցնելու տարբեր տարիքին, Դատարանը չճանաչեց պետությանը որպես Կոնվենցիայի 14-րդ հոդվածի դրույթները խախտող:

Եթե Դատարանի կողմից քննվող գործը շոշափում է սեռական, ծննդյան, ազգության, ռասայի կամ սեռական կողմնորոշման հատկանիշով տարբերություն, ապա Դատարանը, ինչպես նշված է ստորև, ճանաչում է համաչափության առավել խիստ ստանդարտի կիրառման անհրաժեշտությունը:

Ըստ սեռական հատկանիշի խտրականությանը վերաբերող գործերում Դատարանը հետևողականորեն կիրառում է համաչափության բարձր ստանդարտ: Օրինակ՝ Շուլեր-Չգրագեն գործն առնչվել է Շվեյցարիայի բնակչին երեխայի ծնվելուց հետո հաշմանդամության թոշակից զրկելուն միայն այն հիմքով, որ, դառնալով մայր, նա, միևնույն է՝ կազատվեր աշխատանքից: Այդ գործում Դատարանը նորից պահանջեց «օբյեկտիվ և ողջամիտ հիմքեր», որոնց առկայությունն ազգային իշխանությունները պետք է ապացուցեին՝ ներկայացնելով առավել ծանրակշիռ պատճառներ, որոնք արդարացնում են ըստ սեռի հատկանիշի տարբերությունները²⁶: Նկատի ունենալով, որ նման պատճառներ չներկայացվեցին, Դատարանն արձանագրեց Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտումը՝ 6-րդ հոդվածի հետ համատեղ:

Խիստ վերահսկողություն իրականացվում է նաև ըստ սեռական հատկանիշի խտրականության վերաբերյալ գործերով: Այսպես՝ Դատարանն ընդունեց, որ ազգային իշխանությունները դուրս են եկել հայեցողության ազատու-

թյան սահմաններից՝ ազատելով կանանց հակահրդեհային բրիգադի աշխատանքներում մասնակցության պարտականությունից²⁷:

Արտասանական երեխաների վերաբերյալ գործերով²⁸ Դատարանը նույնպես, սկսելով Մարքսը ընդդեմ Բելգիայի դեմ²⁹ գործից, հետևողականորեն հանգում է հայեցողության ազատության բացակայության վրա³⁰: Դատարանը, հաստատելով ընտանիքի կողմից աջակցության անհրաժեշտությունը և օրինականությունը, անթույլատրելի ճանաչեց այն իրավիճակը, որում «անօրինական» մայրերը հայտնվում են օրինականների հետ համեմատությամբ երեխայի հետ ազգակցական կապերի հաստատման առումով անբարենպաստ իրավիճակում³¹: Պատասխանող պետությունը ոչ մի ապացույց չի ներկայացրել այն մասին, որ «անօրինական» մայրերը հաճախ են թողնում իրենց երեխաներին³²:

Գործերի ևս մեկ կատեգորիա, որն առաջացնում է Դատարանի զգուշությունը, անկասկած, ռասայական խտրականությամբ պայմանավորված գործերն են: Իսթ Էֆրիքեն Էյժիէսս գործն առնչվում էր միգրացիոն օրենսդրության հետ, որը բովանդակում էր, այսպես կոչված, «ծննդյան վայրի» կանոնը: Տվյալ օրենսդրության համապատասխան՝ անձն իրավունք ունեւր մուտք գործելու Միացյալ Թագավորության տարածք միայն այն դեպքում, երբ նրա ծնողներից մեկը կամ տատը կամ պապը ծնվել են Միացյալ Թագավորությունում: Դիմումատուները բողոքում էին տվյալ կանոնի խտրական բնույթից, քանի որ ամենից հաճախ այդ կանոնը շոշափում էր սպիտակ ռասային չպատկանող անձանց: Դատարանը հրաժարվեց քննել Միացյալ Թագավորության քաղաքացիների նկատմամբ խտրականության մասին հարցը՝ այն հիմքով, որ տվյալ պետությունը չի ստորագրել

²⁵ Տե՛ս Stec and Others v. The UK.– 2006, § 66, 67.

²⁶ Տե՛ս Schuler-Zraggen v. Switzerland.– 1993.– 24 հունիս // Որոշումների պաշտոնական ժողովածու.– № A263.– §67:

²⁷ Տե՛ս Karlheinz Schmidt v. Germany.– 1994.– 18 հուլիս // Որոշումների պաշտոնական ժողովածու.– № A 291-B; Դատարանի որոշում Shindler v. The United Kingdom.– 2013.– 7 մայիս. URL:[http://hudoc.echr.coe.int/eng#{"documentcollectionid2":\["GRANDCHAMBER","CHAMBER"\]}](http://hudoc.echr.coe.int/eng#{) (դիմում՝ 17.06.2014):

²⁸ Տե՛ս Դատարանի որոշում Brauer v. Germany.– 2009.– 28 մայիս. §45: Դատարանի որոշում Merger and Cros v. France.– 2004.– 22 դեկտեմբեր.– §42-50:

²⁹ Տե՛ս Marckx v. Belgium.– 1979.– 13 հունիս // Որոշումների պաշտոնական ժողովածու.– №A 31:

³⁰ Տե՛ս Vermeire v. Belgium.– 1991.– 29 նոյեմբեր // Որոշումների պաշտոնական ժողովածու.– №A 214-C: Դատարանի որոշում Paulik v. Slovakia.– 2006.– 10 հոկտեմբեր. §50-59, §53:

³¹ Տե՛ս Weller v. Hungary.– 2009.– 21 մարտ. §40:

³² Տե՛ս նույն տեղը, §38-39:

Կոնվենցիային կից Արձանագրություն թիվ 4, որը երաշխավորում է իր երկիր վերադառնալու իրավունքը:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովն ընդունեց բողոքը՝ նշելով, որ. «Ի տարբերություն 14-րդ հոդվածով նախատեսված այլ հիմքերի՝ ըստ ռասայական հատկանիշի խտրականությունը կարող է որոշակի հանգամանքներում հանդիսանալ, Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով, որպես արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք»³³:

Ազգային հատկանիշով տարբերությունները նույնպես կարող են հանդիսանալ խիստ վերահսկողության առարկա³⁴: Դատարանը պետություններից պահանջում է ներկայացնել իրավական կարգավիճակում տարբերությունների «առավել ծանրակշիռ պատճառներ»: Տվյալ տարբերությունները հաճախ ճանաչվում են կամայական, ոչ մի «օբյեկտիվ և ողջամիտ» հիմք չունեցող: Գեյգյուզյու գործում և Հանձնաժողովը, և Դատարանը հանգեցին այն եզրակացության, որ խախտվել են 14-րդ հոդվածը և թիվ 1 Արձանագրություն 1-ին հոդվածը համատեղ՝ թուրք քաղաքացուն սոցիալական ապահովության վճարի վճարումը մերժելու կապակցությամբ, ով օրինական հիմունքներով աշխատում էր Ավստրիայում և ավստրիացի քաղաքացիների հետ հավասար վճարում էր ապահովագրական վճարները³⁵:

Դատարանի պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ սեռական կողմնորոշման հորի վրա խտրականությունը նույնպես ենթակա է Դատարանի կողմից առավել խիստ վերահսկողության, ինչը վկայում է տվյալ հարցում պետությունների հայեցողության ազատության նե-

ղացման մասին: Այսպես, օրինակ՝ Ե.Բ.-ն Ֆրանսիայի դեմ գործում Դատարանը ճանաչեց Ֆրանսիայի լիազորված մարմինների՝ իգական սեռի զույգին երեխայի որդեգրման մերժում տրամադրելը որպես Կոնվենցիայի հոդված 14, հոդված 8 հետ խախտում³⁶:

Այսպիսով՝ Կոնվենցիայի համակարգում Դատարանի համար հատկապես կարևոր է ըստ սեռական, ծննդյան, ազգային, ռասայական հատկանիշի կամ սեռական կողմնորոշման ցանկացած դասակարգում: Կրոնական հատկանիշով տարբերությունները, չնայած համապատասխան գործերի ոչ մեծ թվաքանակի, նույնպես պետք է դասել «հատուկ կատեգորիաների» թվին³⁷:

Խտրականության կանխարգելման հարցերով Դատարանը պետություններին վերապահում է հայեցողության ազատություն՝ «գնահատելիս, արդյոք կարող են, և եթե՝ այո, ապա դր չափով, մնացածի մեջ իրար նման իրավիճակների միջև տարբերություններն արդարացնել իրավական կարգավիճակի տարբերություններով: Պետության հայեցողության սահմանները կարող են տարբերել իրավական կարգավիճակի տարբերությունները՝ գործի հանգամանքներից, էությունից և նախորդ իրավիճակից կախված»³⁸:

Չնայած դատարանի համապատասխան պրակտիկայում հայեցողության ազատության ուղղակի հղումների՝ իրավական կարգավիճակում տարբերություններն արդարացնող «շատ ծանրակշիռ» կամ «առաջնահերթ» պատճառների բացակայությունը ճանաչվում է Դատարանի կողմից որպես հայեցողության սահմանների խախտում:

³³ Տե՛ս East African Asians v.UK.– (1970) 13 Ybk 928Ե կ. 994; Հանձնաժողովի հաշվետվություն East African Asians v. UK.– 1973.– 14 դեկտեմբեր.– 78-A DR 5, § 188-95; Դատարանի որոշում Valkov and others v. Bulgaria.– 2011.– 25 հոկտեմբեր; URL:[http://hudoc.echr.coe.int/eng#{"documentcollectionid2":\["GRANDCHAMBER","CHAMBER"\]}](http://hudoc.echr.coe.int/eng#{) (դիմում՝ 24.11.2014):

³⁴ Տե՛ս Zeibek v. Greece.– 2009.– 9 հուլիս. §42-52:

³⁵ Տե՛ս Gaygusuz v. Austria.– 1996.– 16 սեպտեմբեր. §42:

³⁶ Տե՛ս E.B. v. France.– 2008.– 22 հունվար. - §90-98:

³⁷ Տե՛ս Junta Rectora Del Ertzainen Nazional Elkartasuna (ER.N.E.) v. Spain.– 2015.– 21 ապրիլ; Դատարանի որոշում Kautzor v. Germany.– 2012, 22 մարտ; Դատարանի որոշում Rasmussen v. Denmark.– 1984.– 28 նոյեմբեր // Որոշումների պաշտոնական ժողովածու.– №A87, §40; Դատարանի որոշում Abdulaziz, Cabales and Balkandali v.UK.– 1985.– 28 մայիս // Որոշումների պաշտոնական ժողովածու.– №A94,– §72, 78; Դատարանի որոշում Lithgow and Others vs. UK.– 1986.– 8 հուլիս // Որոշումների պաշտոնական ժողովածու.– №A 102,– §177; Դատարանի որոշում Inze v. Austria.– 1987.– 28 հոկտեմբեր օ // Որոշումների պաշտոնական ժողովածու.– №A 126, §41; Հանձնաժողովի հաշվետվություն Karlheinz Schmidt vs. Germany.– 1993.– 14 հունվար // Որոշումների պաշտոնական ժողովածու.– №A 291-B, §43:

³⁸ Տե՛ս նույն տեղը:

ԱՆՁԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության արժեհամակարգի հիմնախնդիրը դեռևս մինչև այժմ բավարար չափով ուսումնասիրված չէ իրավագիտության կողմից: Կան աշխատություններ, որոնք վերաբերում են անձի անվտանգության այս կամ այն կողմերին¹, սակայն համակարգված հետազոտություններ, նվիրված անձի անվտանգության արժեհամակարգի բովանդակությանը և դրա առանձին բաղադրիչներին, ընդհանուր առմամբ, բացակայում են:

Վերլուծելով գործող օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկայի նյութերը՝ կարելի է ենթադրել, որ անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության արժեհամակարգի բովանդակությունը կազմող արժեքային բաղադրիչները պայմանականորեն կարելի է ստորաբաժանել երկու խմբի. նյութական (առարկայական) արժեքներ՝ կյանքը (կյանքի իրավունքը), առողջությունը (խոշտանգումների արգելքը), և բարոյահոգեբանական (հոգևոր) արժեքներ՝ անձի պատիվն ու արժանապատվությունը, հոգեկան աշխարհը:

Փորձենք հանգամանորեն վերլուծել անձի անվտանգության նյութական (առարկայական) և բարոյահոգեբանական (հոգևոր) արժեքների առանձնահատկությունները՝ առաջնահերթության կարգով:

Կյանքի իրավունքը՝ որպես անձի անվտանգության պաշտպանության առաջնային արժեք (օբյեկտ), երաշխավորված է միջազգային իրավական և ներպետական իրավական ակտերով:

Թերևս՝ քննարկվող իրավունքի նման բնույթով են պայմանավորված ինչպես միջազգա-

յին-իրավական մի շարք փաստաթղթերում դրա ամրագրումը (1948 թվականի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդված, 1950 թվականի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդված, 1966 թվականի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 6-րդ հոդված), այնպես էլ վերպետական և ներպետական դատարանների նախադեպային իրավունքում կատարված բազմաթիվ անդրադարձները, որոնք ուղղված են անձի կյանքի իրավունքի արդյունավետ երաշխավորմանը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) անձի նյութական իրավունքների շարքում առաջին հերթին հռչակում է կյանքի իրավունքը: Եվ դա պատահական չէ. եթե անձը կամայականորեն զրկվի կյանքի իրավունքից, ապա նրա մնացած իրավունքները կդառնան պատրանքային: Կյանքի իրավունքի հիմնարար բնույթը պարզ է նաև այն հանգամանքից, որ պետությունն իրավասու չէ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի կարգով շեղվելու 2-րդ հոդվածից՝ բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի դեպքերի²:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր նախադեպային իրավունքում շուրջ 900 որոշումներում անդրադարձ է կատարել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի մեկնաբանությանը: Այսպես՝ Եվրոպական դատարանն ընդգծել է,

¹ Տե՛ս, օրինակ՝ Проблемы уголовно-правовой охраны личности, общества и государства. Избранные труды. Ереван, 2016. էջ 239-243: Телятников А.А. Безопасность личности в уголовном праве: дис.... канд. юрид. наук. Ставрополь, 2009 և այլք:

² Տե՛ս Douwe Korff The right to life. A guide to the implementation of Article 2 of the European Convention on Human Rights. Human rights handbooks, No 8, 2006, էջ 6:

որ, Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ, Կոնվենցիայի 2-րդ հոդվածն ամրագրում է Եվրոպայի խորհրդի անդամ ժողովրդավարական հասարակությունների ամենահիմնական արժեքներից մեկը³: Հետևաբար՝ կյանքից զրկելու դեպքերը Եվրոպական դատարանը դարձնում է խիստ մանրամասն քննության առարկա⁴:

Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 2-րդ հոդվածը մեկնաբանել է որպես այդ դրույթի նյութաիրավական կողմերի ենթադրյալ խախտման կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու դատավարական պարտականություն սահմանող նորմ՝ հաշվի առնելով այդ իրավունքի հիմնարար բնույթը:

Այսպես՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետը պետություններին պարտավորեցնում է ոչ միայն ձեռնպահ մնալ անձանց կյանքի նկատմամբ դիտավորյալ, անօրինական ոտնձգություններից, այլ նաև սահմանում է, որ պետությունները պետք է իրենց իրավագործության ներքո գտնվող անձանց կյանքի պաշտպանության համար համապատասխան քայլեր ձեռնարկեն⁵: Կյանքի իրավունքի պաշտպանությունն անուղղակիորեն պետությունից պահանջում է անձանց մահվան կապակցությամբ **պաշտոնապես օբյեկտիվ քննություն իրականացնել**: Նման քննություն իրականացնելու պարտականությունը ծագում է սպանության կամ կասկած հարուցող մահվան բոլոր դեպքերում՝ անկախ այն հանգամանքից, թե հանցանք կատարած անձինք անհատներ են, թե՛ պետական մարմիններ կամ անհայտ անձինք⁶:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի պահանջն է ապահովել անկախ և անաչառ պաշտոնական քննություն, որը բավարարում է **արդյունավետության** որոշակի նվազագույն **չափանիշները**: Իրավասու մարմինները պետք է գործեն *պարզաճ ջանասիրությամբ* և *արագությամբ* և

պարտավոր են նախաձեռնել քննություն, որն ի վիճակի է նախ որոշակիացնելու այն հանգամանքները, որոնցում դեպքը տեղի է ունեցել, և կարգավորող համակարգի գործունեության ցանկացած թերություն, երկրորդ՝ բացահայտել դրանում ներգրավված պետական պաշտոնյաներին և մարմիններին: Հասարակական հսկողության պահանջն այս համատեքստում նույնպես կարևոր է⁷:

Քննությունն **արդյունավետ** կարող է համարվել այն դեպքում, երբ հնարավոր կլինի քննությամբ ձեռք բերված փաստերը համադրել և հանցանք կատարած անձանց պատասխանատվության ենթարկել: Իշխանությունները տեղի ունեցած իրադարձությունը բացահայտելու համար պետք է ձեռնարկեն **հասանելի, խելամիտ** քայլեր՝ վկաների հարցաքննություն, դատաբժշկական փորձաքննության նշանակում, ինչպես նաև դիախերձում, ինչը թույլ կտա բացահայտել առկա վնասվածքների ամբողջական և իրական պատկերը, ինչպես նաև մահվան պատճառը⁸: Քննության եզրակացությունը պետք է **հիմնված լինի գործով առկա փաստերի ամբողջական, օբյեկտիվ և անկողմնակալ վերլուծության վրա**:

Այլ կերպ ասած՝ քննությունը պետք է լինի մանրամասն: Դա նշանակում է, որ մարմինները միշտ պետք է կատարեն լուրջ քայլեր, որպեսզի պարզեն՝ ինչ է տեղի ունեցել, և չպետք է հիմնվեն **շտապողական կամ թույլ պարճառաբանված հետևությունների վրա**, որպեսզի փակեն իրենց քննությունը կամ որպես իրենց որոշումների հիմք ընդունեն: Նրանք պետք է կատարեն իրենց համար հասու բոլոր ողջամիտ քայլերը, որպեսզի ապահովեն դեպքի հետ կապված ապացույցները՝ ներառյալ, ի թիվս այլոց, ականատեսների հարցաքննությունը և բժշկական ապացույցները: *Քննության ցանկա-*

³ St'u McCann and Others v. The United Kingdom գործով 1995 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 18984/91, կետ 147:

⁴ St'u Gul v. Turkey գործով 2000 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 22676/93, կետ 78:

⁵ St'u, ի թիվս այլոց, Osman v. the United Kingdom գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 87/1997/871/1083 կետ 115:

⁶ St'u Nachova and Others v. Bulgaria գործով 2005 թվականի հուլիսի 6-ի վճիռը, գանգատներ թիվ 43577/98, 43579/98, կետ 110:

⁷ St'u mutatis mutandis, Kats and Others v. Ukraine, 2008 թվականի, դեկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 29971/04, կետ 116:

⁸ St'u Tanrikulu v. Turkey գործով 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 23763/94, կետ 109 և Gul v. Turkey գործով 2000 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 22676/93, կետ 89:

ցած թերություն, որը հարցականի տակ է դնում պարծառված վնասվածքների պարծառները կամ պարասխանատու անձանց պարզելու կարողությունը, վրանգում է այս չափանիշի իրագործումը⁹:

Եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս ընդգծել է նաև, որ քննության արդյունավետությունը գնահատելիս կարևոր է հատկապես այն հանգամանքը, թե որքան *արագ են իշխանություններն արձագանքում* Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման վերաբերյալ բողոքներին, ինչը նպաստում է հանրության վստահության պահպանմանն օրինականության ամրապնդման և անօրինական գործողությունների նկատմամբ հանդուրժողականության բացառման հարցում¹⁰:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման կապակցությամբ իրականացվող քննության արդյունավետության մյուս չափանիշը քննությունն իրականացնող պատասխանատու մարմինների՝ օրենքով և գործնականում *անկողմնակալ և անկախ լինելն է*: Սա նշանակում է, որ ոչ միայն ենթակարգային կապի, այլև պրակտիկ գործունեության մեջ այս մարմինները պետք է անկախ լինեն¹¹: Անհրաժեշտ է նաև հասարակության անդամներին ինչպես քննության, այնպես էլ դրա արդյունքների վերաբերյալ համապատասխան տեղեկություններով ապահովել, հասարակության անդամների մեջ վստահություն առաջացնել օրենքի գերակայության նկատմամբ. ինչպես նաև *բացառել հանցավոր համագործակցությունը կամ հանցավոր արարքների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերելը*: Բոլոր դեպքերում *տուժող-*

*ները պետք է ներառվեն քննության մեջ՝ վերջիններիս օրինական շահերն ապահովելու նպատակով*¹²:

Կյանքի իրավունքն ամրագրված է ՀՀ փոփոխված Սահմանադրության 24-րդ հոդվածում, որում, մասնավորապես, նշված է. «1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: 2. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից: 3. Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի»: Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը ծառայում է մարդու ֆիզիկական, հոգեկան, նյութական, էկոլոգիական և այլ անվտանգությունն ապահովելուն»:

ՀՀ վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) իր հերթին, 2008 թվականից սկսած, անձի կյանքի իրավունքի երաշխավորմանն ուղղված մի շարք նախադեպային որոշումներ է կայացրել, որոնցում իմպլեմենտացրել է կյանքի իրավունքի պաշտպանության պոզիտիվ պարտականության վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված վերոնշյալ չափանիշները¹³:

Մասնավորապես՝ Սուսաննա Անտոնյանի գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԿԴ/0077/11/12 որոշման (այսուհետ՝ Ս. Անտոնյանի գործով) որոշում) մեջ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է կասկած հարուցող մահվան հանգամանքների վերաբերյալ պաշտոնապես արդյունավետ քննություն իրականացնելու՝ պետության պարտականությունների առումով օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդրին:

Վճռաբեկ դատարանի կողմից **Ս.Անտոնյանի** գործով որոշման փաստական վերլուծու-

⁹ St' u Mikheyev v. Russia, 2006 թվականի հունվարի 26-ի վճիռը, գանգատ թիվ 77617/01, կետ 107, Ramsahai and Others v. the Netherlands գործով 2007 թվականի մայիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 52391/99, կետ 321, Esat Bayram v. Turkey գործով 2009 թվականի մայիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 75535/01, կետ 47:

¹⁰ St' u Hugh Jordan v. United Kingdom գործով 2001 թվականի մայիսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 24746/94, կետ 108, Yasa v. Turkey գործով 1998 թվականի սեպտեմբերի 2-ի վճիռը, գեկույցներ 1998-IV, էջ 2439-2440, կետեր 102-104:

¹¹ St' u Scavuzzo-Hager and Others v. Switzerland գործով 2006 թվականի փետրվարի 7-ի վճիռը, գանգատ թիվ 41773/98, կետեր 78, 80-86, Ramsahai and Others գործով 2007 թվականի մայիսի 15-ի վճիռը, կետեր 325, 333-346:

¹² St' u Gulec v. Turkey գործով 1998 թվականի հուլիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 54/1997/838/1044, կետ 82:

¹³ Կյանքի իրավունքի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2007-2012 թվականների նախադեպային որոշումների մեկնաբանությունները տե՛ս Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ /ընդհանուր գիտական խմբագրությամբ Ա. Մկրտումյանի, Դ. Ավետիսյանի, Վ. Եսգիբարյանի, Ռ. Մելիքյանի.- Եր.: «Աստղիկ» 2011, էջ 70-78, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ,- հ.2: Եր.: 2013, էջ 394-405:

թյունից և եզրահանգումներից հետևում է, որ Վճռաբեկ դատարանը Կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված, արդյունավետ քննություն իրականացնելու՝ պետության պոզիտիվ պարտականության խախտում է արձանագրել, քանի որ Ա.Անտոնյանի մահվան կապակցությամբ իրականացված քննությունը մանրամասն չէր, վարույթն իրականացնող մարմինների կողմից չէր դրսևորվել **պատշաճ ջանասիրություն**, չէր ապահովվել նաև **տուժողի պատշաճ մասնակցությունը**, որպիսի թերությունները կասկածի տակ էին դնում վարույթն իրականացնող մարմինների եզրահանգումները:

Ինչպես երևում է Ս.Անտոնյանի գործի փաստերից՝ Վճռաբեկ դատարանը Կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված՝ պետության պոզիտիվ պարտականություն ունենալու պահանջը կիրառելի է գնահատել նաև **բժշկական հսկողության ներքո գտնվող անձի մահվան դեպքում**: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Եվրոպական դատարանը նման դեպքերում պետության պոզիտիվ պարտականությունների հետ կապված հարաբերականորեն ցածր չափանիշներ է նախատեսում¹⁴, սակայն, այնուամենայնիվ, համարում է, որ դա ենթադրում է անկախ և արդյունավետ դատական համակարգի ստեղծում, որն ի վիճակի է պետական կամ *մասնավոր բժշկական* հսկողության ներքո գտնվող անձանց մահվան պատճառները վեր հանելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու¹⁵:

Կյանքի իրավունքի ապահովման կապակցությամբ քննություն իրականացնելու չափանիշների իմպլեմենտացման տեսանկյունից հատկապես կարևորվում է *Ռուզաննա Նիազյանի* գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԿԴ/0118/11/13 որոշումը (այսուհետ՝ *Ռ. Նիազյանի* գործով որոշում): Մասնավորապես՝ հիշյալ որոշմամբ կասկածելի մահվան առթիվ արդյունավետ քննություն իրականացնելու՝ պետության պարտականության համատեքստում Վճռաբեկ դատարանը քննարկման առարկա է դարձրել

կյանքի իրավունքի ենթադրյալ խախտման կապակցությամբ քրեական գործ հարուցելու փուլով եզրափակվող քննության արդյունավետության խնդիրը:

Այսպես՝ կյանքի իրավունքի պաշտպանությանն ուղղված Եվրոպական դատարանի հարուստ նախադեպային իրավունքի վերլուծության հիման վրա *Ռ Նիազյանի* գործով որոշման 25-րդ կետում **Վճռաբեկ** դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված «(...) կյանքի իրավունքի խախտման կապակցությամբ իրականացվող քննության արդյունավետության գնահատման հիմնական չափանիշների համաձայն՝

ա) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման վերաբերյալ բողոքներն իրավասու մարմինների կողմից պետք է արժանանան արագ արձագանքի,

բ) իրավասու մարմինները պետք է գործեն պատշաճ ջանասիրությամբ և արագությամբ,

գ) քննության արդյունքով պետք է հստակեցվեն դեպքի հանգամանքները,

դ) պետք է ապահովվի քննության նկատմամբ հասարակական հսկողությունը,

ե) այդ հսկողությունն իրականացնող պատասխանատու անձինք պետք է անկախ լինեն տվյալ գործում ներգրավված անձանցից,

զ) պետք է կատարվի մանրամասն քննություն, որն անհրաժեշտ է *գործով* ապացույցներ ձեռք բերելու համար: Վարույթն իրականացնող մարմինները *պետք է ձեռնպահ մնան* շտապողական կամ թույլ պատճառաբանված *հետևություններից, քանի որ* քննության *ցանկացած* թերություն, *որը* հարցականի տակ է դնում մահվան պատճառները պատասխանատու անձանց կողմից պարզելու կարողությունը, վտանգում է քննության արդյունավետությունը, հետևաբար և՛ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 2-րդ

¹⁴ Տե՛ս, ի թիվս այլոց՝ Calvelli and Ciglio v. Italy գործով Եվրոպական դատարանի 2002 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32967/96, կետեր 49-րդ և 51-րդ:

¹⁵ Տե՛ս, ի թիվս այլոց՝ Erikson v. Italy գործով 1999 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը, գանգատ թիվ 37900/97, Powell v. The United Kingdom գործով 2000 թվականի, մայիսի 4-ի որոշումը, գանգատ թիվ 45305/99, Isitan v. Turkey գործով 1995 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 20948/92, կետ 35:

հողվածով պետության ստանձնած պարտավորությունների իրագործումը»¹⁶:

*Անձի անվտանգության պաշտպանության նյութական արժեքներից (բարիքներից) է նրա առողջությունը*¹⁷:

Առողջությունը մարդու օրգանիզմի այնպիսի ֆիզիոլոգիական վիճակն է, երբ դրա բոլոր համակարգերը, մասերը և օրգանները բնականոն գործում են: Առողջապահության համաշխարհային կազմակերպության կանոնադրության պրեամբուլայում առողջությունը բնորոշվում է որպես «ֆիզիկական, հոգևոր և սոցիալական լրիվ բարօրության վիճակ և ոչ թե միայն հիվանդությունների կամ ֆիզիկական արատների բացակայություն»: Հարկ է նշել, սակայն,

որ իրավաբանական գրականության մեջ այս բնորոշումը միանշանակ չի ընդունվում և անգամ քննադատության է ենթարկվում: Այսպես՝ Ս. Ս. Շևչուկի կարծիքով՝ իրավունքի ոլորտում առողջության նման բնորոշում օգտագործելու հնարավորությունը կասկած է առաջացնում՝ հաշվի առնելով այն չափազանց լայն բովանդակությունը, որը դրված է այդ բնորոշման մեջ: Նախ՝ «լրիվ սոցիալական բարօրությունը» չի կարող մարդու առողջության չափանիշ հանդիսանալ, քանի որ առաջին հերթին արտահայտում է սուբյեկտի սոցիալական կարգավիճակը: Այսինքն՝ անհատի սոցիալական լիարժեքությունը միշտ չէ, որ որոշվում է նրա ֆիզիոլոգիական վիճակով, և հակառակը¹⁸:



¹⁶ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2014թ. մայիսի 31-ի թիվ ԵԿԴ /0118/11/13 որոշումը Ռուզաննա Նիսաջյանի գործով:
¹⁷ Գրականության մեջ և իրավակիրառ պրակտիկայում առողջությունը բնորոշվում է նաև «ֆիզիկական և հոգեկան բարօրության վիճակ»:
¹⁸ Տե՛ս Шевчук С., Правовой механизм ограничения личных неимущественных прав граждан в сфере здравоохранения. Ставрополь, 2004, էջ 24:

ԳՈՐԾՈՒՆ ՉԴՉԱԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գործնական մակարդակում անվիճելի է օրենքի առջև բոլորի հավասարության և պատասխանատվության ու պատժի անխուսափելիության կարևորության հանգամանքը: Թեև պատասխանատվության ու պատժի անխուսափելիությունը մեծ նշանակություն ունի հանցավորության դեմ պայքարում, քանզի պատժի անխուսափելիությունն ավելի մեծ կանխարգելիչ գործառույթ է իրականացնում, քան պատժի խստությունը, բայց և այնպես՝ պետք է նկատի ունենալ, որ միշտ չէ, որ պատասխանատվությունն ու պատիժն առաջացնում են այն ցանկալի հետևանքները, որոնք ակնկալվում են հասարակության և իրավապահ համակարգի կողմից: Թե՛ հայրենական և արտասահմանյան իրավական մտքի, թե՛ պրակտիկայի զարգացումը ցույց է տալիս, որ միայն քրեական պատասխանատվության միջոցներ սահմանելով, դրանք խստացնելով և քրեական պատժի իրացմամբ հնարավոր չէ հասնել ոլորտում առկա խնդիրների ամբողջական լուծմանը: Այդ պատճառով գրեթե բոլոր երկրների օրենքներով սահմանվել են խրախուսական բնույթի նորմեր, որոնց էությունն այն է, որ հանրորեն վտանգավոր վարքագիծ դրսևորած անձինք, իրենց հանցավոր գործունեությունը կամովին դադարեցնելու կամ հանցավոր արարքը կատարելուց հետո օրենքով սահմանված որոշակի դրական վարքագիծ դրսևորելու դեպքում, հնարավորություն են ստանում ազատվելու քրեական պատասխանատվությունից կամ ենթարկվելու ավելի մեղմ պատժի:

ՀՀ քրեական օրենսգրքը ևս նախատեսում է նմանատիպ ինստիտուտ, մասնավորապես՝ հիշյալ օրենսգրքի 72-րդ հոդվածը սահմանում է. «Առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հանցանքը կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղայա-

կանով, աջակցել է հանցագործությունը բացահայտելուն, հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը:

Այլ տեսակի հանցանք կատարած անձը քրեական պատասխանատվությունից ազատվում է միայն սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով հատկապես նախատեսված դեպքերում»:

Սույն իրավական նորմը նախատեսում է հանցանք կատարած անձի կողմից օրենքով սահմանված պայմանների կատարման դեպքում վերջինիս համար որոշակի դրական հետևանքների առաջ գալու հնարավորություն: Քննարկվող հոդվածի շարադրանքից տեսանելի է, որ դրա դիսպոզիցիան պարունակում է քրեական պատասխանատվությունից ազատելու օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմաններ: Օբյեկտիվ պայմաններից մեկն առաջին անգամ հանցագործություն կատարելու հանգամանքն է, մյուսը՝ հանցագործության ծանրության աստիճանը: Սուբյեկտիվ պայմանները կապված են հանցավորի դրսևորած վարքագծի հետ, և դրանց առաջացումը հնարավոր է միայն հանցագործության ավարտից հետո: Դրանք են՝ մեղայականով կամովին ներկայանալը, հանցագործության բացահայտմանն աջակցելը, պատճառված վնասի հատուցումը կամ հարթումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից ոչ թե ցանկացած զղջման, այլ՝ օրենքով սահմանված դրական գործողությունների առկայությամբ զղջալու պայմաններում: Վերը նշված օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանների ամբողջությունը կազմում է նորմատիվ հիմք՝ թույլատրելի, բավարար պայմանների ամբողջություն՝ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար: Նշվածից հետևում է, որ հիշատակված պայմաններից միայն մեկի կամ մի մասի կատարումը չի կարող հիմք հանդիսանալ

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 101 2017

անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար, եթե նա օբյեկտիվորեն հնարավորություն է ունեցել կատարելու մյուսները, բայց չի կատարել: Միևնույն ժամանակ՝ անհրաժեշտ է նշել, որ նշված կանոնը բացարձակ չէ, և պետք չէ դա մեկնաբանել ծայրահեղ տառացի ու քննարկվող հնաստիտուտը կիրառել միայն այն դեպքում, երբ առկա են հոդվածում նշված բոլոր հանգամանքները, քանի որ հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ հանցանք կատարած անձն օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել կատարելու հոդվածով սահմանված բոլոր պայմանները: Օրինակ՝ հանցանք կատարելիս անձին անմիջապես բերման են ենթարկել, և նա զրկվել է մեղայականով կամովին ներկայանալու հնարավորությունից, կամ երբ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելու կամ հարթելու անհրաժեշտություն չի առաջացել¹: Միաժամանակ՝ հնարավոր է, որ անձի դրական, օրենքով խրախուսվող գործողությունները բավարար չլինեն նրան քրեական պատասխանատվությունից ազատելու համար, բայց հանդիսանան պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ:

Քննարկվող հնաստիտուտի կիրառման պարտադիր նախապայման է առաջին անգամ հանցագործություն կատարած լինելու հանգամանքը: Ըստ քրեական իրավունքի տեսության՝ առաջին անգամ հանցանք կատարած են համարվում այն անձինք, ովքեր կամ նախկինում երբևէ հանցագործություն չեն կատարել (խոսքն իրավապահ մարմիններին հայտնի հանցագործությունների մասին է), կամ կատարել են, սակայն ազատվել են քրեական պատասխանատվությունից կամ էլ դատապարտվել են նախկինում կատարված հանցագործության համար, սակայն դատվածությունն օրենքով սահմանված կարգով մարվել կամ հանվել է: Վերջին երկու դեպքը տեսության և պրակտիկայի մեջ տարակարծությունների տեղիք են տալիս. հեղինակների մի մասը

կարծում է, թե նման դեպքերում գործուն զղջալու հնաստիտուտի կիրառման առումով որևէ կասկած լինել չի կարող², մինչդեռ երկրորդ խմբի ներկայացուցիչները կարծում են, թե նշված պայմաններում հիշյալ հնաստիտուտի կիրառումն անթույլատրելի է, քանի որ անձը փաստացի առաջին անգամ չէ, որ հանցանք է կատարում, և նրա նկատմամբ նման հատուկ ներողամտությունն արդարացված չէ, և առաջարկում են օգտագործել ոչ թե «առաջին անգամ հանցանք կատարած», այլ՝ «առաջին անգամ հանցանքի կատարման մեջ մեղադրվող» դարձվածքը³:

Մեր կարծիքով՝ քննարկվող իրավիճակում չպետք է բացառել հիշյալ հնաստիտուտի կիրառումն այն անձանց նկատմամբ, ովքեր նախկինում կատարած հանցագործության համար դատապարտվել են, և օրենքով սահմանված կարգով նրանց նկատմամբ դատվածությունը մարվել կամ հանվել է, ինչպես նաև նախկինում քրեական պատասխանատվությունից ազատված անձինք, ովքեր ողջամիտ տևական ժամանակահատվածում չեն կատարել նոր հանցանք:

Հարկ է անդրադառնալ նաև հիշյալ հնաստիտուտի կիրառելիությանը՝ հանցագործությունների համակցության դեպքում: Այս առումով ևս որոշ հեղինակներ կարծում են, թե հանցագործությունների համակցության դեպքում գործուն զղջալու հնաստիտուտը կիրառելի չէ⁴, մինչդեռ գիտնականների մեկ այլ խումբ նշված հարցի վերաբերյալ ունի տարբերվող դիրքորոշում, որի համաձայն՝ անձի կողմից մի քանի հանցագործություն կատարելը ոչ միշտ է, որ կարող է խոչընդոտ հանդիսանալ քննարկվող հնաստիտուտի կիրառման համար⁵:

Մեր կարծիքով՝ հանցագործությունների իդեալական համակցության դեպքում, երբ անձը մեկ արարքով կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված երկու և ավելի հանցագործություն (օրինակ՝ հանցավորն օգտագործում է կեղծ անձնա-

¹ ՀՀ քրեական իրավունք. Ընդհանուր մաս: Գ. Ղազինյանի խմբագրությամբ, Երևան, 2012, էջ 466-468:

² Чернова Майя Борисовна. Деятельное раскаяние как институт освобождения от уголовной ответственности (ст. 75 УК РФ) автореф. дис. ... канд. юрид. наук: Санкт-Петербург: СПб ЮИ ГП РФ, 2006.

³ Аликперов Х. Д. Освобождение от уголовной ответственности: уголовно правовые аспекты, М., 1999, с. 178.

⁴ Алюшкин П. В. Фактический состав освобождения от уголовной ответственности в связи с деятельным раскаянием, с. 26, М., 1999.

⁵ Щерба С. П., Савкин А. В. Доказывание деятельного раскаяния подозреваемого (обвиняемого) на предварительном следствии. Методические рекомендации. М.: ВНИИ МВД РФ, 1994, с. 34.

գիր՝ պետական սահմանը հատելու նպատակով), կիրառելի է քննարկվող ինստիտուտը, քանի որ նշված դեպքում թեև արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով, այնուամենայնիվ, դժվար է նշված իրավիճակը գնահատել որպես նախկինում հանցանք կատարած անձի կողմից նոր հանցանքի կատարում: Այս համատեքստում պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ, ի տարբերություն իրական համակցության՝ իդեալական համակցության դեպքում տարբեր հանցավոր արարքների կատարումը տեղի է ունենում միևնույն ժամանակահատվածում (առկա չէ ժամանակային խզում), մինչդեռ իրական համակցության դեպքում՝ կատարված հանցագործությունների միջև, որպես կանոն, առկա է որոշակի ժամանակահատված, ինչը հնարավորություն է տալիս հանցավորին վերահսկելու իր գործողությունները և բարձրացնում է վերջինի հանրային վտանգավորությունը: Հարկ է նշել նաև, որ իդեալական համակցության դեպքում, որպես կանոն, անձն ի սկզբանե նպատակադրված է կատարել օրենքով արգելված միայն մեկ արարք, ինչը ևս վկայում է առավել նվազ հանրային վտանգավորության մասին:

Պետք է նշել նաև, որ, թեպետ ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ինստիտուտի կիրառումը տարածվում է միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած անձանց վրա, նույն հոդվածի 2-րդ մասը նման պայման չի նախատեսում:

Քննարկվող իրավական նորմի կիրառման պայման է նաև հանցանք կատարած անձի՝ մեղայականով կամովին ներկայանալու հանգամանքը: Մեղայականով կամովին ներկայանալ է համարվում անձի՝ իր կամ այլ անձանց միջոցով գրավոր կամ բանավոր կերպով քրեական հետապնդման մարմին դիմելը, ընդ որում՝ մինչև իր կամ իր կողմից կատարված հանցագործության փաստի՝ որպես հանցավոր արարք կատարած սուբյեկտի բացահայտումը⁶: Այս համատեքստում պետք է հաշվի առնել ինչպես

հանցագործության փաստի կամ սուբյեկտի հայտնի լինելու հանգամանքը, այնպես էլ հանցանք կատարած անձի՝ ներկայանալու դրդապատճառները, այն է՝ հարկադրված, թե՛ կամովին է հանցավորը ներկայացել: Կարևոր է նաև այն, թե արդյոք իրավապահ մարմիններն իրական հնարավորություն ունեցել են հայտնաբերելու հանցանք կատարած անձին, թե՛ ոչ: Կամովին ներկայանալու հանգամանքը բացակայում է, եթե անձը գիտակցել է, որ իր գտնվելու վայրը հայտնի է իրավապահներին, և այդ պայմաններում ներկայացել է վերջիններին. այս դեպքում բացակայում է անձի ազատ կամաարտահայտությունը: Հարկ է ընդգծել, որ կամովին ներկայանալու դեպքում էական չեն հանցավորի՝ հետախուզման մեջ գտնվելու կամ հանցագործությունը տևական ժամանակ առաջ կատարելու հանգամանքները:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով քննարկվող հարցին, դիրքորոշում է հայտնել, որ հանցանք կատարած անձի ներկայանալը կարող է համարվել կամովին այն դեպքում, երբ անձն ինքնակամ, սեփական կամահայտնությամբ դիմում է համապատասխան մարմիններին՝ գիտակցելով քննությունից թաքնվելու հնարավորությունը: Միաժամանակ՝ կամովին ներկայանալը կհամարվի մեղայականով ներկայանալ, եթե հանցավորն ընդունի իր մեղքը հանցանքի կատարման կամ դրան հանցակցելու մեջ, անկեղծորեն զղջա կատարվածի համար և տա ճշմարտացի ցուցմունքներ գործին վերաբերող իրեն հայտնի բոլոր հանգամանքների վերաբերյալ⁷:

Մեր կարծիքով՝ անձի՝ իր արարքի համար զղջալու հանգամանքը գնահատողական կատեգորիա է և սույն ինստիտուտի կիրառման տեսանկյունից պետք է պայմանավորվի կոնկրետ գործողությունների կատարմամբ: Ինչ վերաբերում է իր կատարած արարքի վերաբերյալ անձի հոգեբանական վերաբերմունքին՝ դա խիստ սուբյեկտիվ հանգամանք է և չի կարող որպես պարտադիր հատկանիշ հաշվի առնվել վարույթն իրականացնող մարմնի կողմից: Այս

⁶ Аликперов Х. Д. Освобождение от уголовной ответственности: уголовно-правовые аспекты. М., 1999, с. 158; Головки Л.В. Альтернативы уголовному преследованию в современном праве.– СПб., 2002.– с. 409; Петрикова С.В. Понятие деятельного раскаяния в уголовном праве РФ. Социально-политические науки. 2012. №3. с. 84-86.

⁷ Էդվարդ Գրիգորի Ադամյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԵԴ/0048/01/14 որոշում, կետ 20-րդ:

տեսանկյունից՝ առավել կարևոր է օրենքով սահմանված պայմանների կատարումը, սակայն պետք է նկատի ունենալ, որ տեսական մակարդակում քննարկման ենթակա է նաև այն տեսակետը, որ նշված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը հնարավոր է միայն այն դեպքում, երբ անձը ներքուստ զղջացել է կատարվածի համար:

Քննարկման ենթակա հաջորդ պայմանը հանցանք կատարած անձի կողմից հանցագործության բացահայտմանն աջակցելն է: Բացահայտել նշանակում է որևէ հանցանք կամ դա կատարող անձին (անձանց) դարձնել ակնհայտ: Այս կապակցությամբ Ռուսաստանի Դաշնության գերագույն դատարանը դիրքորոշում է հայտնել, որի համաձայն՝ հանցագործության բացահայտմանն աջակցելու համար բավարար չէ, որ հանցավորն ընդունի մեղքը, զղջա դրա համար և տեղեկություններ հաղորդի կատարվածի փաստական հանգամանքների մասին: Անհրաժեշտ է նաև, որ անձը քննչական մարմիններին հայտնի տեղեկություն, որը մինչ այդ նրանց հայտնի չի եղել. օրինակ՝ մատնանշի հանցագործության գործիքի գտնվելու վայրը, օժանդակի քննչական գործողությունների կատարմանը, ներկայացնի իրեղեն ապացույցներ, մերկացնի հանցագործության այլ մասնակիցներին և այլն⁸:

Այսինքն՝ հանցագործության դեպքի հայտնաբերումը, դեպքի սուկ բացահայտումը բավարար չեն՝ անհրաժեշտ է նաև հանցագործության քննությանն օժանդակություն ցույց տալ: Ասվածը ենթադրում է անձի կողմից այնպիսի գործողությունների կատարում, որոնք ուղղված կլինեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածով սահմանված, ապացուցման ենթակա հանգամանքների բացահայտմանը: Ընդ որում՝ պարտադիր է, որ նշված հանգամանքներն ապացուցվեն դատավարական ճիշտ ընթացակարգով ձեռք բերված ապացույցների միջոցով: Միևնույն ժամանակ՝

նշված աջակցությունը կարող է արտահայտվել օպերատիվ ճանապարհով կիրառելի և այլ օգտակար տեղեկատվության փոխանցմամբ կամ այլ գործողությունների կատարմամբ (օրինակ՝ երբ հանցանք կատարած անձն աջակցում է հետախուզման մեջ գտնվող հանցակիցներին հայտնաբերելու գործընթացին՝ նրանց հետ հանդիպում կազմակերպելով և հանդիպման վայրն ու ժամն իրավապահ մարմնին հայտնելով):

Հարկ է նաև փաստել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի բովանդակությունից տեսանելի է, որ «հանցագործության բացահայտելուն աջակցել» բառակապակցությունը վերաբերում է միայն անձի և նրա հանցակիցների կողմից կատարված կոնկրետ հանցագործությանը: Այսինքն՝ հանցանք կատարած անձը պարտավոր է աջակցել այն արարքի բացահայտմանը, որի վերաբերյալ իր նկատմամբ կարող է կիրառվել գործուն զղջալու ինստիտուտը: Մեր կարծիքով՝ սույն ինստիտուտի կիրառումն առավել արդյունավետ կլինի, եթե «հանցագործության բացահայտելուն աջակցել» հասկացությունը վերաբերի նաև այլ անձանց կողմից կատարված հանցագործությունների բացահայտմանը: Քննարկվող մոտեցումն արդյունավետ կերպով կիրառվում է անգլոսաքսոնական իրավական համակարգի մի շարք երկրներում: Այս համատեքստում հարկ է ընդգծել ԱՄՆ իրավական համակարգում գործող՝ արդարադատության հետ գործարք⁹ կոչվող ինստիտուտը (Plea Bargaining), որը հաջողությամբ կիրառվում է նաև հարևան Վրաստանում¹⁰: Հիշատակված մոտեցումն ավելի արդյունավետ է դարձնում կազմակերպված հանցավորության դեմ պայքարը: Պետք է նշել նաև, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը նախատեսում է համագործակցության վարույթ կոչվող ինստիտուտը, որն ընդհանուր գծեր ունի արդարադատության հետ գործարք կոչվող ինստիտուտի հետ:

⁸ Постановление Верховного Суда РФ от 14.01.2004 г. по делу Ветраева, 2004 г.

⁹ Ամերիկյան իրականությունում առաջացած գործարքի ինստիտուտը հիմնվում է պրագմատիզմի, ռացիոնալիզմի և տնտեսական շահի վրա: Անգլոսաքսոնական համակարգում դա ներկայացվում է որպես փոխզիջում անհատի և պետության միջև, ինչը հանգեցնում է փոխզիջման բարոյականության և տնտեսական շահի միջև, որտեղ գերակայությունը տրվում է վերջինին:

¹⁰ Հիշյալ ինստիտուտը Վրաստանում կիրառվում է՝ 2004 թվականից սկսած: Օրենսդրական կարգավորում ստացած դրույթի համաձայն՝ կամ դատախազը, կամ մեղադրյալը կարող են սկսել բանակցությունները, որոնց կարող է մասնակցել մեղադրյալի պաշտպանը: Բանակցությունները կարող են վերաբերել և՛ մեղադրանքին, և՛ պատժին: Երկրորդ դեպքում անձը կարող է չվիճարկել մեղադրանքը, ընդունել պատիժը, բայց չընդունել իր մեղքը:

Գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պայման է նաև հանցագործության հետևանքով պատճառված վնասը հատուցելու կամ հարթելու հանգամանքը: Բոլոր այն դեպքերում, երբ կարելի է հաշվել և ստանալ հանցագործության հետևանքով պատճառված գույքային վնասի չափը, հանցանք կատարած անձը կարող է այդ վնասը հատուցել բնեղենով կամ դրամական փոխհատուցման տեսքով: Հարկ է ընդգծել, որ հանցագործությամբ պատճառված վնասի մեջ չի ներառվում հանցագործության օբյեկտիվ կողմի կատարումից դուրս պատճառված վնասը. օրինակ՝ արգելք հաղթահարելուց առաջացած գույքային վնասը: Քննարկվող հոդվածի և ինտեռնալ, և էքստեռնալ մեկնաբանման պարագայում տեսանելի է, որ խոսքը հանցագործությամբ պատճառված ողջ վնասի հատուցման մասին է: Ասվածը վերաբերում է նաև հանցագործությունը հանցակցությամբ կատարելու դեպքերին:

Մեր կարծիքով՝ բոլոր այն դեպքերում, երբ առկա է հանցագործությունից տուժած անձ (ֆիզիկական կամ իրավաբանական), վարույթն իրականացնող մարմինը պետք է հաշվի առնի, վնասի հատուցման հետ կապված, վերջինիս դիրքորոշումը և, եթե հանցավորն ամբողջությամբ չի հատուցել պատճառված վնասը, չունի հատուցելու հնարավորություն և տուժողի հետ համաձայնության է եկել վնասը մասամբ փոխհատուցելու կամ ընդհանրապես չհատուցելու վերաբերյալ, ապա այս պայմաններում վարույթն իրականացնող մարմինն իրավասու է կիրառել քննարկվող ինստիտուտը: Տուժողի կարծիքը կարևոր է նաև հանցագործությամբ պատճառված ոչ նյութական վնասը հարթված լինելու հանգամանքը քննարկելիս:

Առկա է նաև տեսակետ առ այն, որ հանցագործությամբ պատճառված վնասի մեջ պետք է հաշվվի նաև պետության կողմից օգտագործված այն միջոցների ամբողջությունը, որոնք ծախսվել են հանցագործության կանխման, բացահայտման և քննության համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է գործուն զղջալու ինստիտուտի կիրառման հատուկ հիմքեր: Չնայած այն հանգամանքին, որ գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից

ազատվելու ընդհանուր և հատուկ պայմանների միջև կան որոշակի տարբերություններ, այնուամենայնիվ, քրեական պատասխանատվությունից ազատելու հատուկ միջոցներն ինքնուրույն ինստիտուտ չեն:

Հատկանշական է այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի՝ խրախուսական նորմեր պարունակող հոդվածների մեծ մասում օգտագործվում է «ազատվում է», իսկ նույն օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասում՝ «կարող է ազատվել» քրեական պատասխանատվությունից բառակապակցությունը: Առաջին դեպքում՝ օրենքով սահմանված պայմանները կատարած յուրաքանչյուր անձ օրենքի ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից, և դա թողնված չէ իրավասու մարմնի հայեցողությանը: Նշված պարագայում անձի համար առավել կանխատեսելի է իր գործողությունների արդյունքը, այսինքն՝ անձը հստակ գիտակցում է, որ որոշակի դրական գործողություններ կատարելու դեպքում միանշանակ ազատվելու է քրեական պատասխանատվությունից: Մինչդեռ երկրորդ դեպքում՝ օրենսդիրը գործուն զղջալու ինստիտուտի կիրառումը թողել է վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը: Միևնույն ժամանակ՝ օրենսգիրքը որևէ կերպ չի անդրադառնում այն հարցին, թե վարույթն իրականացնող մարմինն ինչ չափորոշիչներով պետք է առաջնորդվի պատասխանատվությունից ազատելու նպատակահարմարությունը որոշելիս: Այս համատեքստում պետք է փաստել, որ ենթադրելի է այն, որ օրինաչափ դեպքերում հանցանք կատարած անձը զերծ կմնա օրենքով սահմանված պայմանների կատարումից, եթե չունենա հստակ սահմանված երաշխիքներ առ այն, որ իր կատարած դրական գործողությունների դիմաց կստանա շահավետ առավելություն՝ կազատվի քրեական պատասխանատվությունից, կստանա մեղմ պատիժ կամ կազատվի որոշ հանցագործությունների մեղսագրումից (գործուն զղջալու ինստիտուտը չի ներառում այս դրույթը) և այլն:

Մեր կարծիքով՝ հոդվածով սահմանված պայմանների առկայության պարագայում ինստիտուտի կիրառումը պետք է ունենա պարտադիր բնույթ, իսկ վարույթն իրականացնող մարմինն ընդամենը պետք է ստուգի անձի կողմից կատարած գործողությունների լրիվության, բա-

վարարության, հողվածի պահանջներին համապատասխանության հանգամանքը և չպետք է ունենա հիշյալ ինստիտուտը չկիրառելու հայեցողություն: Հարկ է նշել, որ առաջացող հետևանքի կանխատեսելիությունը քննարկվող նորմի կիրառելիությունը դարձնում է առավել արդյունավետ:

Պետք է նշել նաև, որ, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ են համարվում նաև՝ մեղայականով ներկայանալը, հանցագործությունը բացահայտելուն, հանցագործության մյուս մասնակիցներին մերկացնելուն, հանցագործությամբ ձեռք բերված գույքը որոնելուն աջակցելը: Այսինքն՝ գործուն զղջալու ինստիտուտի կիրառման պայման հանդիսացող գործողությունների կատարումը կարող է հանդես գալ որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

Որոշակի գործնական հետաքրքրություն է ներկայացնում նաև գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու դատավարական ընթացակարգին վերաբերող հարցերի քննարկումը, մասնավորապես՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման կայացման կարգը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը, կարող են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 72-րդ, 73-րդ և 74-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում քրեական գործ չհարուցել և քրեական հետապնդում չիրականացնել:

Քանի որ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքը մանրամասնորեն չի կարգավորում այդ հարցը, ուստի իրավակիրառ պրակտիկայում առաջ են եկել 37-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմի կիրառման տարբեր ընթացակարգեր:

Դատախազի կողմից նման որոշում կայացնելու առումով գործնական խնդիր առաջ չի գալիս, իսկ ահա դատախազի համաձայնությամբ քննիչի կողմից նման որոշում կայացնելու դեպքում առաջ են գալիս հետևյալ հարցերը.

1. Ինչ կերպ է դատախազը տալիս իր համաձայնությունը՝ գրավոր, թե՛ բանավոր:

2. Եթե համաձայնությունը գրավոր է, ապա ինչպիսի՞ դատավարական փաստաթղթում է արտացոլվում:

3. Եթե է արձանագրվում գրավոր համաձայնությունը՝ նյութերի նախապատրաստման տասնօրյա ժամկետի ընթացքում, թե՛ որոշման օրինականությունը դատախազի կողմից ստուգելիս:

4. Արդյոք քրեական գործ հարուցելը մերժելուն համաձայնություն տված հսկող դատախազը կարող է այդ որոշման օրինականությունն ստուգելիս վերացնել դա ու հարուցել քրեական գործ:

Իրավակիրառ պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմը կիրառելիս դատախազի համաձայնությունը գրավոր է տրվում: Այդ կերպ քննիչն ապահովագրում է իր կայացրած որոշման հնարավոր վերացման ռիսկը: Ինչ խոսք՝ դատախազի բանավոր համաձայնությունը ևս պարտավորեցնող է վերջինիս համար, սակայն գրավոր տրված համաձայնության պայմաններում, բնականաբար, դատախազն ավելի մեծ պատասխանատվություն է զգում քննիչի կայացրած որոշման օրինական և հիմնավորված լինելու համար:

Թերևս՝ դեպքերի մեծամասնությունում դատախազի համաձայնությունը տրվում է՝ քննիչի կայացրած որոշման վրա համապատասխան գրառում կատարելով: Որպես կանոն՝ քննիչը որոշման առաջին էջի վերին աջ անկյունում նշում է «Համաձայն եմ» գրառումը, դատախազի տվյալները և ստորագրության հատվածը, որտեղ վերջինս դնում է իր ստորագրությունը: Այս ընթացակարգն ավելի գործնական և արդյունավետ է, սակայն դրա իրականացումն իրավական խնդիրներ է առաջացնում:

Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում: Այսինքն՝ տասնօրյա ժամկետում պետք է կայացվի նույն օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը: Եթե այդ որո-

շումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով կայացվող քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումն է, ապա տասնօրյա ժամկետի ավարտին դատախազի համաձայնությունը պետք է արդեն իսկ ստացված լինի, այլապես՝ առանց դրա քննիչի կայացրած որոշումը իրավաբանական ուժ չունի, և ստացվում է, որ խախտվում է 181-րդ հոդվածով սահմանված պահանջը:

Կարծում ենք՝ այն մոտեցումը, որ քննիչը կարող է կայացնել որոշում՝ դատախազի համաձայնությունը հետագայում ստանալու ակնկալիքով, կենսունակ չէ¹¹: Քննիչը, անշուշտ, մտահոգված է իր կայացրած որոշման ուժի մեջ մնալու հարցում և այդ պատճառով, որպես կանոն, փորձում է նախօրոք ստանալ դատախազի բանավոր համաձայնությունը: Իսկ գրավոր համաձայնությունը, որպես կանոն, դատախազը տալիս է քննիչի կայացրած որոշումների բոլոր օրինակների վրա համապատասխան գրառում կատարելով, ստորագրելով: Այդ նպատակով որոշման բոլոր օրինակները նյութերի հետ քննիչը ներկայացնում է հսկող դատախազին: Հսկող դատախազը յոթնօրյա ժամկետում ստուգում է որոշման օրինականությունը և հաստատելու դեպքում որոշման օրինակներն ու նյութերը վերադարձնում քննիչին: Այս դեպքում արդեն պետք է նկատել, որ հաղորդում տալու օրվանից անցած է լինում ավելի քան 10 օր ժամանակ, և խախտվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմը, ըստ որի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է հանցագործության մասին հաղորդում տված ֆիզիկական կամ իրավաբանական անձին:

Այդ պատճառով կարծում ենք, որ դատախազի համաձայնությունը պետք է տրվի նյութերի նախապատրաստման տասնօրյա ժամկետի ընթացքում: Իսկ համաձայնությունը տալուց հետո հսկող դատախազն այլևս իրավասու

չէ ստուգելու որոշման օրինականությունը, քանի որ, իր համաձայնությունը տալով, արդեն իսկ պարտավոր էր ստուգել նման որոշման կայացման օրինականությունը: Այսինքն՝ ոչ թե քննիչն է ստանում դատախազի հետագա համաձայնությունը, այլ՝ դատախազն է նախօրոք՝ մինչև որոշում կայացնելը, ստուգում նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու օրինականությունը: Նման դեպքում հսկող դատախազն իրավասու չէ իր նախաձեռնությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված կարգով վերացնել քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը և հարուցել քրեական գործ: Սակայն նման որոշում հսկող դատախազը կարող է կայացնել վերադաս դատախազի ցուցումի հիման վրա: Այս դեպքում վերադաս դատախազն է փաստացի ստուգում տվյալ որոշման օրինականությունը և խախտում հայտնաբերելիս ցուցում է տալիս հսկող դատախազին՝ վերացնել որոշումը և հարուցել քրեական գործ:

Գրականության մեջ առաջարկվում է դատախազի համաձայնության տրման նման կարգ: Հաշվի առնելով նյութերի նախապատրաստման տասնօրյա ժամկետում դատախազ-քննիչ կապի գրագրություններով ապահովման անհնարինությունը՝ առաջարկվում է, որ քննիչն անձամբ պետք է, այսպես ասած, միջնորդության տեսքով դատախազին ներկայացնի առկա հիմքերը, ով, իր հերթին, անմիջապես պետք է ձեռնամուխ լինի դրանց ստուգմանը: Եթե դատախազը տալիս է իր համաձայնությունը, ապա քննիչը կարող է կայացնել քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում¹²:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ գործուն զոջալը քրեական և քրեադատավարական նորմերով սահմանված համալիր ինստիտուտ է, որի կիրառումը թույլ է տալիս անձին ազատվել քրեական պատասխանատվությունից, նաև դիտվում է որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք:

¹¹ Ղամբարյան Ա., Քրեական հետապնդումը (մեղադրանքը) մինչդատական վարույթում: Երևան, 2016, էջ 163:

¹² Ս. Յուզբաշյան, Ա. Սարգսյան. Դատախազի համաձայնությունը քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու դատավարական ընթացակարգն ու դրա հիմնախնդիրները, Օրինականություն, №96, 2016, էջ 24:

ՔԱԳՐԱՏ ՂԱԶԻՆՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական,
Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Արդի պայմաններում պետությունների քաղաքական համակարգում գործադիր իշխանությունը կարևորագույն տեղ է զբաղեցնում, քանի որ պետական իշխանության համակարգում առկա քաղաքական համագործակցության կառուցակարգերի բնույթը, ինչպես նաև պետական կառավարչական գործընթացների արդյունավետությունը ներպետական և միջազգային հարաբերություններում մեծապես պայմանավորված են և կանխորոշվում են վերջինիս զարգացման մակարդակով: Դա հատկապես ակներև է դառնում տարաբնույթ տրանսֆորմացիոն գործընթացների պայմաններում, երբ գոյություն ունեցող քաղաքական ինստիտուտները, կարգավորման կառուցակարգերը և ձևավորված արժեքները հետզհետե «ապամոնտաժվում» են՝ իրենց տեղը զիջելով ժամանակի պահանջներին համահունչ նորերին:

Չարգացման անցումային փուլում գտնվող նմանատիպ պետություններից է նաև Հայաստանի Հանրապետությունը, որտեղ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքով ամրագրված՝ խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում էլ ավելի բարձրացվեց գործադիր իշխանության գործառնական դերակատարումը հասարակական կենսագործունեության հիմնարար բնագավառներում, ինչի շնորհիվ վերջինս դարձավ իր ծրագրի հիման վրա պետության ներքին և արտաքին քաղաքականությունը մշակող և իրականացնող կենտրոնական օղակը: Այսինքն՝ այս պայմաններում առավել քան ակնհայտ է, որ պետական կառավարման առանցքային նպատակների իրականացումն ուղղակիորեն կախված է գործադիր իշխանության մարմինների համակարգի արդյունավետ աշխատանքից:

Սույն հոդվածի շրջանակներում, հաշվի առնելով Հանրապետությունում մինչ օրս տեղի ունեցած սահմանադրական զարգացումների արդյունքները, կփորձենք դիտարկել գործադիր իշխանության մարմինների համակարգը հետևյալ երկու հարցադրման համատեքստում.

ա) գործադիր իշխանության մարմինների համակարգի սահմանման նորմատիվ-իրավական հիմքը, դրա ազդեցությունը համակարգի կայունության նկատմամբ,

բ) հանրապետական գործադիր մարմինների իրավական կարգավիճակի և գործառնական տարանջատման առանձնահատկությունները:

1991 թվականի դեկտեմբերի 4-ի՝ «Կառավարության կազմի և կառուցվածքի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով ամրագրվեց, որ Հայաստանի նորանկախ Հանրապետության կառավարության կազմի մեջ են ներառվում վարչապետը՝ կառավարության նախագահը, փոխվարչապետը՝ կառավարության նախագահի տեղակալը, ՀՀ պետական նախարարները, ինչը բոլորովին նոր ինստիտուտ էր ՀՀ սահմանադրական պրակտիկայում, նախարարները, պետական վարչությունների պետերը և հարկային պետական տեսչության պետը: Նույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանվեց, որ կառավարության կառուցվածքի մեջ էին ներառվում 22 նախարարություն, 8 պետական վարչություն և 1 պետական տեսչություն:¹

1995 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության ընդունումից հետո կառավարության կառուցվածքը սահմանող նորմատիվների համակարգի արդյունավետ աշխատանքից:

1995 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության ընդունումից հետո կառավարության կառուցվածքը սահմանող նորմատիվների համակարգի արդյունավետ աշխատանքից:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 101 2017

¹ Տե՛ս ՀՀԳԽՏ 1991/23: Ընդ որում՝ հարկ է նկատել, որ այս օրենքն ուժը կորցրած է ճանաչվել միայն 2007 թվականի հունվարի 4-ից՝ ՀՀ ԱԺ կողմից 2006 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված թիվ ՀՕ-199-Ն օրենքի համաձայն:

իրավական հիմքը փոփոխվեց: Հիշյալ խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանվում էր Հանրապետության Նախագահի կողմից: Հիմք ընդունելով հիշյալ սահմանադրական նորմը՝ դա սահմանվեց Հանրապետության Նախագահի՝ 1995 թվականի հուլիսի 25-ի՝ «ՀՀ կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ ՆՀ-456 հրամանագրով, ինչպես նաև 2002 թվականի մարտի 16-ի՝ «ՀՀ կառավարության կառուցվածքը սահմանելու մասին» թիվ ՆՀ-1063 հրամանագրով:

Ի տարբերություն նախկին սահմանադրաիրավական կարգավորման՝ 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 6-րդ մասում ամրագրվեց, որ կառավարության կառուցվածքը կառավարության առաջարկությամբ սահմանվում է օրենքով: Այսինքն՝ մինչ օրս գործող սահմանադրական կարգավորմամբ կառավարությունն իր կառուցվածքի վերաբերյալ առաջարկություն է ներկայացնում Ազգային ժողով, իսկ սահմանումը վերջինիս բացառիկ իրավասությունն է: Ազգային ժողովը, օրենքով ամրագրելով կառավարության կառուցվածքը, դրանով իսկ լուծում է նաև կառավարության անդամների թվական կազմի հարցը: Ուստի կառավարություն կազմավորելիս Հանրապետության Նախագահն ու վարչապետը պարտավոր են գործել օրենքով սահմանված կառավարության կառուցվածքի շրջանակներում:²

Սահմանադրական զարգացումների համեմատական վերլուծությունը վկայում է, որ 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունն այս հարցում կատարեց կարևոր բովանդակային փոփոխություն, որն էապես սահմանափակեց պետության գլխի գործառնական դերակատարումը: Որպես արդյունք՝ 2008 թվականի հունիսի 17-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք), որով սահման-

վեց կառավարության կառուցվածքում նախատեսված նախարարությունների ցանկը:

Չնայած դրան՝ մինչ օրս գործադիր իշխանության մարմինների համակարգին առնչվող որոշակի սկզբունքային հարցեր կարգավորված են ոչ թե օրենքով, այլ՝ ենթաօրենսդրական ակտով, այն է՝ Հանրապետության Նախագահի՝ 2007 թվականի հուլիսի 18-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՆՀ-174-Ն հրամանագրով (այսուհետ՝ հրամանագիր):³ Մասնավորապես՝ հրամանագրի 7-րդ կետի համաձայն՝ կառավարության քաղաքականությունն առանձին բնագավառներում մշակում և իրականացնում են հանրապետական գործադիր մարմինները (այսուհետ՝ ՀԳՄ), որոնք ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են վարչապետի առաջարկությամբ՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով: Նույն հրամանագրի 8-րդ կետով սահմանվում է, որ ՀԳՄ-ներն են Հայաստանի Հանրապետության նախարարությունները և կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները: Ի թիվս վերոնշյալի՝ հրամանագրով կանոնակարգվել են նաև հանրապետական գործադիր մարմինների ներքին համակարգին առնչվող մի շարք հարցեր, ինչը, կարծում ենք, նույնպես հիշյալ իրավական ակտի կարգավորման առարկայից դուրս է:

Մեր կարծիքով՝ նմանօրինակ իրավական կարգավորմամբ խախտվում է պետական իշխանության համակարգի իրավահավասարությունը, քանի որ պետական իշխանության թևերից երկուսի համակարգին առնչվող հարցերը կարգավորված են Սահմանադրությամբ և օրենքով, իսկ գործադիր իշխանության պարագայում որոշակի հարցերով առկա է սահմանադրական, որոշակի հարցերով՝ օրենսդրական, որոշակի հարցերով՝ ենթաօրենսդրական իրավակարգավորում: Բացի այդ՝ կարծում ենք, որ պետության գլխի վերոնշյալ հրամանագիրը հակասում է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի.- Եր., «Իրավունք», 2010.- էջ 848:

³ Տե՛ս ՀՀ ՊՏ 2007.07.25/37(561):

3-րդ հոդվածի 5-րդ մասին, ըստ որի՝ նորմատիվ իրավական ակտը պետք է կարգավորի միաբնույթ (մեկ ոլորտ կարգավորող) հարաբերություններ, քանի որ գործադիր իշխանության մարմինների համակարգին առնչվող առանձին հարցադրումները որևէ կերպ չեն կարող դիտարկվել որպես կառավարության և հանրապետական գործադիր մարմինների գործունեության կազմակերպման բաղկացուցիչ մաս:

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ սահմանադրական կարգավորումներն էապես փոփոխվեցին 2015 թվականին: Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 147-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախարարությունների ցանկը և կառավարության գործունեության կարգը կառավարության ներկայացմամբ սահմանվում են օրենքով:

Կարծում ենք, որ միանշանակ ողջունելի է սահմանադրի մոտեցումն այս հարցում, քանի որ դրա շնորհիվ բացառապես օրենսդրական կարգավորման դաշտ են տեղափոխվել գործադիր իշխանության մարմինների համակարգի կազմավորման և գործունեության կարգի սահմանման հարցերը: Նմանատիպ իրավակարգավորմամբ, կարծում ենք, գործադիր իշխանության մարմինների համակարգը զերծ կմնա տարաբնույթ գործոնների ազդեցության ներքո կատարվող անհիմն, անհարկի և հապճեպ փոփոխություններից: Այս տեսանկյունից բավական է միայն հիշատակել, որ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության մարմինների համակարգում մինչ օրս կատարված փոփոխությունների հետևանքով մի շարք նախարարություններ, շատ հաճախ առանց որևէ պատշաճ հիմնավորման և գործառույթային հստակ վերլուծության, միավորվեցին կամ տարանջատվեցին, իսկ որոշ նախարարություններ վերակազմավորվեցին կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների:⁴

Այս կապակցությամբ հարկ ենք համարում

ներկայացնել սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկայում արձանագրված ուշագրավ մեկ օրինակ: Այսպես՝ Մոլդովայի Սահմանադրական դատարանը, քննելով Մոլդովայի կառավարության՝ 2005 թվականի փետրվարի 10-ի՝ «Որդեգրման ազգային կոմիտե ստեղծելու մասին» թիվ 162 որոշման սահմանադրականության հարցը, 2006 թվականի հունիսի 27-ի՝ թիվ 2-003 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Կառավարության իրավասությունը ներառում է նախարարությունների, կենտրոնական և այլ գործադիր մարմինների, պետական տեսչությունների, կառավարական հանձնաժողովների և խորհուրդների, ինչպես նաև նրան ենթակա այլ մարմինների գործունեության կազմակերպումը և կարգավորումը: Կենտրոնական գործադիր մարմինները, «Կառավարության մասին» օրենքի համաձայն, ստեղծվում են վարչապետի առաջարկությամբ՝ խորհրդարանի կողմից: Ընդունելով վիճարկվող որոշումը՝ կառավարությունը, ի հակադրումն Սահմանադրության 102.2-րդ հոդվածի, սահմանազանցել է իր սահմանադրական լիազորությունները, քանի որ վերջինս սահմանում է, որ նման որոշումներն ընդունվում են օրենսդրական ակտերով: Կառավարությունը որևէ իրավասություն չունի իր որոշմամբ հիմնելու որդեգրման ազգային կոմիտե՝ փոփոխելով և լրացնելով կենտրոնական վարչակազմի կառուցվածքը, քանզի Սահմանադրությունը և «Կառավարության մասին» օրենքը սահմանում են, որ պետական կառավարման մարմինների ստեղծումն իրականացվում է միայն օրենքի հիման վրա:⁵

Արդի պայմաններում պետական կառավարման մարմինների առջև դրված բարդ խնդիրների լուծումը գրեթե մշտապես պահանջում է համակարգի արդիականացմանն ուղղված համարժեք ինստիտուցիոնալ և գործառնական լուծումներ: Այդ գործընթացների նկատմամբ, ի

⁴ Օրինակ՝ Հանրապետության Նախագահի 2016 թվականի փետրվարի 24-ի թիվ ՆՀ-196-Ա հրամանագրով 2014 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ ՆՀ-602-Ա հրամանագրով ստեղծված ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը վերակազմակերպվեց ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության: Կամ՝ 2016 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ ՆՀ-1091-Ն հրամանագրով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը վերակազմավորման ձևով վերակազմակերպվեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի:

⁵ Մեջբերված դատական ակտն ստացվել է Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի Codices տեղեկատվական բազայի միջոցով:

թիվս կառավարման օպտիմալացման ազդակների, իրենց ներգործությունն ունեն նաև մի շարք այլ գործոններ, ինչպես օրինակ՝ տվյալ ժողովրդի պատմությունը, նրա ազգային ավանդույթները և սովորույթները⁶, քաղաքական ուժերի հարաբերակցությունը, նրանց միջև կայացած փոխհամաձայնությունները:⁷ Մեր կարծիքով՝ գործադիր իշխանության մարմինների համակարգի կազմավորման ամենագլխավոր չափանիշը պետք է լինի պետական կառավարչական գործառույթների հստակ տարանջատումը, դրանց պարզեցումը և վերջիններիս արդյունավետ իրացմանն ուղղված համարժեք կառուցակարգերի սահմանումը, ինչն իր դրական ազդեցությունը կունենա պետական կառավարման արդյունավետության բարձրացման նկատմամբ:

Ինչպես նշվեց՝ կառավարության քաղաքականությունն առանձին բնագավառներում մշակում և իրականացնում են հանրապետական գործադիր մարմինները, որոնք են՝ նախարարությունները և կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները:

Նախարարությունները հանդես են գալիս որպես գործադիր իշխանության կենտրոնական մարմիններ, որոնք իրականացնում են հասարակական կենսագործունեության որոշակի բնագավառների պետական կառավարումը: Նախարարությունը կառուցվում է միանձնյա ղեկավարման սկզբունքի հիման վրա, ըստ որի՝ միանձնյա ղեկավարում է նախարարը, ով կառավարության անդամ է, ուղղակիորեն ենթակա է վարչապետին և օժտված է վճռական ձայնի իրավունքով նախարարության իրավասությանն առնչվող ցանկացած հարց լուծելիս:⁸

Եթե վերոնշյալ մոտեցումը նախարարությունների պարագայում տարակուսանքի որևէ առիթ չի հարուցում, ապա կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների կարգավիճակը, կարծում ենք, անորոշ է: Մասնավորապես՝ Հանրապետության Նախագահի՝ 2002 թվականի մարտի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն

առընթեր պետական կառավարման մարմինների կառուցվածքը սահմանելու մասին» ՆՀ-1063 հրամանագիրը⁹ կառավարության կառուցվածքում՝ որպես նրան առընթեր պետական կառավարման մարմին, նախատեսում է մի շարք պետական մարմիններ, որոնց՝ կառավարության կառուցվածքում նախատեսելու վերաբերյալ որևէ դրույթ ամրագրված չէ ՀՀ Սահմանադրությամբ: Դրան համապատասխան՝ ինչպիսի հրամանագրի 2-րդ կետը սահմանում է, որ այդ մարմինները գործում են մինչև պետական կառավարման համակարգի բարեփոխումների գործընթացի ավարտը: 2008 թվականի հունիսի 17-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը հստակ սահմանում է, որ կառավարության կառուցվածքում ընդգրկված են բացառապես նախարարության կարգավիճակ ունեցող 18 հանրապետական գործադիր մարմիններ: Չնայած դրան՝ Հանրապետության Նախագահի՝ 2008 թվականի հունիսի 21-ի «ՀՀ Նախագահի 2002 թվականի մարտի 16-ի ՆՀ-1063 հրամանագրում փոփոխություն կատարելու մասին» ՆՀ-166-Ն հրամանագրի 1-ին կետի համաձայն՝ ուժը կորցրած է ճանաչվել վերոնշյալ հրամանագրի միայն I բաժինը, իսկ վերջինիս II բաժինը շարունակում է մնալ ուժի մեջ՝ հակասելով ինչպես 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 6-րդ մասին, այնպես էլ «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» ՀՀ օրենքին: Որպես արդյունք՝ կարող ենք եզրահանգել, որ կառավարության կառուցվածքի իրավական կարգավորման բնագավառում ներկայումս գործում են տարբեր իրավաբանական ուժ ունեցող 2 առանձին նորմատիվ իրավական ակտեր:

Վերլուծելով Հանրապետության Նախագահի՝ 2002 թվականի մարտի 16-ի ՆՀ-1063 և 2007 թվականի հուլիսի 18-ի թիվ ՆՀ-174-Ն հրամանագրերը և համադրելով դրանք «Հայաստանի Հանրապետության կառավարության

⁶ Օրինակ կարող է հանդիսանալ Սփյուռքի նախարարության ստեղծումը Հայաստանում:

⁷ Տես Հարությունյան Գ., Վաղարշյան Ա. Նշված աշխ., էջ 847:

⁸ [https://en.wikipedia.org/wiki/Ministry_\(government_department\)](https://en.wikipedia.org/wiki/Ministry_(government_department)):

⁹ Հրամանագրի վերնագիրը փոփոխվել է ՀՀ Նախագահի 2016 թվականի մարտի 1-ի թիվ ՆՀ-213-Ն հրամանագրով: Մինչ այդ՝ հրամանագիրն ուներ «ՀՀ կառավարության կառուցվածքը սահմանելու մասին» վերտառությունը:

կառուցվածքի մասին» ՀՀ օրենքի հետ՝ եզրակացնում ենք, որ հիշատակված երկու խումբ հանրապետական գործադիր մարմինների միջև իրականացված չէ հստակ գործառույթային տարանջատում: Նրանք, ըստ էության, կոչված են իրականացնելու միևնույն պետաիշխանական գործառույթը, այն է՝ առանձին բնագավառներում կառավարության քաղաքականության մշակումը և իրականացումը, սակայն պարզ չէ, թե ինչ սահմանագիծ է դրված դրանց տարանջատման հիմքում: Ինչ մոտեցում է դրվել կառավարվող բնագավառների տարբերակման հիմքում: Ինչո՞ւ որոշակի բնագավառների պետական քաղաքականությունը պետք է մշակվի և իրականացվի օրենքի հիման վրա ստեղծվող նախարարության կողմից, իսկ որոշ բնագավառների պետական քաղաքականությունը՝ Հանրապետության Նախագահի հրամանագրի հիման վրա ստեղծվող՝ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի կողմից: Ինչո՞ւ նախարարները, ընդգրկված լինելով կառավարության կազմում, մասնակցում են կառավարության նիստերին վճռական ձայնի իրավունքով, իսկ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

Մեր կարծիքով՝ գործադիր իշխանության միասնական համակարգի ձևավորման, ինչպես նաև դրա բաղկացուցիչ մաս կազմող գործադիր մարմինների հստակ գործառնական տարանջատման անհրաժեշտությունից ելնելով՝ չափազանց կարևոր է հիշյալ հանրապետական գործադիր մարմինների կարգավիճակի համապատասխանեցումն ինչպես ՀՀ Սահմանադրության, այնպես էլ վերոհիշյալ օրենքից բխող կանոնակարգումներին:

Այս տեսանկյունից հարկ է արձանագրել, որ 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 159-րդ հոդվածով հստակ և սպառիչ կերպով թվարկվեցին այն մարմինները, որոնք պետք է կազմեն համակարգի բաղկացուցիչ մաս: Ի մասնավորի՝ 2018 թվականից պետական կառավարման համակարգի մարմիններն են լինելու նախարարությունները,

ինչպես նաև կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմիններ, որոնց կազմավորման կարգը և լիազորությունները սահմանվում են օրենքով:

Հիմք ընդունելով հիշյալ սահմանադրաիրավական կարգավորման բովանդակային առանձնահատկությունները և հաշվի առնելով գործադիր իշխանության մարմինների համակարգում ինստիտուցիոնալ և գործառնական հստակ տարանջատման իրականացման անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք հիշյալ մարմիններից յուրաքանչյուրի համար օրենսդրեն ամրագրել պետաիշխանական գործառույթների հետևյալ համակարգը.

Նախարարություն. հանրապետական գործադիր մարմին, որը մշակում և իրականացնում է կառավարության քաղաքականությունը հասարակական կյանքի կոնկրետ բնագավառում՝ համապատասխան ենթաօրենսդրական ակտերով կանոնակարգելով դրանում առաջացող կառավարչական հարաբերությունները:

Կառավարությանը ենթակա պետական կառավարման մարմին. պետական կառավարման այն մարմինն է, որը կոչված է ապահովելու պետական ծառայությունների մատուցումը հասարակական կյանքի համապատասխան բնագավառներում, ինչպես նաև իրականացնելու իրավակիրառական բնույթ ունեցող այլ պետական գործառույթներ:

Վարչապետին ենթակա պետական կառավարման մարմին. հսկողական կամ վերահսկողական գործառույթներով օժտված պետական կառավարման այն մարմինն է, որը կոչված է օժանդակելու կառավարության ղեկավարին՝ իրեն վերապահված գործառույթներն իրականացնելիս:

Նախարարություններին ենթակա պետական կառավարման մարմին. պետական կառավարման այն մարմինն է, որը գործում է նախարարության համակարգում, իսկ գործունեության նպատակները և խնդիրները, ինչպես նաև գործառույթներն ուղղակիորեն բխում են համապատասխան նախարարության կանոնադրական խնդիրներից:

ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱԼ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ, Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ, իրավաբանական վարչություն, առաջատար մասնագետ

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՌԱՋԱՅՈՂ ՎԵՃԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի արդյունավետ կիրառման տեսանկյունից՝ առանցքային նշանակություն ունի պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության ապահովման խնդիրը: Պետական իշխանության մարմինների միջև իրական սահմանադրական հավասարակշռություն հնարավոր է ապահովել միայն այն պարագայում, երբ պետական իշխանության ճյուղերի միջև իրականում առկա լինեն զսպումների և հավասարակշռման գործող մեխանիզմները, ինչպես նաև պետական իշխանության մարմինների միջև առաջացած վեճերի լուծման իրավական բավարար ընթացակարգեր:

Սակայն, դրանով հանդերձ՝ պետական իշխանության մարմինների գործունեության ընթացքում անխուսափելիորեն առաջանում են պետական իշխանության մարմինների միջև գործառույթային հավասարակշռության խախտումներ, ինչն էլ, վերջին հաշվով, հանգեցնում է պետական իշխանության մարմինների միջև առկա սահմանադրական հավասարակշռության խախտման: Պետական իշխանության մարմինների միջև գործառույթային հավասարակշռության խախտումները հիմնականում պայմանավորված են այն հանգամանքով, որ պետական իշխանության մարմիններն անընդհատ պայքար են մղում իրեն գործառույթների և լիազորությունների ընդարձակման համար:

Պետական իշխանության մարմինների միջև գործառույթային հավասարակշռության խախտումներից խուսափելու և սահմանադրական հավասարակշռության ապահովման համար առանցքային են հետևյալ դրույթները. նախ և ա-

ռաջ՝ սահմանադրաիրավական մակարդակով անհրաժեշտ են այնպիսի իրավակարգավորումներ, որոնք հնարավորինս կնվազեցնեն պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության խախտման հնարավորությունը, *երկրորդ*՝ անհրաժեշտ են այնպիսի իրավական կառուցակարգեր, որոնց միջոցով հնարավոր կլինի պետական իշխանության մարմինների միջև խախտված սահմանադրական հավասարակշռությունը ժամանակին բացահայտել և խախտված սահմանադրական հավասարակշռությունը վերականգնել, *երրորդ*՝ պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության ապահովման համար առանցքային նշանակություն ունեն սահմանադրական հավասարակշռության յուրաքանչյուր խախտման պատճառների և դրա առաջացման վրա ազդող գործոնների վերհանումը, գնահատումը և համապատասխան իրավակարգավորումների նախատեսումը:

Պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության խախտումների բացահայտման և խախտված սահմանադրական հավասարակշռության վերականգնման գործում անհրաժեշտ են որոշակի մեխանիզմներ: Այս առումով առանցքային նշանակություն ունեն այնպիսի կարևոր սահմանադրական ինստիտուտներ, ինչպիսիք են *սահմանադրական հսկողությունը*, *սահմանադրական վերահսկողությունը* և *սահմանադրական մշտադիտարկումների* մեխանիզմների առկայությունը: Նշված ինստիտուտներից յուրաքանչյուրն էլ ունի իրեն բնորոշ որոշակի դերակատարություն պետական իշխանության մարմինների միջև սահ-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 101 2017

մանադրական հավասարակշռության ապահովման և խախտված սահմանադրական հավասարակշռության վերականգման գործում:

Պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության խախտումների վերհանման գործում կարևորվում է սահմանադրական հսկողության իրականացումը: Պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության ապահովման և սահմանադրական հսկողության իրականացման միջև կապն ընդգծելու համար անհրաժեշտ է վեր հանել սահմանադրական հսկողությունը բնութագրող հիմնական հատկանիշները: Մի շարք հեղինակներ՝ Մ. Միտյուկովը, Ա. Բարնաշովը, Լ. Բատիշևան, սահմանադրական հսկողությունը բնութագրում են հետևյալ հատկանիշներով. սահմանադրական հսկողություն իրականացնողի և հսկողության ենթակայի միջև գոյություն չունեն ենթակայական հարաբերություններ, բացի այդ՝ հսկողություն իրականացնող մարմինը հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ իրավունք չունի ցուցումներ տալ, չեղարկել դրանք և պատժել¹: Կարծում ենք՝ պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության ապահովման և սահմանադրական հսկողության միջև կապը պայմանավորված է հետևյալով. *առաջին*՝ սահմանադրական հսկողությունը սահմանադրական հսկողություն իրականացնելու իրավասություն ունեցող սուբյեկտների ոչ գործառույթային բնույթի գործունեություն է, որը միտված է բացահայտելու պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության խախտումները, *երկրորդ*՝ սահմանադրական հսկողության արդյունքով սահմանադրական հավասարակշռության խախտումները սահմանադրական հսկողություն իրականացնող մարմնի կողմից չեն կարող անմիջականորեն վերացվել, *երրորդ*՝ սահմանադրական հսկողության շնորհիվ վեր հանված

սահմանադրական հավասարակշռության խախտումները, եթե իրավասու մարմնի կողմից չեն վերացվում, ապա կարող են դառնալ սահմանադրական վերահսկողության առարկա:

Պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության խախտումների բացահայտման գործում կարևոր նշանակություն ունի սահմանադրական վերահսկողության իրականացումը: Այդ կապն ընդգծելու համար անհրաժեշտ է նախ և առաջ քննարկել տեսական գրականությունում առկա սահմանադրական վերահսկողությունը բնութագրող հիմնական հատկանիշները: Այս առումով Վ. Ստեփանյանը *«Իշխանությունների տարանջատումը և սահմանադրական վերահսկողությունը»* հոդվածում նշում է, որ իշխանության ոչ մի ճյուղ չի կարող ապահովել իշխանության ճյուղերի միջև հավասարակշռության ապահովման խնդրի լուծումը: Այդ նպատակով անհրաժեշտ է հատուկ մեխանիզմ, և հենց այդպիսի մեխանիզմ է սահմանադրական վերահսկողությունը²: Գ. Հարությունյանը և Ա. Մինասյանը նշում են, որ սահմանադրական վերահսկողության հիմնական առաքելությունն է ապահովել Սահմանադրության գերակայությունը և կայունությունը, պահպանել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական հաշվեկշիռը և երաշխավորել Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը³: Ն. Վիտրուկի կարծիքով՝ սահմանադրական վերահսկողությունը սահմանադրական վերահսկողություն իրականացնող իրավասու պետական մարմինների գործառույթ է, որը կապված է նորմատիվ իրավական ակտերի համակարգում Սահմանադրության գերիշխանության, ինչպես նաև դրա անմիջական գործողությունների ապահովման հետ⁴, իսկ Մ.Բազալյը նշում է, որ վերահսկողության դեպքում սահմանադրական վերահսկողություն ի-

¹ Տե՛ս М. Митюков, А. Барнашов, Органы конституционного правосудия (сравнительно-правовое исследование законодательства и судебной практики), Томск, 1999, с. 31, տե՛ս նաև Л.Батышева, Соотношение понятий «конституционный контроль» и «конституционный надзор», «Экономика и социум», №10(29) 2016, с. 31, հասանելի էր՝ http://iupr.ru/domains_data/files/zurnal_29/Batysheva%20L.O.%20%28Aktualnye%20problemy%20politiki%20i%20prava%29.pdf

² Տե՛ս Վ. Վ. Ստեփանյան, Իշխանությունների տարանջատումը և սահմանադրական վերահսկողությունը, Սահմանադրական դատարանի տեղեկագիր, №3, 1997թ., էջ 4:

³ Տե՛ս Գ. Հարությունյան, Ա. Մինասյան, Սահմանադրական վերահսկողություն, ուսումնական ձեռնարկ, «Իրավունք», Երևան, 2015թ., 19 էջ:

⁴ Տե՛ս Н. Витрук, Конституционное правосудие, Судебное конституционное право и процесс, Москва, 1998, с. 9.

րականացնող մարմինն ստուգում է վերահսկման օբյեկտի գործունեությունը և ստուգման հետևանքով կարող է չեղարկել ընդունած ակտերը⁵:

Ամփոփելով տեսական գրականությունում առկա տեսակետները՝ կարող ենք առանձնացնել սահմանադրական վերահսկողությանը և պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության խախտման միջև կապը բնութագրող հետևյալ հատկանիշները. *սուաջին*⁶՝ սահմանադրական վերահսկողությունը սահմանադրական վերահսկողություն իրականացնելու իրավասություն ունեցող սուբյեկտների նպատակաուղղված ոչ գործառույթային բնույթի գործունեության տեսակ է, որը միտված է պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության խախտումների բացահայտմանը և վերացմանը, *երկրորդ*⁷՝ սահմանադրական վերահսկողությունն իրականացվում է ընդհանուր սահմանադրական վերահսկողության և դատական սահմանադրական վերահսկողության ձևերով: Ընդհանուր սահմանադրական վերահսկողության դեպքում սահմանադրական վերահսկողություն իրականացնելու լիազորություն ունեցող հանրային իշխանության մարմիններն անմիջականորեն կարող են վերացնել վեր հանված խախտումները, ինչն էլ կնպաստի պետական իշխանության մարմինների միջև խախտված սահմանադրական հավասարակշռության վերականգնմանը: Սահմանադրական վերահսկողության իրականացման մյուս ձևը դատական սահմանադրական վերահսկողությունն է: Դատական սահմանադրական վերահսկողության շնորհիվ՝ պետական իշխանության մարմինների միջև առաջացած սահմանադրական հավասարակշռության խախտումները Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով անմիջականորեն վերացվում են:

Պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության խախտումների վերհանման գործում կարևոր նշա-

նակություն ունի սահմանադրական մշտադիտարկումների իրականացումը: Սահմանադրական մշտադիտարկումների վերաբերյալ հայրենական իրավագիտությունում բավականին արժեքավոր է Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանի «Սահմանադրական մշտադիտարկում» աշխատությունը, որտեղ հեղինակը նշում է, որ սահմանադրական մշտադիտարկումների ինստիտուտի զարգացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխարհում գործող սահմանադրական վերահսկողության և հսկողության մոդելներն այլևս լիարժեքորեն չեն ապահովում խախտված սահմանադրական հավասարակշռության ժամանակին բացահայտման, գնահատման և հաղթահարման անընդհատ բնույթ, իսկ խախտված սահմանադրական հավասարակշռության ժամանակին չվերականգնումը հանգեցնում է սոցիալական անկայունության և պայթյունների, և այդ պարագայում սահմանադրական վերահսկողության համակարգվածությունը և անընդհատությունը հնարավոր է ապահովել միայն սահմանադրական ավտորոշման և մշտադիտարկումների գործող համակարգի առկայության դեպքում⁸:

Սահմանադրական մշտադիտարկումը սահմանադրական մշտադիտարկում իրականացնելու իրավասություն ունեցող սուբյեկտների անընդհատ, շարունակական իրականացվող գործունեության բնույթի, ոչ գործառույթային բնույթի գործունեության տեսակ է, որի հիմնական խնդիրներն են սահմանադրականության խախտումների բացահայտումը և գնահատումը, դրանց առաջացման պատճառների վերհանումը և հաղթահարման մեխանիզմների մշակումը: Սահմանադրական մշտադիտարկումների հիմնական նպատակն է պետությունում զարգացնել սահմանադրական մշակույթին բնորոշ արժեքները և ամրապնդել սահմանադրականությունը⁹:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը բնութագրող հիմնախնդիրներից մեկը դարձել է այն, որ պետական իշխանության մարմիններն իրենց գործա-

⁵ Տե՛ս Մ. Баглай, Конституционное право Российской Федерации, Москва, 2009, с. 632.

⁶ Տե՛ս Գ. Հարությունյան, Սահմանադրական մշտադիտարկում, Երևան, «Նժար», 2016, էջ 112, հասանելի էր՝ <http://concourt.am/armenian/library/cclibrary/2016/book-monitoring-2016.pdf>

⁷ Առավել մանրամասն տե՛ս Մ. Jelusić, «Constitutional monitoring in overcoming the deficit of constitutionalism», международный альманах. Конституционно-правосудие в новом тысячелетии, 2016, «НЖАР», 2016, с. 115-116, <http://concourt.am/armenian/almanakh/almanac2016/almanac2016.pdf>

ռույթներն իրականացնելիս անընդհատ պայքար են մղում իրենց լիազորությունների ընդարձակման համար, ինչը հանգեցնում է պետական իշխանության մարմինների միջև տարաբնույթ սահմանադրաիրավական բնույթի վեճերի առաջացմանը: Սակայն ժամանակակից սահմանադրական իրավունքին հայտնի չէ պետական իշխանության կազմակերպման առավել գործուն միջոց, քան իշխանությունների բաժանման և հավասարակշռության սկզբունքը՝ անկախ բոլոր այն թերություններից, որոնք բնորոշ են այս սկզբունքին:

Պետական իշխանության մարմինների միջև վեճերի առաջացումը պետական իշխանության մարմինների գործունեության անբաժան մասն են կազմում: Պետական իշխանության մարմինների միջև վեճերի առաջացումն ինքնին չպետք է դիտարկել իշխանությունների բաժանման և հավասարակշռության սկզբունքի խախտում: Պետական իշխանության մարմինների միջև վեճերի առաջացումը կարող է հանգեցնել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի խախտման միայն այն դեպքում, երբ վեճերի առաջացման պատճառները ժամանակին չեն ախտորոշվում, և առաջացած վեճերը ժամանակին լուծում չեն ստանում:

Պետական իշխանության մարմինների միջև վեճերի առաջացումը վկայում է, որ պետական իշխանությունը «կենտրոնացված» բնույթ չունի, և պետական իշխանության մարմիններն իրենց լիազորությունների իրականացման համար պատրաստ են «հակամարտության» մեջ մտնել պետական իշխանության մյուս մարմինների հետ: Պետական իշխանության մարմինների միջև վեճերի առաջացումը և այդ վեճերի սահմանադրական ճանապարհով իրավական լուծումը նպաստում է պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության խախտումների վերհանմանը և հաղթահարմանը: Մյուս կողմից՝ պետական իշխանության մարմինների միջև իրավական բնույթ ունեցող վեճերի հաճախակի առաջացումը և ոչ իրավական ճանապարհով լուծումն ավելի են խորացնում պետական իշխանության մարմինների միջև առկա սահմանադրական

հավասարակշռության խախտումը և վերջին հաշվով հանգեցնում սահմանադրական անկայունության ու սահմանադրական ճգնաժամերի:

Պետական իշխանության մարմինների միջև առաջացող վեճերի էությունն ամբողջական ընկալելու համար անհրաժեշտ է վերլուծության առարկա դարձնել պետական իշխանության մարմինների միջև վեճ հասկացությունը և դրան բնութագրող հիմնական իրավական հատկանիշները: Պետական իշխանության մարմինների միջև վեճը սոցիալական վեճի տեսակ է, որը սոցիալական մյուս վեճերից ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք առաջին հերթին պայմանավորված են վեճի օբյեկտի և սուբյեկտների շրջանակով: Պետական իշխանության մարմինների միջև առաջացող վեճի օբյեկտը պետական իշխանության մարմինների կողմից իրենց լիազորությունների իրականացման հետ կապված հարաբերություններն են: Վ. Կուդրյավցևը, անդրադառնալով պետական իշխանության մարմինների միջև վեճի օբյեկտին, նշում է, որ այդ վեճը «պատրուցում» է պետության սահմանադրական, իրավական հյուսվածքները, քանի որ դրա օբյեկտը պետական իշխանության և կառավարման հետ կապված հարաբերություններն են⁸: Պետական իշխանության մարմինների միջև առաջացող վեճի սուբյեկտների շրջանակը հստակեցնելու համար անհրաժեշտ է տարբերակել «պետական իշխանության մարմինների միջև վեճ» և «սահմանադրական մարմինների միջև վեճ» իրավական հասկացությունները: Պետական իշխանության մարմինների միջև վեճի դեպքում վեճի սուբյեկտ կարող են լինել ինչպես սահմանադրական կարգավիճակ ունեցող, այնպես էլ այդպիսի կարգավիճակ չունեցող պետական իշխանության մարմինները: Իսկ սահմանադրական մարմինների միջև վեճի դեպքում վեճի սուբյեկտ կարող են դիտարկվել միայն սահմանադրական կարգավիճակ ունեցող պետական իշխանության մարմինները: Ընդհանուր առմամբ՝ «պետական իշխանության մարմինների միջև վեճ» հասկացությունն առավել ընդգրկուն է և իր մեջ կլանում է նաև սահմանադրական մարմինների միջև վեճ հասկացությունը: Վեճերի այսպիսի դասակարգումն ունի ոչ միայն

⁸ Տե՛ս В. Кудрявцев, Юридическая конфликтология, том 2, Москва, 2002, с. 257.

տեսական բնույթ, այլ նաև գործնական կարևորություն, որը պայմանավորված է այդ վեճերի լուծման իրավական ընթացակարգերով: Մասնավորապես՝ սահմանադրական մարմինների միջև վեճերը, որպես կանոն, լուծում են ստանում սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների միջոցով, մինչդեռ պետական իշխանության մարմինների միջև վեճերը կարող են լուծվել նաև վարչական արդարադատության միջոցով՝ վարչական դատարանի կողմից:

Պետական իշխանության մարմինների միջև վեճերը կարող են ունենալ *միջճյուղային* և *ներճյուղային* բնույթ: Միջճյուղային բնույթի վեճերն առաջանում են պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ճյուղերը ներկայացնող ու պետական իշխանության ճյուղերի համակարգում չընդգրկված մարմինների միջև: Օրինակ՝ օրենսդրական բացերի հաղթահարման գործում սահմանադրական լիազորությունների մասով կարող է սահմանադրական վեճ առաջանալ դատական իշխանության և օրենսդիր իշխանության միջև: Պետական իշխանության մարմինների միջև վեճերը կարող են ունենալ նաև ներճյուղային բնույթ, որի դեպքում վեճեր առաջանում են պետական իշխանության մեկ ճյուղի համակարգում գործող մարմինների միջև, օրինակ՝ դատական իշխանության տարբեր աստիճանների միջև լիազորությունների հետ կապված վեճերի առաջացումը:

Պետական իշխանության մարմինների միջև առաջացող վեճերի էության ամբողջական ընկալման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն վեճերի առաջացման պատճառների վերհանումը և դրանց համակարգային վերլուծությունը: Պետական իշխանության մարմինների միջև առաջացող վեճերը, ըստ դրանց առաջացման բնույթի, լինում են քաղաքական և իրավական:

Քաղաքական բնույթի վեճերը պետական իշխանության մարմինների միջև առաջացող վեճի տեսակ են, որոնց տարրերն ունեն քաղա-

քական բնույթ: Քաղաքական բնույթի վեճերի առաջացման պատճառները որոշ չափով կախված են պետական կառավարման ձևից: Մասնավորապես՝ նախագահական և կիսանախագահական կառավարման ձև ունեցող պետություններում, որտեղ պետական իշխանության օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերը կարող են ձևավորվել տարբեր քաղաքական ուժերի կողմից, առավել մեծանում է պետական իշխանության մարմինների միջև քաղաքական բնույթի վեճերի առաջացման հնարավորությունը: Մինչդեռ այդ հնարավորությունն առավել նվազում է խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետություններում, որտեղ պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերը ձևավորվում են նույն քաղաքական ուժի կողմից: Սակայն բոլոր դեպքերում էլ պետական իշխանության մարմինների միջև կարող են առաջանալ քաղաքական բնույթի վեճեր, որոնց առաջացման պատճառները կարող են տարբեր լինել: Այս առումով՝ Ա. Լանգինենը, որպես պետական իշխանության մարմինների միջև քաղաքական բնույթի վեճերի առաջացման պատճառ, առանձնացնում է կուսակցությունների քաղաքական ծրագրերի էական տարբերությունները և հակասությունները, պետական իշխանության չարաշահման փաստերը, խորհրդարանի և կառավարության քաղաքական կազմի անկայունությունը, քաղաքական առաջնորդների անձնական ձգտումները, ինչպես նաև քաղաքական ընդդիմության գործունեությունը⁹:

Պետական իշխանության մարմինների միջև առաջացող վեճերը կարող են ունենալ իրավական բնույթ: Իրավական բնույթի վեճերը պետական իշխանության մարմինների միջև առաջացող վեճի տեսակ են, որի տարրերն ունեն իրավական բնույթ: Իրավական բնույթի վեճերի առաջացման հիմնական պատճառներից են իրավական դաշտում առկա օրենսդրական բացերը և անորոշությունները: Օրենսդրական բացերի և անորոշությունների առկայությունը հանգեցնում է պետական իշխանության մարմին-

⁹ Տե՛ս А. Лангинен, Конфликты между парламентом и иными высшими органами государственной власти: предпосылки, причины, пути разрешения, государственная политика и политические институты: история и современность, с. 75-76, հասանելի էր՝ file:///C:/Users/HP/Downloads/konflikty-mezhdu-parlamentom-i-inymi-vysshimi-organami-gosudarstvennoy-vlasti-predposylki-prichiny-puti-razresheniya%20(3).pdf

ների գործառույթների, լիազորությունների և պատասխանատվության շրջանակի ոչ հստակ տարանջատման: Այս առումով Ա. Մոնգուշը պետական իշխանության մարմինների միջև վեճերի առաջացումը կապում է պետական իշխանության ճյուղերի գործառույթների խաչաձևման հետ¹⁰: Համակարծիք լինելով նշված տեսակետին՝ հարկ է նշել, որ պետական իշխանության մարմինների գործառույթների, լիազորությունների և պատասխանատվության շրջանակի հստակ տարանջատումը բավականին կարևոր է պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության ապահովման տեսանկյունից:

Պետական իշխանության մարմինների միջև առաջացող վեճերն ըստ բնույթի անհրաժեշտ է դասակարգել իրավական և քաղաքական բնույթ ունեցող վեճերի: Այսպիսի դասակարգումն ունի ոչ միայն տեսական, այլ նաև գործնական կարևորություն, քանի որ իրավական և քաղաքական վեճերի լուծման ընթացակարգերը, դրանց բնույթից կախված, տարբեր են: Դրանով հանդերձ՝ իրավական և քաղաքական բնույթ ունեցող վեճերի միմյանցից հստակ տարանջատումը բավականին բարդ է, քանի որ առաջացող վեճերը կարող են ունենալ ինչպես իրավական, այնպես էլ քաղաքական բնույթի տարրեր: Նշվածը նկատի ունենալով՝ Վ. Կուդրյավցևը վեճը դիտարկում է երկու տեսանկյունից՝ նեղ և լայն. նեղ տեսանկյունից վեճի բոլոր տարրերն ունեն իրավական բնույթ, իսկ լայն առումով վեճը պետք է պարունակի առնվազն մեկ իրավական տարր¹¹:

Պետական իշխանության մարմինների բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ են այնպիսի մեխանիզմներ,

որոնցով միջոցով հնարավոր կլինի լուծել պետական իշխանության մարմինների միջև առաջացած վեճերը: Պետական իշխանության մարմինների միջև առաջացած վեճերի լուծման ընթացքում, կարծում ենք անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ մոտեցմամբ. առաջին՝ պետական իշխանության մարմինների միջև առաջացած իրավական բնույթի վեճերը պետք է լուծվեն բացառապես իրավական հարթության վրա՝ սահմանադրական կամ վարչական արդարադատության միջոցով, երկրորդ՝ պետական իշխանության մարմինների միջև առաջացած քաղաքական բնույթի վեճերը պետք է լուծվեն բացառապես քաղաքական հարթության վրա, իսկ այն դեպքում, երբ դրանք քաղաքական հարթության վրա չեն լուծվում և ստանում են իրավական բնույթ, այդ վեճերը նույնպես պետք է լուծվեն իրավական հարթության վրա:

Այսպիսով՝ պետական իշխանության մարմիններն իրենց գործունեության ընթացքում անընդհատ պայքար են մղում իրենց գործառույթների և լիազորությունների ընդարձակման ուղղությամբ, ինչի պատճառով պետական իշխանության մարմինների միջև առաջանում են վեճեր: Պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության ապահովման տեսանկյունից առանցքային կարևորություն ունի այնպիսի մեխանիզմների նախատեսումը, որոնք հնարավորություն կտան արդյունավետ կերպով լուծելու պետական իշխանության մարմինների միջև առաջացած տարբերակ վեճերը՝ այդ կերպ ապահովելով պետական իշխանության մարմինների միջև առկա սահմանադրական հավասարակշռությունը:



¹⁰ Տե՛ս А. Монгуш, Способы разрешения правовых конфликтов, «ВЕСТНИК», Социальные и гуманитарные науки, 2014/1, с. 166-169 հասանելի էր՝

http://www.tuvsu.ru/vestnik/sites/default/files/archives/2014_1/sposoby_razresheniya_pravovyh_konflikto.pdf

¹¹ Տե՛ս В.Худякова, Юридическая конфликтология, Саранск, 2001, с. 398.

ԱՐՄԱՆ ԱՏԵՓԱՆՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի ասպիրանտ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՅԱԶԱՅՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Պետության և իրավունքի տեսությունն ուսումնասիրող աշխատությունների դիտարկման շնորհիվ ակնառու է դառնում, որ պետության՝ որպես հասարակական երևույթի, էությունն այնպիսի «բազմաշերտ կորիզ» է, որը ներառում է փոխկապակցված բազմաթիվ արտաքին և ներքին կողմեր, որոնք ունիվերսալ ղեկավարող այդ համակարգին հաղորդում են որակական որոշակիություն: Դա, իր հերթին, բացահայտել՝ նշանակում է ընդգծել հասարակության մեջ դրա օբյեկտիվ անհրաժեշտությունը՝ հաստատելով հասարակության գոյության և զարգացման անհնարինությունն առանց պետության ձևավորման:

Իհարկե, կարելի է անդրադառնալ պետության ձևավորման բազմաթիվ թե՛ փիլիսոփայական, թե՛ սոցիալական տեսանկյուններին, սակայն սույն հոդվածի առարկան պետության՝ որպես հասարակության միավորման լրջագույն ձևի, այնպիսի ինստիտուտի, որպիսին է պետության գլուխը, իրական լիազորությունների բացահայտումն է:

Ուշադրության են արժանի առաջին անգամ իշխանության բաժանման սկզբունքի հեղինակների՝ անգլիացի Ջ. Լոքի և, հատկապես՝ ֆրանսիացի լուսավորիչ Շ.-Լ. Մոնտեսքյոյի պատկերացումները: Հատկապես վերջինս իր հանրահայտ «Օրենքների ոգու մասին» աշխատության մեջ շարադրել է հետևյալ մտքերը. «Եթե օրենսդիր և գործադիր իշխանությունները միացված լինեն մեկ դեմքում, ապա ազատություն չի կարող լինել, քանի որ հարկ է զգուշանալ, որ այդ սենատը կամ միապետը կստեղծի բռնապետական օրենքներ և այդ ձևով էլ կկիրառի դրանք: Չի լինի նաև ազատություն այն դեպքում, երբ դատական իշխանությունն անջատ

չլինի օրենսդիր և գործադիր իշխանություններից: Եթե դրանք միացված են, ապա քաղաքացիների կյանքը և ազատությունը կհայտնվեն իշխանության կամայականության մեջ, քանզի դատավորը կլինի օրենսդիրը: Եթե դատական իշխանությունը տարանջատված չէ գործադիրից, ապա հավանական է, որ դատավորը կդառնա կեղեքիչ»¹:

Թեև Մոնտեսքյոն միապետին վերապահում է գործադիր իշխանության գլխի գործառույթը՝ հիմք ընդունելով այն, որ գործադիր իշխանությունն առավել արդյունավետ է, եթե իրականացվում է միանձնյա իշխանական մարմնի կողմից, այդուհանդերձ, ինչպես ցույց են տալիս իրավունքի զարգացման միտումները, ոչ միշտ է պետական գլուխը հանդես գալիս որպես կառավարություն ղեկավար: Անկասկած՝ կան երկրներ, որտեղ պետական գլխի առջև է դրվում նաև գործադիր իշխանության ղեկավարման գործառույթը, օրինակ՝ ԱՄՆ: Սակայն պետության գլխի դերն իշխանության բաժանման սկզբունքում ոչ միշտ է դրսևորվում պարզ և որոշակի: Ժամանակակից բազմաթիվ երկրներում գործադիր իշխանության ղեկավարման գործառույթը վերապահված չէ պետության գլխին²: Այս իրավիճակում այդքան էլ ողջամիտ չէ պետության գլխին դիտարկել որպես գործադիր իշխանության ճյուղի մաս: Պետության գլխի իրավական կարգավիճակի վերաբերյալ հիմնախնդիրը կարող է լուծվել՝ առհասարակ ելնելով որոշակի սահմանադրական կարգից, սահմանադրության մեջ ամրագրված նրա լիազորություններից, ներպետական օրենսդրությունից, ինչպես նաև պետական ինստիտուտների գործառույթների իրականացման փորձից: Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 101 2017

¹ Монтескье Ш.Л. Избранные произведения. М., 1955. с. 290.
² Конституционное право зарубежных стран: учебник/ под общ. ред. М.В. Баглая, Ю.И. Лейбо и Л.М. Энтина.– М. Норма. 2010, с. 256.

հանգել, որ պետության գլխի տեղի և դերի, ինչպես նաև այս կամ այն իշխանության ճյուղին դրա անդրադարձի ապրիորի գնահատականն արդարացված չէ:

Սահմանադրաիրավական դոկտրինան բազմաթիվ պետությունների գլուխներին դիտարկում է որպես ազգային միասնականության երաշխավորի, ով ապահովում է միաժամանակ պետական իշխանության անընդհատությունը և կայունությունը, տարբեր ճյուղերի համագործակցությունը: Այդ իրողություններում պետության գլխի նույնացումը կամ միացումը որևէ իշխանության հետ կարող է խախտել իշխանությունների հավասարակշռությունը և, հետևաբար՝ աղավաղել իշխանության բաժանման սկզբունքը:

Ինչպես ցույց է տալիս պատմությունը՝ իրավունքի ձևավորման ժամանակագրության բազմաթիվ վկայություններ առավել առանձնահատուկ դեր են շնորհել պետության գլուխներին, թեպետ, բացարձակ իշխանության վտանգավորությունից ելնելով, ըստ էության, պահանջ է առաջացել սահմանափակել միապետի իշխանությունը:

Պետության գլխի իրավական կարգավիճակը և իրական դերն իշխանության իրականացման ընթացքում կախված է, բնականաբար, կառավարման ձևից և քաղաքական ռեժիմից: Այն պետություններում, որտեղ պետության գլուխն օժտված է նաև գործադիր իշխանությամբ, նա իրականացնում է իրական կառավարում, ձևավորում է քաղաքական ուղղությունը և ապահովում է դրա իրացումը: Խորհրդարանական կառավարման ձևերում, որը 2015 թվականի ՀՀ Սահմանադրության փոփոխությունների արդյունքով ներդրվեց նաև հայ իրականության մեջ, պետական գործերում անմիջական մասնակցություն, ըստ էության, չի ունենում, սակայն առերևույթ ազդեցություն է ունենում քաղաքական ընթացքներում, իսկ ճգնաժամային կամ արտակարգ իրավիճակներում իր միջամտությունը կարող է էապես ավելանալ:

Հետաքրքիր է, որ զարգացած երկրներից

շատերում միանձնյա պետության գլուխը միապետն է: Արևմտաեվրոպական երկրների գրեթե կեսը պահպանում է միապետական կառավարման ձևը (օրինակ՝ Մեծ Բրիտանիա, Բելգիա, Նիդերլանդներ, Դանիա, Շվեդիա, Նորվեգիա և այլն): Միապետի միանձնյա կառավարման ինստիտուտի պահպանումը բազմաթիվ երկրներում ունի առավելապես պատմական արժեք: Իսկ այդ ինստիտուտի պահպանման հարցում էական դերակատարություն ունեն պատմական սովորույթները, ազգային մշակույթը, ազգային իրավագիտակցությունը: Ավելորդ չէ ընդգծել, որ 2015 թվականի ընթացքում, իրավունքի գերակայության ինդեքսի որոշման արդյունքների համաձայն³ ամենից բարձր ամփոփ մակարդակ ունեցել է հենց վերը նշված սկանդինավյան երկրներում՝ 85-87%: ԱՄՆ-ում դա կազմում է 73 տոկոս, և երկիրը զբաղեցնում է 19-րդ տեղը: 102 երկրներից 62-ում այս ցուցանիշը 50 տոկոսից ցածր է: Պետք է նկատի առնել, որ նման ցուցանիշը համարվում է անբավարար արդյունք և վկայում է սահմանադրականության վտանգավոր դեֆիցիտի մասին⁴: Մարդու իրավունքների պաշտպանության մակարդակով ամենաբարենպաստ վիճակն առկա է Ֆինլանդիայում, Դանիայում, Նորվեգիայում, Շվեդիայում և Ավստրիայում՝ 87-91 տոկոս: Վերը նշված ուսումնասիրությունները թույլ են տալիս հասկանալ մի պարզ իրողություն, որ պետական քաղաքականությունը նպաստում է հանրության պահանջներին, իրենց հերթին՝ հանրության պահանջներն արտացոլում են իրավագիտակցության բարձր մակարդակ: Վերջինս արդեն ենթադրում է իրավական համակարգի գործողության բարձր արդյունավետության, հետևաբար՝ սահմանադրականության առկայության մասին: Սահմանադրական զարգացումների պատմությունն ինքնին սոցիումի ինքնաճանաչման պատմություն է՝ գիտակցված գոյի, ժամանակի մեջ իմաստավորված գոյակցության պատմություն: Համալիր գիտական հետազոտության և սահմանադրականության իրական վիճակի բազմազորոն գնահատման համար կարևոր է այն-

³ World Justice Project, Rule of Law Index 2015. The Index's conceptual framework and methodology were developed by Mark D. Agrast, Juan Carlos Botero, and Alejandro Ponce. E-mail: aponce@worldjusticeproject.org

⁴ Հարությունյան Գ.Գ./ Սահմանադրական մշտադիտարկում. Եր.: Նժար, 2016.– 108 էջ:

պիսի բնութագրիչների համադրումը, որպիսիք են իրավական պետության, ժողովրդավարական զարգացումների, ինչպես նաև սոցիալական բնութագրիչները և դրանց հիման վրա ամփոփ (ինտեգրալ) ցուցանիշի որոշումը⁵: Նման ցուցանիշի քանակական որոշակիությունը հնարավորություն կտա բացահայտելու սահմանադրականության ձևախեղումների նեղ տեղերը և իրականացնելու դրանց հաղթահարման ծրագրանպատակային քաղաքականություն⁶:

Բազմաթիվ սահմանադրությունների տեքստերում կարելի է նկատել, որ պետության գլուխը չի ներառվում և ոչ մի իշխանության ճյուղի մեջ կամ ներառվում է և՛ օրենսդիր, և՛ գործադիր կամ ուղղակի գործադիր իշխանության մեջ⁷: Առաջինի վառ օրինակն է Գերմանիայի Հիմնական օրենքը, որի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դաշնային նախագահը չի կարող լինել թե՛ գործադիր, թե՛ օրենսդիր մարմինների կազմում: Ի տարբերություն Հայաստանի Սահմանադրության սկզբնական տեքստի և արտասահմանյան բազմաթիվ երկրների սահմանադրությունների՝ 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքով ուղղակիորեն ամրագրվեց Հանրապետության Նախագահի կարգավիճակը՝ որպես պետության գլուխ: Այդ պատճառով «պետության գլուխ» հասկացությունը դադարեց լինել միայն պետական իրավունքի տեսության հասկացություն՝ դառնալով սահմանադրաիրավական: Յուրաքանչյուր կառավարող համակարգ ձևավորելիս պետական մարմինների կառուցվածքը ենթադրում է որոշակի գործառույթներ: Այս տեսանկյունից արդարացիորեն ընդգծել է նաև պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանը. «...Սահմանադրական ճարտարապետության գլխավոր խնդիրն առաջին հերթին գործառույթ-ինստիտուտ-լիազորություն շղթայում հավասարակշռության ապահովումն է⁸»: ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխու-

թյուններով ՀՀ Նախագահը շարունակում է հանդիսանալ պետության գլուխ, միևնույն ժամանակ՝ Սահմանադրությանը հետևելու պարտականությամբ: Վերը նշված նորմով սահմանված լիազորության բացահայտումը կարելի է գտնել՝ բացառապես ընկալելով ներկայումս ՀՀ Սահմանադրությամբ ՀՀ Նախագահի առջև դրված խնդիրների տեսանկյունից:

Այդուհանդերձ՝ իրավական համակարգն սկզբունքորեն պետք է բացառի իրավակարգավորման այնպիսի երևույթ, ինչպիսին է թերի ու տարակարծությունների տեղիք տվող, ինչպես նաև հակասական իրավական ակտերի ընդունումը: Սակայն որևէ երկրի իրավական համակարգ դեռևս ամբողջությամբ ձերբազատված չէ վերոհիշյալ թերություններից, իսկ արդի իրավաքաղաքական զարգացումների համատեքստում, երբ հարկ է լինում արմատապես ընդլայնել իրավակարգավորման շրջանակները և առավել հաճախ դիմել օրենսդրական փոփոխությունների, վիճակն էլ ավելի է վատանում⁹: Իրավաստեղծ գործունեության խութերը, ըստ իրավագետ Ա. Վաղարշյանի գնահատման, թելադրված են մի քանի գործոնով. «Իրավաստեղծ գործունեության ընթացքը ևս կարիք ունի մեթոդաբանական, տեսական ավելի բարձր, ընդգրկուն զինվածության, իրավաբանական ավելի բազմերանգ արտացոլման: Իրավաբանական ակտերի որակը և արդյունավետությունը մեծապես կախված են օրենսդիրների հատկապես իրավաբանական արհեստավարժությունից: Իրավակիրառ մարմինները, դատարանները կշահեին իրավունքի ընդհանուր տեսության իմացությունից: Իրավունքը գործողության մեջ դնելը անբաժան է դա լավ կամ ճիշտ հասկանալուց, իրավաբանական երևույթներն ամբողջական համատեքստում ըմբռնելուց»¹⁰:

Առկա իրավական մշակույթը խոչընդոտում

⁵ Նոյն տեղում, 93 էջ:

⁶ Арутюнян Г.Г. Конституционализм: уроки, вызовы, гарантии.– Киев: “Логос”, 2011.– с. 99-100.

⁷ Страшун А.Б. Конституционное (государственное) право зарубежных стран. Общая часть:– М.: Норма: Инфра-М, 2010, с. 687.

⁸ Հարությունյան Գ.Գ. Սահմանադրական մշտադիտարկում. Եր.: Նժար, 2016.– 112 էջ:

⁹ Գ. Դանիելյան, Իրավական որոշակիության, իրավունքի անալոգիայի (համանմանության) և իրավական ակտի մեկնաբանության փոխհարաբերության արդի հիմնախնդիրները, Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, №2 (20), 2016, էջ 1:

¹⁰ Ա. Վաղարշյան, Իրավունք հասկացության տեսամեթոդաբանական և գործնական նշանակությունը, Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, №3 (144), 2014, էջ 7:

է ոչ միայն մարդու իրավունքների պաշտպանության խելամիտ ընթացակարգերի ներդրումը, այլև օրենսդրության ողջամիտ զարգացումը: Այսպես՝ օրենսդրության գերխնդիրը ժամանակակից սոցիալ-քաղաքական զարգացումներին համահունչ իրավական լուծումներ առաջադրելն է, մինչդեռ զուտ խմբագրական բնույթի հարցադրումների վրա ոչ համարժեք ուշադրություն բևեռելը և ժամանակ վատնելը հանգեցնում են ներուժի փոշիացմանը, առաջնային են դառնում իրավական նորմի ոչ այնքան բովանդակային, որքան ձևական, խմբագրական հատկանիշները¹¹:

Որպես Հանրապետության Նախագահի կարևորագույն խնդիրներից մեկը՝ ՀՀ Սահմանադրության 123-րդ հոդվածը նախատեսել է Սահմանադրության պահպանմանը հետևելու պարտականությունը: Սահմանադրության պահպանմանը հետևելու այդ առաքելությունը Հանրապետության Նախագահը կարող է իրականացնել միայն այն դեպքում, եթե նա ինքը խստորեն հետևում է Սահմանադրության դրույթներին: Նման կապն իր արտացոլումն է գտել Հանրապետության Նախագահի երդման տեքստում, ըստ որի՝ նա երդվում է «անվերապահորեն կատարել Սահմանադրության պահանջները»: Հանրապետության Նախագահը Սահմանադրության պահպանման խնդիրն իրականացնում է իր կոնկրետ լիազորությունների միջոցով: Հանրապետության Նախագահի կարևորագույն լիազորությունը Սահմանադրական դատարանն դիմելն է՝ օրենքների, միջազգային պայմանագրերի, կառավարության որոշումների և այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցերով: Սահմանադրության պահպանմանը հետևելու՝ Հանրապետության Նախագահի գործառույթը ենթադրում է, որ նա վերջնական որոշում կայացնելու համար դիմում է Սահմանադրությամբ սահմանված իրավասու մարմնին՝ Սահմանադրական դատարանին: Ընդ որում՝ Սահմանադրական դատարանն դիմելու նախապայմանն այն չէ, որ Հանրապետության Նախագահն ինքն օրենքի կամ պայմանագրի սահմանադրականության առըն-

չությամբ կասկածներ ունենա: Հանրապետության Նախագահը կարող է դիմել այդ քայլին, եթե համարի, որ հասարակական կարծիքում արտահայտված կասկածներն անհրաժեշտ են դարձնում կոնկրետ խնդրի լուծումը Սահմանադրական դատարանի կողմից: Հանրապետության Նախագահի կողմից Սահմանադրության պահպանմանը հետևելու խնդրի իրականացման կարևոր ոլորտ է Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների ստորագրումը: Նա ոչ միայն կարող է, այլև պարտավոր է հրաժարվել ստորագրել այն օրենքները, որոնք, նրա կարծիքով, հակասահմանադրական են¹²: Վերը նշվածից պարզ է, որ Հանրապետության Նախագահը չունի Սահմանադրության պահպանման գործառույթ, ինչը միայն Սահմանադրական դատարանի առաքելությունն է, քանի որ միայն այդ մարմինն է իրավասու բոլորի, այդ թվում՝ Հանրապետության Նախագահի համապարտադիր կերպով որոշելու իրավական ակտերի սահմանադրականության հարցը: Հանրապետության Նախագահի դերն այն է, որ հետևի Սահմանադրության դրույթների պահպանմանը և դիմի Սահմանադրական դատարան՝ դրանց խախտման դեպքում: Բոլորովին էլ պատահական չէ, որ նա Սահմանադրական դատարանն դիմող սուբյեկտների շարքում ունի ամենամեծ լիազորությունները: Սահմանադրական դատարանն դիմելու լիազորությունը նպաստում է սահմանադրական վերահսկողության իրականացմանը, ինչը վստահորեն կարելի է փաստել, այդուհանդերձ՝ վերահսկողությունը ներկայումս իրականացվում է վերահսկողության օբյեկտի՝ Սահմանադրության հետ դիսկրետ համադրման եղանակով, որը, սակայն, ամբողջովին չի նպաստում սահմանադրականության դեֆիցիտի հաղթահարմանը, ներսահմանադրական ձևախեղումների բացահայտմանը կամ հասարակության մեջ սահմանադրական արժեքների ձևախեղված ընկալումների հաղթահարմանը: Տեսականորեն վերը նկարագրված խնդիրները վերհանող և լուծմանը նպաստող սուբյեկտը Հանրապետության Նախագահն է: Այդ նպատակով արդարացիորեն

¹¹ Хачатуров Р. Л. Аналогия в праве // «Вектор науки ТГУ», 2009, 131, №5 (8), էջ 130-131:

¹² Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. – Եր.: «Իրավունք», 2010, 550 էջ:

կիրառելի են, պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանի բազմաթիվ գիտական աշխատություններում ներկայացվող սահմանադրական մշտադիտարկման ինստիտուտի ներդրման պնդումները, որոնք, բացի վերը թվարկված խնդիրներից, կարող են ապահովել կառավարման սահմանադրականության համակարգային ապահովումը, օրենսդրության ոլորտում և իրավաստեղծ պրակտիկայում սահմանադրականության դեֆիցիտի հաղթահարումը և այլն: Ստացվում է՝ սահմանադրականության հաստատման հետ կապված՝ առկա են բազմաթիվ խնդիրներ, մինչդեռ ժամանակակից իրողությունում միայն սահմանադրական վերահսկողությունն է զորու չէ ամբողջովին ապահովելու սահմանադրականության բավարար մակարդակի հաստատումը: Այդ իրավիճակում առավել կարևոր դեր է ստանձնում պետության գլուխը: Նախագահը Սահմանադրության գերակայության ապահովման քաղաքական երաշխավորն է: Այդ նպատակով անհրաժեշտ է, մասնավորապես, իրական սահմանադրաիրավական բովանդակություն հաղորդել այնպիսի սահմանադրական դրույթների, ինչպիսիք են. «Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը» (տե՛ս Ֆրանսիա (հոդվ. 5), Լեհաստան (հոդվ. 126, կետ 2), Հայաստան (հոդվ. 123), «Նախագահը Սահմանադրության երաշխավորն է» (տե՛ս Ռուսաստանի Դաշնություն, հոդվ. 80, մաս 2), «Նախագահն ապահովում է... ժողովրդավարական ինստիտուտների բնականոն գործողությունը...» (Պորտուգալիա, հոդվ. 120), «...Նախագահն ապահովում է պետական մարմինների բնականոն գործունեությունը» (Սլովակիա, հոդվ. 101, մաս 1) և այլն: Իրավական

պետությունում երկրի Նախագահի հիմնական գործառույթը հատկապես հանգում է երկրում սահմանադրականության հետևողական զարգացումը երաշխավորելուն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ խնդրի լուծումը պահանջում է նաև համակարգված վերհանել, գնահատել և իրավական կառուցակարգերի միջոցով վերականգնել խախտված սահմանադրական հավասարակշռությունը, Նախագահը դառնում է հասարակության իմունային համակարգի սկզբունքային օղակը¹³: Դրանից ելնելով՝ սահմանադրորեն պետք է նախատեսել Նախագահի լիազորությունը մշտական սահմանադրական արտորոշում իրականացնելու առումով՝ հաշվի առնելով նաև իշխանության այլ ինստիտուտների գործառույթային լիազորությունները¹⁴: Որպես արդյունք՝ ստացվում է, որ պետության գլխի կարգավիճակը ժամանակի ընթացքում ենթարկվում է որոշակի տրանսֆորմացիայի, քանզի ի սկզբանե նա քաղաքականության արտաքին և ներքին ուղղությունների հաղորդողն էր, ապա ՀՀ իրականության մեջ ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների՝ 2018 թվականին ամբողջությամբ ուժի մեջ մտնելու պահից պետության գլուխն դառնալու է առավելապես վերքաղաքական կարգավիճակ ունեցող անձ, ում համապետական և համազգային շահերով կաշկանդված գործելու լիազորությունների իրականացման, այդ թվում՝ Սահմանադրության գերակայության ապահովման, երկրում սահմանադրականության հաստատման, գործառույթների երաշխավորման պայմաններում հանգեցվելու է ժողովրդավարության կարևորագույն չափանիշի ապահովմանը:



¹³ Հարությունյան Գ.Գ./ Սահմանադրական մշտադիտարկում.– Եր.: Նժար, 2016.– 81 էջ:
¹⁴ Конституционное правосудие, 2010, N4.– С. 28-42.

ԼԻԼԻԹ ՂԱԶԱՆՉՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ Փաստաբանական պալատի անդամ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի դոկտորանտ

**ԱՆՃԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՋՄԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Արդի պետության և իրավունքի տեսությունում և դրա բաղկացուցիչ մասը կազմող՝ անձի իրավական դրության տեսությունում առանձնացվում են անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների իրացման հետևյալ իրավաբանական երաշխիքները. 1) օրենսդրորեն ամրագրված՝ անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների սահմանների հստակեցումը, 2) այն իրավաբանական փաստերի սահմանումը, որոնց հետ կապված է իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ու պարտականությունների իրացումը, 3) անձի իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և պարտականությունների իրացման դատավարական-ընթացակարգային եղանակը, 4) արտոնություններն ու խրախուսման միջոցները, որոնք խթանում են անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի արդյունավետ իրականացումը¹:

1) Անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների սահմանների հստակեցումը:

Տվյալ դեպքում անհրաժեշտ է դիտարկել սուբյեկտիվ իրավունքների հստակեցումը, ինչը պայմանավորված է անձի, հասարակության և պետության միջև օրինականության և սահմանադրականության սկզբունքներով: Ակընհայտ է, որ անձի իրավունքների ոչ հստակ, թերի կամ երկակի իմաստով օրենսդրական սահմանափակումն անմիջականորեն խոչընդոտում է այդ իրավունքների ակտիվ իրա-

ցումը: Այդ պատճառով իրավաբանական գրականությունում իրավունքի սահմանների հստակեցումը, մի կողմից՝ իրավաբանական միջոց է այդ իրավունքների առավել լիակատար իրականացմանը համար, իսկ մյուս կողմից՝ իրավաբանական միջոց, որը կարող է կանխատեսել այդ իրավունքների ոտնահարումը: Միանգամայն իրավացի է Ի.Ս. Սամոշչենկոն՝ նշելով, որ օրենքով նախատեսված նպատակը կարող է ինքնուրույն ցուցիչ հանդիսանալ իրավունքի բովանդակության սահմանների համար: Ընդ որում՝ իրավունքի նպատակով է պայմանավորված այն նյութական արդյունքների ձեռքբերումը, որոնց ձգտում է հասնել իրավահարաբերության սուբյեկտն իր օրինական գործողություններով: Հետևաբար՝ ժողովրդավարական, իրավական պետությունում անձի կողմից իրավունքի իրացումն իր նպատակներին համապատասխան՝ հասարակությունում իրավաչափ վարքագծի համընդհանուր չափանիշ է և իրավունքի հիմնական սկզբունքներից մեկը: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածը սահմանում է իրավունքների և ազատությունների բովանդակության և դրանց իրացման համընդհանուր չափորոշիչ. «Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին»²: Նմանատիպ դրույթ է ամրագրված նաև ՌԴ Սահմանադրությունում. «Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրացումը չպետք է խախտի այլոց իրա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 101 2017

¹ Ст'я Самощенко И.С. О нормативно-правовых средствах регулирования поведения людей//Правоведение. 1977. №1. С. 38-39:
² Ст'я ՀՀ Սահմանադրություն (փոփոխ. 06.12.2015թ.), հոդվ. 41, <http://www.president.am/hy/constitution-2015/>,/ 01.08.2016/:

վունքները և ազատությունները»³: Ակնհայտ է, որ ժողովրդավարական, իրավական պետության Սահմանադրությունն ու օրենքներն անթույլատրելի են համարում այնպիսի իրավունքների և ազատությունների իրականացումը, որոնք հակասում են հասարակության, պետության, այլոց իրավունքներին, ազատություններին և օրինական շահերին: Ավելին՝ ճյուղային օրենսդրությունում անմիջականորեն նշվում է այն իրավունքների իրացման անհնարինության մասին, որոնք հակասում են իրենց բուն նպատակներին: Օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հոդվ. 12) համաձայն՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք իրականացվում են բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ, ինչպես նաև իրավունքն այլ ձևով չարաշահելը չի թույլատրվում⁴: Հարկ է նշել, որ *իրավական արգելքները*՝ սահմանելով որոշակի ակտիվ գործողություններ կատարելուց զերծ մնալու անհրաժեշտություն, պարտավորեցնում են ձեռնպահ մնալ որոշակի ակտիվ գործողություններ կատարելուց, ինչպես նաև արգելում են կատարել որոշակի ակտիվ գործողություններ (խախտել քաղաքացիների իրավունքները, չարաշահել իշխանությունը և այլն): Հետևաբար՝ դրանք հանդես են գալիս որպես յուրօրինակ իրավական միջոցներ, որոնց օգնությամբ սահմանվում են քաղաքական և անձնական իրավունքներից շատերի սահմանները:

Սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ իրավունքների բովանդակության սահմանները որոշվում են տարբեր իրավագործությունների համակցությամբ: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 41-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատա-

րությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը⁵: Այսինքն՝ անձն ազատ է դավանելու ցանկացած կրոն, կամ ընդհանրապես կարող է լինել աթեիստ: Այնուամենայնիվ, տվյալ ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ անձի իրավունքները գտնվում են միմյանց հանդեպ ուրուշակի ստորադասման և ենթակայության ներքո՝ իրավական նորմերի աստիճանակարգմամբ պայմանավորված: Այդ պատճառով անձի որոշ իրավունքների սահմանները կանխորոշվում են դրանցում առկա հստակեցնող նորմերի և այդ իրավունքների միջև գոյություն ունեցող կապերի միջոցով: Տվյալ եղանակը հաճախ կիրառվում է հիմնական իրավունքների, մասնավորապես՝ սոցիալ-տնտեսական, մշակութային իրավունքների ուսումնասիրության համատեքստում: Այսպես՝ աշխատանքային հարաբերությունների ոլորտում սահմանադրական իրավունքներն իրացվում են աշխատանքային իրավունքի նորմերով նախատեսված իրավունքների միջոցով, որոնց նյութական բովանդակությունը կախված է մի շարք գործոններից՝ տվյալ անձի մասնագիտական հատկանիշներից, արտադրության այն ոլորտից, որտեղ այդ սուբյեկտն աշխատում է, կլիմայական պայմաններից և այլն: Ավելին՝ այդպիսի ստորադասական կապերը կարող են գործել նաև ճյուղային իրավունքում:

Հետևաբար՝ անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի սահմանների հստակեցումը բխում է անձի այն իրավունքների և պարտականությունների միասնության սկզբունքից, որոնք արտահայտում են անձ-հասարակություն-պետություն փոխհարաբերությունների ներդաշնակությունը: Միևնույն ժամանակ՝ իրավաբանական պարտականությունները ոչ միայն բխում են իրավունքից, այլև

³ Տե՛ս Конституция РФ (с поп. от 21.07.2014г.), ч. 3, с. 17, <http://constrf.ru /skachat-krf/,/01.08.2016/>:

⁴ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրք, հոդվ. (05.05.1998թ.), <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1556&lang=arm/, /01.08.2016/>:

⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփոխ. 06.12.2015թ.), հոդվ. 41, <http://www.president.am/hy/constitution-2015/, /01.08.2016/>:

երաշխավորում են անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի գոյությունն ու դրանց իրացումը, քանի որ իրավունքն ինքնին անսահմանափակ չէ՝ օժտված է սահմաններով, որոնք չի կարելի անցնել: Հետևաբար՝ հիմք ընդունելով իրավաբանական արգելքների և պարտականությունների համակարգը՝ կարելի է դատել անձի կոնկրետ իրավունքների, ազատությունների և օրինական շահերի սահմանների և դրանց բովանդակության մասին: Քննարկվող թեմայի շրջանակներում ուշագրավ է Ն.Վ. Վիտրուկի և Ա.Վ. Միցկևիչի այն մոտեցումը, որի համաձայն՝ դատարանները, կայացված որոշումներով, չեն հստակեցնում իրավահարաբերության սուբյեկտների իրավունքները⁶: Եթե հետևենք տվյալ դիրքորոշմանն ու համարենք դա արդարացի, ապա անմիջականորեն կբախվենք դատական նախադեպի կիրառման անհարժեշտության ժխտմանը: ՀՀ Սահմանադրության 171 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է, որն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, ինչպես նաև՝

2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները⁷:

Հետևաբար՝ ապահովելով օրենքի միատեսակ կիրառությունն ու ճիշտ մեկնաբանությունը՝ Վճռաբեկ դատարանը ոչ միայն նպաստում է իրավունքի զարգացմանը, այլև անմիջականորեն իրականացնում է իրավաստեղծ գործունեություն՝ ուղղված մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումների վերացմանը: Վճռաբեկ դատարանը բողոքի հիման վրա օրենքով նախատեսված

դեպքերում և կարգով վերանայում է Վերաքննիչ և Վարչական դատարանների դատական ակտերը: Ավելին՝ Վճռաբեկ դատարանի ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման: Այնուամենայնիվ, անձն իր հիմնական իրավունքների, ազատությունների և օրինական պաշտպանության նպատակով կարող է դիմել միջազգային կառույցներին, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգը հիմնված է սուբսիդիարության վրա: Կոնվենցիայի անդամ պետությունների խնդիրն է ապահովել Կոնվենցիայի կատարումը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը միջամտում է միայն այն դեպքում, երբ Անդամ Պետությունները թերանում են իրենց պարտականությունների կատարման մեջ: Ընդ որում՝ Ստրասբուրգի կողմից վերահսկողությունը հիմնականում իրականացվում է անհատական գանգատների նկատմամբ, որոնք կարող են ներկայացվել Դատարանին Կոնվենցիայի անդամ պետությունների իրավասության ներքո գտնվող ցանկացած անհատական կամ իրավաբանական անձի կողմից, և այդ է պատճառը, որ գանգատ ներկայացնող պոտենցիալ դիմումատուների շրջանակը լայն է⁸: Կոնվենցիայի 34-րդ հոդվածը երաշխավորում է անհատական գանգատի իրավունքը՝ անձին ընձեռելով իրական հնարավորություն՝ միջազգային մակարդակում իրականացնելու իրավական գործընթաց: Հարկ է նշել, որ, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Դատարանը կարող է գործը քննության ընդունել, միայն երբ սպառվել են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները»⁹: Այնուամեն-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 101 2017

⁶ Տե՛ս Витрук Н.С. Общая теория правового положения личности. М., 2009. с. 120-125:
⁷ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփոխ. 06.12.2015թ.), հոդվ. 41, <http://www.president.am/hy/constitution-2015/>,/ 01.08.2016/:
⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ընդունելության չափանիշների վերաբերյալ գործնական ուղեցույց. Եր., 2011, էջ 7:
⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական Կոնվենցիա՝ փոփոխված 11-րդ և 14-րդ Արձանագրություններով, Երևան, /<http://www.echr.coe.int/>,/12.02.2016/:
 Տե՛ս Մարտիրոսյանի ընդդեմ Հայաստանի №23341/06, 05/02/2013, §43-49, [http://www.agent.echr.am/judgments/judgmentsanddecisionsin respectofarmenia.html/12.02.2016/](http://www.agent.echr.am/judgments/judgmentsanddecisionsinrespectofarmenia.html/12.02.2016/):

նայնիվ, Դատարանն իր որոշումներում բազմիցս նշել է, որ սպառել միջոցները՝ նշանակում է. 1) խախտումը բողոքարկել դատական կարգով՝ սպառելով դատական պաշտպանության՝ օրենքով սահմանված բոլոր ատյանները, 2) Դատարանի առջև բարձրացնել այն հարցերը, որոնք բարձրացվել են ՄԻԵԴ-ի գանգատում¹⁰: Այնուամենայնիվ, սպառման ենթակա են այն միջոցները, որոնք արդյունավետ են, իրականում գոյություն ունեն և պրակտիկայում կիրառվում են: Կարիք չկա սպառելու այն միջոցը, որտեղ պետական մարմինը կամ պաշտոնատար անձը դիմումն ընդունելու կամ չընդունելու հարցում ունի հայեցողություն¹¹: Միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի համաձայն՝ գոյություն ունեն հատուկ հանգամանքներ, որոնց դեպքում դիմումատուն ազատվում է ներպետական իրավական պաշտպանության միջոցներից օգտվելու պարտականությունից¹²: Կանոնը կիրառելի չէ նաև այն դեպքում, երբ առկա է այնպիսի ադմինիստրատիվ պրակտիկա, որի ժամանակ Կոնվենցիայի հետ անհամատեղելի գործողություններն ունեն շարունակական բնույթ, և պետական մարմինների կողմից նկատվում է հանդուրժողականություն: Այս պարագայում միջոցը դառնում է ապարդյուն կամ անարդյունավետ¹³: Այն դեպքերում, երբ դիմումատուին պարտադրվում է օգտագործել որևէ կոնկրետ միջոց, որը ողջամիտ չէ պրակտիկայում և առաջացնում է Կոնվենցիայի 34-րդ հոդվածով նախատեսված անհատական գանգատի իրավունքի իրականացման անհամաչափ խոչընդոտ, Դատարանը եզրակացրել է, որ դիմումատուն ազատվում է սպառման պահանջից¹⁴: Դատարանը նշել է,

որ դիմումատուից պահանջվող միջոցի օգտագործումն անարդյունավետ է, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից դիմումատուի նկատմամբ նշանակվել է տուգանք վերաքննիչ բողոքի առնչությամբ՝ այն դեպքում, երբ չի արձանագրվել ընթացակարգային որևէ չարաշահում կամ խախտում¹⁵: Իրավական պաշտպանության ներպետական միջոցներն սպառելու կանոնի նպատակն է հնարավորություն տալ ներպետական մարմիններին, մասնավորապես՝ դատարաններին, կանխելու կամ վերականգնելու Կոնվենցիայի ենթադրյալ խախտումները: Դա հիմնված է 13-րդ հոդվածում արտացոլված այն գաղափարի վրա, որի համաձայն՝ ներպետական իրավական համակարգը պետք է նախատեսի արդյունավետ միջոց Կոնվենցիայի իրավունքների պաշտպանության համար: **Սրանում է Կոնվենցիոն մեխանիզմի սուբսիդիարության բնույթը**¹⁶: Դա գործում է՝ Կոնվենցիոն դրույթները ներպետական իրավունքի մեջ կիրառելու պարագայից անկախ (**Eberhard and M. v. Slovenia**): Վերջերս Դատարանը վերահաստատել է, որ Կոնվենցիայի համաձայն՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման կանոնը պաշտպանության համակարգի գործունեության անփոխարինելի մասն է, և սա հիմնական սկզբունք է¹⁷:

2) Իրավունքների և պարտականությունների իրականացման համար շատ դեպքերում անհրաժեշտ է, որ իրավունքի նորմերը մատնանշեն այն իրավաբանական փաստերը, որոնց հետ կապված է այդ իրավունքների և պարտականությունների անցումն անմիջական իրացման կամ կիրառման փուլ: Ուստի **իրա-**

¹⁰ Տե՛ս Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի, № 8088/05, 10/04/2012 §95-96; Մելտեքս ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի, №32283/04, 17/06/2008, §94-98, <http://www.agent.echr.am/judgments/jugmentsanddecisionsinrespectofarmenia.html//12.02.2016/>:
¹¹ Տե՛ս Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի, № 31237/03,02/12/2008, §55-59; Գալստայանն ընդդեմ Հայաստանի №26986/03, 15/11/2007 §37-42, <http://www.agent.echr.am/judgments/jugmentsanddecisionsinrespectofarmenia.html//12.02.2016/>:
¹² Մանրամասն տե՛ս Sudre F., Margunnaud J.-P., Andriantsimbazovina J., Gouttenoire A., Levinet M. Les grands arret de la Cour Europnne des Droits de l'Homme. 2e ed.mise n jour. 2004.
¹³ Տե՛ս Aksoy v. Turkey, § 52 // Sudre F., Margunnaud J.-P., Andriantsimbazovina J., Gouttenoire A., Levinet M. Les grands arret de la Cour Europnne des Droits de l'Homme. 2e ed.mise n jour. 2004. P. 110-111.
¹⁴ Տե՛ս Veriter v. France, §27; Gaglione and Others v. Italy, § 22, <http://www.echr.coe.int./12.02.2016/>.
¹⁵ Տե՛ս Prencipe v. Monaco, § 95-97; <http://www.echr.coe.int./12.02.2016/>.
¹⁶ Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական Դատարանի ընդունելության չափանիշների վերաբերյալ գործնական ուղեցույց. Եր., 2011, էջ 15-16:
¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 17:

վաբանական փաստերի օրենսդրորեն ամրագրման բացակայությունն անհնարին է դարձնում անձի կողմից այդ իրավունքների և պարտականությունների իրացումը: Հետևաբար՝ իրավաբանական փաստերն իրավունքի նորմերով նախատեսված հանգամանքներն են, որոնց վրա են հիմնված անձի կամ իր օրինական ներկայացուցիչների կողմից իրավունքների, ազատությունների և պարտականությունների օգտագործման, տիրապետման կամ տնօրինման գործընթացի ծագման, փոփոխման և դադարեցման առանձնահատկությունները, ավելին՝ իրավաբանական անձի նյութական և դատավարական իրավունքների համակարգով միջնորդավորված՝ ինքնուրույն տարրերը¹⁸: Իրավաբանական փաստեր են համարվում նաև իրավունքների և ազատությունների իրականացման համար անհրաժեշտ իրավունքի նորմերի կիրառման ակտերը: Իրավաբանական փաստերը, որպես կանոն, միջնորդավորվում են փաստաթղթերով:

3) Անձի իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և պարտականությունների իրացման դատավարական եղանակը (ձևը) ընդգրկում է անձի կողմից իր իրավունքների իրականացման ու պարտականությունների կատարման օրենսդրորեն ամրագրված որոշակի կարգ: Մի շարք իրավունքների իրացման դեպքում անձն ինքնուրույն է որոշում դրանց իրացման և իրականացման ընթացակարգը: Այդպես են իրականացվում անձի անձնական և քաղաքական իրավունքները: Դրանցից են խոսքի ազատությունը, մտքի, խղճի և կրոնի ազատությունը, որտեղ օրենսդրորեն ամրագրված չէ դրանց իրացման գործընթացը: Ուստի իրավունքների և պարտականությունների նմանատիպ իրացումը կարելի է անվանել «նախաձեռնողական»: Այն դեպքում, երբ օրենքը նախատեսում է անձի կողմից իր իրավունքների և պարտականությունների իրացման կարգն այս կամ այն աստիճանի որոշակիությամբ, խոսքը դրանց իրացման իրա-

վական-դատավարական ձևի մասին է: Այսինքն՝ օրենքը սահմանում է իրավունքների և պարտականությունների իրացման ընթացակարգում սուբյեկտի գործողությունների հստակ հաջորդականությունն ու պարտավոր անձանց գործողությունների բովանդակությունը, որոնք ուղղված են իրավունքի օգտագործմանն ու պարտականությունների ամբողջական և հրստակ կատարմանը: Իրավակիրառ գործընթացն իր բոլոր տեսակներով (իրավունքի նորմի դիսպոզիցիան և սանկցիան կիրառելով) միշտ օժտված է որոշակի դատավարական-ընթացակարգային ձևերով: Այդպիսի դատավարական-ընթացակարգային ձևի օրինակ է կենսաթոշակի իրավունքի իրացումը, որտեղ, բացի սահմանված կարգով կենսաթոշակի տարիքին հասած անձի դիմումից, անհրաժեշտ է նաև կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող համապատասխան մարմնի՝ կենսաթոշակի կոնկրետ տեսակի և չափի վերաբերյալ կայացված ակտի առկայությունը¹⁹: Հետևաբար՝ կայացված ակտի կիրառումը, իրացումը տվյալ դեպքում թոշակի իրավունքի իրացումն են:

Հարկ է նշել, որ անձի իրավունքների և ազատությունների իրացման դատավարական-ընթացակարգային եղանակի կիրառման շեշտադրումն անչափ կարևոր է այն դեպքերում, երբ այդ ընթացակարգը ոչ միայն կախված է իրավունք կրող սուբյեկտից, այլև այն պետական մարմիններից, հասարակական կազմակերպություններից, որոնց հետ կոնկրետ իրավահարաբերության շրջանակներում համագործակցելով՝ անձը հասնում է իրավունքների և ազատությունների իրացմանը: Հիմնականում դա վերաբերում է անձի այն իրավունքներին, ազատություններին և օրինական շահերին, որոնք անմիջականորեն շոշափում են հասարակության, կոլեկտիվի, պետության շահերը, օրինակ՝ ընտրական իրավունքը և հանրաքվեին մասնակցելու իրավունքը, հավաքների ազատությունը, կարծիքի արտահայտման ազատու-

¹⁸ Մանրամասն տե՛ս Исаков В.Б. Фактический состав в механизме правового регулирования: Автореф. дисс. ... канд. юрид. наук. Свердловск, 1975.; Реутов В.П. К вопросу о секундарных правомочиях в советском праве//Государство, право, законность. Пермь, 1972; Рожкова М. А. Теории юридических фактов гражданского и процессуального права: понятия, классификации, основы взаимодействия. Дисс. док. юрид. наук. Москва, 2010.

¹⁹ Մանրամասն տե՛ս ՀՀ օրենք «Պետական կենսաթոշակի մասին» (ընդ. 22.12.2010թ.), <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=4008/ /01.08.2016/>:

թյունը, մասնավորապես՝ մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ դատավարական-ընթացակարգային եղանակի իրավական կարգավորման բացակայությունը խոչընդոտում, իսկ որոշ դեպքերում նաև անհնարին է դարձնում անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների իրացումը:

Իրավունքների և պարտականությունների իրացման ամբողջականությունը, արագությունն ու արդյունավետությունը, հատկապես այն դեպքերում, երբ անհրաժեշտ է անձանց և պետական իշխանության մարմինների կամ հասարակական կազմակերպությունների համագործակցությունը, մեծապես որոշվում են այն հանգամանքով, թե որքան նպատակահարմար են ընտրված դատավարական եղանակն ու դրա կարգավորումը²⁰:

Ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետությունում անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների իրացման դատավարական-ընթացակարգային եղանակները պետք է լինեն պարզ, արդյունավետ և գործուն: Այդ պատճառով անձի իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և պարտականությունների իրացման արդի հիմնական միտումներից մեկը պետք է լինի դրանց իրացման կարգավորվածությունը, դատավարական երաշխիքների կատարելագործումն ու հզորացումը, ինչպես նաև ավելի հարմար, պարզ և գործուն դատավարական-ընթա-

ցակարգային ձևերի ստեղծումը: Այդ առաջարկները վերաբերում են անձի բոլոր իրավունքներին և ազատություններին, այդ թվում՝ հիմնական (սահմանադրական) իրավունքներին և ազատություններին, և հատկապես այնպիսիներին, որոնց իրացումը կապված է պետական մարմինների գործունեության հետ:

4) Արտոնություններն ու խրախուսման միջոցները՝ որպես անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի արդյունավետ իրացման խթաններ:

Արտոնություններն ու խրախուսման միջոցները խթան են անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի արդյունավետ իրացման համար: Հարկ է նշել, որ անձի իրավական դրության տեսությունում տվյալ իրավական երաշխիքի տեսակը չի ենթարկվել պատշաճ ուսումնասիրության: Ճյուղային իրավաբանական գիտություններում (վարչական իրավունքում) արտոնություններն ու խրախուսումները դիտարկվում են որպես անձի իրավունքների հատուկ տեսակ:

Վերոգրյալի հիման վրա կարող ենք փաստել, որ անձի իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և պարտականությունների հիմնական երաշխիքներն այն ընդհանուր պայմաններն ու իրավաբանական միջոցներն են, որոնք տվյալ պետությունում հնարավորություն են ընձեռում անձին փաստացի իրականացնելու հիմնական իրավունքները, բավարարելու շահերը և հուսալիորեն պաշտպանելու դրանք տարաբնույթ ոտնձգություններից:



²⁰ Стѣи Горшенев В.М. Способы и организационные формы правового регулирования в социалистическом обществе. М., Юрид. лит. 1972. С. 20-22.

ԿԱՐԵՆ ԱՄԻՐՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ¹

**ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՏՐ ԱՆՁԱՆՉ
ՀԱՆՐԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Պետական իշխանության և պաշտոնատար անձանց հանրային-իրավական պատասխանատվության հետ կապված հարցերն արդի ժամանակաշրջանում առավել քան երբևէ արդիական են դառնում՝ կոչված լինելով ապահովելու իշխանությունների տարանջատման և հավասարակշռման սկզբունքը: Ինչպես նշվում է. «...Աշխարհի բազմաթիվ պետություններում վերջին 20-30 տարիներին կատարված սահմանադրական փոփոխությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ...ամրապնդվում են սահմանադրական պատասխանատվության ուժեղացման պահանջները²»: Այս համատեքստում առաջանում է նաև այն հարցադրումը, թե պետական իշխանության հանրային-իրավական պատասխանատվությունը պատասխանատվության իր տեսակի մեջ է ներառվում: Մինչ այսօր դեռևս առկա է այն տեսակետը, որ պետական իշխանության հանրային-իրավական պատասխանատվությունը քաղաքական պատասխանատվություն է³: Ճիշտ է՝ քաղաքականությունն օրգանապես կապված է իրավունքի և պետության՝ որպես ինստիտուցիոնալիզացված իշխանության հետ⁴, սակայն

կարծում ենք, որ պետական իշխանության հանրային-իրավական պատասխանատվությունն ընդգրկում է միայն իրավական պատասխանատվությունը, և պատասխանատվության քաղաքական, բարոյական տեսակները ներառվում են ոչ թե հանրային-իրավական, այլ՝ հանրային պատասխանատվության մեջ:

Իրավական պատասխանատվությունը դասակարգվում է տարբեր տեսակների՝ կախված այն հանգամանքից, թե ի՞նչ է տարբերակման չափանիշը: Այսպես, ըստ տիպի՝ իրավական պատասխանատվությունը լինում է հանրային-իրավական և մասնավոր-իրավական: Այսպիսի դասակարգման հիմքում ընկած է այն գաղափարը, որի համաձայն՝ մասնավոր իրավունքն արտահայտում է մասնավոր շահերը, իսկ հանրայինը՝ համապետական (հանրային)⁵: Տեսական նյութի ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ հանրային-իրավական եզրույթի, հանրային-իրավական պատասխանատվության վերաբերյալ տեսական աշխատանքներն այդքան էլ շատ չեն, դրանցում հիմնականում հանրային-իրավական պատասխանատվությանը հատվածական է անդրադարձ կատարվում⁶:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 101 2017

¹ Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Գ. Հարությունյան: Էլ. փոստ՝ amiryankaren@gmail.com
² Տե՛ս Арутюнян Г. Г., Логика развития системы конституционного правосудия: опыт и перспективы, // Альманах: Конституционное правосудие в новом тысячелетии, Ереван, 2002, էջ 27:
³ Տե՛ս Виноградов В. А., Актуальные проблемы конституционно-правовой ответственности // Законодательство: право для бизнеса, 2002, №10, էջ 63:
⁴ Տե՛ս Forsthoft E., Der Staat dr Industriegesellschaft. Munchen, 1971, Merten D. Rechtsstaat und Gewaltmonopol, Tubingen, 1975.
⁵ Տե՛ս Красс В.И. Конституционные критерии юридической ответственности // Конституционное и муниципальное право, 2006, №4, էջ 43:
⁶ Տե՛ս Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն-1 (դասախոսություններ), Երևան, 2013, էջ 188, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունք, գիրք առաջին, դասագիրք բուհերի համար, Երևան 2016, էջ 143, Матейкович М.С. Конституционные основы взаимоотношений органов публичной власти // Государство и право, 2007, №3, էջ 14, Бойцова В.В., Бойцова Л.В. Ответственность государства за действия должностных лиц: публично-правовая или частноправовая? // Правоведение, 1993, №1, էջ 72-80, Ш. А. Александрович, Публичная ответственность государственной и муниципальной власти: общетеоретический аспект /Теория и история права и государства, история учений о праве и государстве, Юридическая наука, № 1, 2015, Краснов М.А. Публично-правовая ответственность представительных органов за нарушение закона, Государство и право, 1993. №6, էջ 46-56:

Որոշ հեղինակներ այդ եզրույթն օգտագործում են իրենց այլ ձևակերպումների մեջ՝ առանց հստակեցնելու հանրային-իրավական եզրույթի իրենց ընկալումը⁷: Կարծում ենք՝ պատասխանատվությունը կոչվում է հանրային, քանզի առաջանում է հանրային իրավահարաբերությունների ոլորտում՝ սահմանադրական, քրեական, վարչական, որոշակիորեն նաև կարգապահական: Իսկ այն պարագայում, երբ պետությունն իրավահարաբերություններին մասնակցում է որպես մյուս մասնակիցների հետ հավասարազոր սուբյեկտ, երբ այդ հարաբերությունն առաջանում է մասնավոր իրավահարաբերությունների ոլորտում, այդպիսի պատասխանատվությունն անվանվում է մասնավոր-իրավական, մասնավորապես՝ քաղաքացիական պատասխանատվությունը:

Հանրային-իրավական պատասխանատվություն եզրույթն առաջ է քաշել Ումնովան՝ հիմնավորելով պետական իշխանության կազմակերպման և գործունեության շնորհիվ կիրառվող պատասխանատվության ձևերի և միջոցների համակարգման անհրաժեշտությամբ: Իր օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմից հանրային-իրավական պատասխանատվությունը ներառում է ոչ միայն սահմանադրական իրավունքի, այլև վարչական, ֆինանսական, բնապահպանական և իրավունքի այլ ճյուղերի կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունները⁸: Ըստ նրա՝ այս պատասխանատվությունը տարբերվում է պատասխանատվության մյուս ձևերից այնքանով, որ ներառում է պատասխանատվության բարոյական, քաղաքական և իրավական միջոցները, և պատասխանատվության սուբյեկտներն այդ պատասխանատվությունը կրում են իշխանության հիմնական աղբյուրի՝ քաղաքացու, ժողովրդի, բնակչության առջև⁹: Այսպիսի մեկ այլ տեսակետի համաձայն՝ հանրային-իրավական պատասխանա-

տվություն նշանակում է հանրային իշխանության պատասխանատվություն հասարակության, բնակչության առջև, որի հետ իշխանությունը գտնվում է անընդմեջ, մշտական կապի մեջ և կրում է որոշակի պարտականություններ, որոնց կատարումն ապահովվում է նաև բացասական իրավական հետևանքներ կիրառելու վտանգով¹⁰: Այսինքն՝ այս հարցադրումների շուրջ որոշակի հետազոտություն կատարած բոլոր տեսաբանները հանրային-իրավական պատասխանատվություն եզրույթի մեկնաբանման հիմքում դնում են ոչ թե դրա հիմքում ընկած հարաբերության հանրային լինելու հանգամանքը, այլ լոկ այն, որ պետությունն իր պատասխանատվությունը կրում է հանրության, հասարակության առջև: Այսինքն՝ առկա է այն մոտեցումը, որ հանրային-իրավական պատասխանատվությունը ենթադրում է պատասխանատվություն միայն հանրության առջև¹¹:

Մենք այս տեսակետին համամիտ չենք և այս առումով էական ենք համարում նշել, որ, այո, պետական իշխանությունը պատասխանատվություն է կրում հանրության առջև, քանի որ իշխանությունն ստացել է հենց ժողովրդից, և հետևաբար՝ պետք է կոչված լինի իրացնելու հանրային կամքը, նպատակներն ու հույսերը, ապահովի և պաշտպանի մարդու իրավունքներն ու ազատությունները, օրինական շահերը: **Սակայն պետական իշխանության հանրային-իրավական պատասխանատվությունը չի սահմանափակվում միայն հանրության առջև պատասխանատվությամբ կամ, նույնիսկ կարող ենք ասել, որ ոչ բոլոր դեպքերում է, որ պատասխանատվությունը հենց ժողովրդի առջև է լինում: Այստեղ խոսքը վերաբերում է ժողովրդի առջև պատասխանատվության նեղ և լայն տեսակներին: Երբ դրական պատասխանատվության հասցեատերը և նեգատիվ պատասխանատվության**

⁷ Տե՛ս Ապիյան Ն. Ա., Եսայան Ա. Կ., Իրավունքի տեսության հիմնահարցեր, ԵՊՀ, 2013թ., էջ 103, Ռ. Վարդանյան, Իշխանությունների բաժանման հայեցակարգի շուրջ, Դատական իշխանություն, սեպտեմբեր-հոկտեմբեր, 2015, 9-10, (195-196), էջ 20-27, Гумашвили Л.Э. К вопросу о федеративной ответственности и ее аспектах на примере решения «чеченского кризиса» // Конституционное и муниципальное право, 2010, №2, էջ 51-52:

⁸ Տե՛ս Умнова И. А., Конституционные основы современного российского федерализма, М., 2000, էջ 219-220:

⁹ Տե՛ս Романова В. В., Юридическая ответственность государства, Юридическая наука и правоохранительная практика 3 (37) 2016, էջ 25:

¹⁰ Տե՛ս Червонюк В. И., Конституционное право России: Учебник для вузов. – 2-е изд., доп. и перераб., Ростов-на-Дону, 2010, էջ 176-177:

¹¹ Տե՛ս Умнова И.А. Конституционные основы современного российского федерализма. М., 2000, էջ 233-234:

Ենթարկողն անմիջապես հասարակությունն է, ժողովուրդը, գործում է ժողովրդի առջև պատասխանատվության նեղ տեսակը, իսկ բոլոր այն դեպքերում, երբ ժողովրդի առջև պատասխանատվությունը միջնորդավորվում է որևէ կերպ, առկա է ժողովրդի առջև պատասխանատվության լայն տեսակը: Խոսքը վերաբերում է իշխանությունների տարանջատման սկզբունքից բխող պատասխանատվությանը: Հանրային իշխանության մարմինները փոխադարձ պատասխանատվություն են կրում իրար առջև՝ ուղղված հանրային իշխանության հավասարակշռման ապահովմանը: Վերջինիս դրսևորում է, մասնավորապես, այն, երբ սահմանադրական արդարադատության մարմինն իրավական որևէ դրույթ ճանաչում է սովյալ երկրի Սահմանադրությանը հակասող և անվավեր: Այս պարագայում օրենսդիր մարմինը պատասխանատվությունը կրում է ժողովրդի առջև՝ օրենսդիր իշխանությունն իրականացնել Սահմանադրությանը և իրավունքի գերակայության սկզբունքին, ժողովրդավարական, իրավական պետության արժեքներին համահունչ, սակայն ոչ թե անմիջականորեն, այլ՝ սահմանադրական արդարադատության մարմնի միջոցով: Այս հանգամանքն ինքնին բացասական երևույթ չէ, իրացվում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման համատեքստում, և հանրությունը, այնուամենայնիվ, թեկուզ և այս պարագայում արդեն անուղղակիորեն, սակայն հանրային վերահսկողության, քաղաքացիական հասարակության միջոցով մասնակցում է հանրային-իրավական պատասխանատվության գործընթացին:

Հանրային-իրավական պատասխանատվության շրջանակներում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում պաշտոնատար անձանց պատասխանատվությունը՝ այն մասով, որով նրանք հանդես են գալիս որպես պետաիշխանական լիազորությունների կրողներ և հանրային իրավահարաբերությունների մասնակիցներ: Պետությունն իր իշխանությունն

ինքնըստինքյան չի իրականացնում, այլ դա իրացվում է պետության քաղաքացիների միջոցով՝ այն քաղաքացիների, ովքեր օժտված են պետաիշխանական լիազորություններով: Ինչպես արդարացիորեն նշվում է՝ պաշտոնատար անձի կողմից մարդու և քաղաքացու իրավունքների խախտումը հենց պետության հակաիրավական արարքն է, քանի որ նա ձևավորում է իր ապարատը, ընտրում է կադրեր, վերահսկում է նրանց մասնագիտական պիտանելիությունը և այլն¹²: Պաշտոնատար անձ եզրույթն օրենսդրության և իրավաբանական գրականության մեջ օգտագործվում է վաղուց, և, դրանց ուսումնասիրությունը վկայում է, որ առկա են տարբեր մեկնաբանություններ այդ առնչությամբ: Նշվում է, որ պաշտոնատար անձ է համարվում իշխանության ներկայացուցչի գործառույթները մշտապես կամ ժամանակավորապես իրականացնող անձը կամ կազմակերպական-կարգադրիչ, վարչատնտեսական պարտականություններ կատարող, կամ հատուկ լիազորությամբ գործող անձը¹³: Իրավունքի տարբեր ճյուղերի շրջանակներում պաշտոնատար անձ եզրույթը տարբեր կերպ է ընկալվում և մեկնաբանվում: Պաշտոնատար անձ եզրույթը հանդիպում է, մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքում¹⁴: Օրենսգրքի 308-րդ հոդվածում տրվում է պաշտոնատար անձ հասկացությունը, սակայն միաժամանակ արձանագրվում է, որ այդ հասկացությունը կիրառելի է միայն քրեադատավարական հարաբերությունների ոլորտում պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունները կանոնակարգող 29-րդ գլխի շրջանակներում: Իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում¹⁵ չի տրվում պաշտոնատար անձ հասկացությունը: Այս հարցի շուրջ տարբեր երկրների փորձի ուսումնասիրությունը նույնպես վկայում է, որ պաշտոնատար անձ եզրույթն իր ամրագրումն է գտել նաև դրանց օրենսդրության մեջ¹⁶: Սակայն, միաժամանակ, օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բացա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 101 2017

¹² Տեն Радько Т.Н. Теория государства и права: Учебное пособие.– М.: Российская академия адвокатуры, 2001, էջ 88:
¹³ Տեն Ռ. Հակոբյան, Սահմանադրական պատասխանատվության հիմնախնդիրները (մենագրություն), Երևան, 2008, էջ 294:
¹⁴ Տեն ՀՀ քրեական օրենսգրք (18.04.2003թ., ՀՕ-528-Ն):
¹⁵ Տեն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրք (06.12.1985թ.):
¹⁶ Տեն, մասնավորապես՝ Уголовный кодекс Российской Федерации от 13.06.1996 № 63-ФЗ // СЗ РФ, 1996, № 25:

կայում է պաշտոնատար անձ եզրույթի միասնական, ընդգրկուն բնորոշում, որից հնարավոր կլիներ բացահայտել նաև այդ եզրույթի հատկանիշները: Պաշտոնատար անձ եզրույթին անդրադարձ է կատարվում նաև միջազգային իրավական փաստաթղթերում, մասնավորապես՝ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 2-րդ հոդվածում¹⁷: Իսկ ՌԴ Գերագույն դատարանի պլենումի մի որոշման համաձայն՝ պաշտոնատար անձինք են նրանք, ովքեր պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցնում են պաշտոններ, դատական հարկադիր ծառայության պաշտոնատար անձինք, դատախազության պաշտոնատար անձինք և պետական վերահսկողություն իրականացնող մարմինների պաշտոնատար անձինք¹⁸:

Կարծում ենք՝ պաշտոնատար անձ եզրույթն իրավական ձևակերպման անհրաժեշտություն ունի, քանի որ հստակ կդառնա այն անձանց շրջանակը, ովքեր կհամարվեն պաշտոնատար անձ, ինչն էլ իր հերթին կարող է նպաստել նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը: Առաջարկում ենք օրենսդրության մեջ, մասնավորապես՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում սահմանել պաշտոնատար անձ եզրույթը:

Կարծում ենք, որ պաշտոնատար անձի պատասխանատվությունը ենթադրում է պետաիշխանական լիազորություններից բխող պատասխանատվություն և ունի մի շարք հատկանիշներ: Այսպես՝ պաշտոնատար անձը՝

- մշտական, ժամանակավոր կամ հատուկ կարգավիճակով պետական կամ համայնքային, այսինքն՝ հանրային ծառայություն կատարող անձն է,
- օժտված է որոշակի պետաիշխանական լիազորություններով, հարկադրանք կիրառելու, հսկիչ-վերահսկիչ իրավասությամբ,

- ունի ծառայությամբ պայմանավորված իրավունքներ, պարտականություններ,
- կարող է ընդունել իրավական ակտեր՝ ուղղված իր գործառույթների իրացմանը, որոնք պարտադիր են այս ակտի գործողության շրջանակի մեջ ներառվող բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց համար,
- կոչված է հարգելու և պաշտպանելու մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները,
- հանրային-իրավական պատասխանատվության սուբյեկտ է (կրում է դրական պատասխանատվություն, իսկ իր պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ նեգատիվ պատասխանատվություն):

Հանրային-իրավական պատասխանատվությունը, դիտարկելով դրական և նեգատիվ տարրերի միասնության մեջ, որպես դրական պատասխանատվություն կարող ենք բնորոշել որպես նորմատիվ, ձևական-որոշակի, պետական հարկադրանքով երաշխավորված և ապահովված հասարակական հարաբերությունների մասնակից սուբյեկտի իրավական պարտականություն, որն իրացվում է սոցիալապես ակտիվ իրավաչափ վարքագծում, իսկ իրավախախտում կատարելու դեպքում հանրային իրավական պատասխանատվությունը հանդես է գալիս որպես իրավախախտի նկատմամբ պետական որոշակի անբարենպաստ իրավական ներգործության միջոցների կիրառման և իրավախախտի կողմից այդպիսի միջոցների կրման գործընթաց (նեգատիվ պատասխանատվություն):

Հանրային-իրավական պատասխանատվություն հասկացության ընդհանուր հատկանիշներն օգտագործելով՝ կարող ենք փաստել, որ պետության (պետական իշխանության և պաշտոնատար անձանց) պատասխանատվությունը կոչվում է հանրային-իրավական, քանի որ առաջանում է հանրային իրավահարաբերու-

¹⁷ Տե՛ս, Միավորված Ազգերի Կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, https://www.unodc.org/documents/brussels/UN_Convention_Against_Corruption.pdf:

¹⁸ Տե՛ս Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 10 февраля 2009 г. №2 “О практике рассмотрения судами дел об оспаривании решений, действий (бездействия) органов государственной власти, органов местного самоуправления, должностных лиц, государственных и муниципальных служащих” // Бюллетень Верховного Суда Российской Федерации, 2009, №4, էջ 8:

թյունների ոլորտում պետական իշխանության ներկայացուցչի կողմից պետաիշխանական լիազորությունների իրացման շրջանակներում և կարող է գոյություն ունենալ միայն իրավական կարգավորման շրջանակներում:

Պետության (պետական իշխանության և պաշտոնատար անձանց) հանրային-իրավական պատասխանատվությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների, օրինական շահերի ապահովման և պաշտպանության կարևոր երաշխիք է՝ ուղղված իշխանությունների հավասարակշռո-

ման ապահովմանը, սահմանադրականության կայացմանը, իրավակարգի պաշտպանությանը, օրինականության հաստատմանն ու ամրապնդմանը: Պետական իշխանության հանրային-իրավական պատասխանատվությունը կոչված է ապահովելու իշխանությունների բաժանումն ու կայուն հավասարակշռությունը, իսկ հանրային-իրավական պատասխանատվության միջոցները հանդես են գալիս որպես զսպումների և հակակշիռների մեխանիզմի միջոցներ՝ ուղղված չեզոքացնելու իշխանության չարաշահումը:



ОВСЕП КОЧАРЯН
Юрист

НЕКОТОРЫЕ ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ПРЕЗУМПЦИИ СОГЛАСИЯ НА ПОСМЕРТНОЕ ДОНОРСТВО В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

В действующем с 2002 года законе РА «О трансплантации органов и (или) тканей человека» одной из дискуссионных проблем является регламентация презумпции согласия на посмертное изъятие органов и тканей человека. В отечественном праве вопрос получения органов и тканей от трупного донора недостаточно урегулирован, в связи с чем выявляется потребность в создании такого правового механизма, гарантирующего законный оборот человеческих органов, тканей и клеток, полученных от трупного донора, что сократит также и собственно криминогенные ситуации и в сфере посмертного донорства.

Анализ исследовательской литературы и законов, регулирующих сферу посмертного донорства в ряде зарубежных стран, выявляет три вида правового регулирования посмертного донорства: рутинное изъятие, принцип презумпции согласия и принцип презумпции несогласия. Суть принципа рутинного изъятия заключается в том, что после смерти человека его тело, согласно данному принципу, становится государственной собственностью. Решение о посмертной эксплантации органов принимается в зависимости от интересов и потребностей государства. Такая модель действовала в советский период (с 1937 года до 1992 года). Рутинное изъятие сегодня утратило свою правомерность в обществе, исходя из чего правильнее будет указать, что основными принципами посмертного донорства являются принцип презумпции согласия и принцип презумпции несогласия.

Согласно модели узкого согласия, без надлежаще оформленного согласия каждого человека на посмертное изъятие его органов и тканей, врач не имеет никакого права осуществлять такое изъятие. Согласно модели

расширенного согласия, учитывается не только волеизъявление самого донора, но также его родственников. Отметим, что п. 10 Резолюции Комитета Министров Совета Европы об упорядочении законодательства стран-членов Совета Европы в отношении изъятия и трансплантации человеческих биоматериалов указывает, что изъятие органов и тканей от трупного донора не может осуществляться в случаях презюмируемого возражения со стороны умершего по философским или религиозным убеждениям.

Другой моделью является презумпция согласия на посмертное донорство, при которой медицинское учреждение должно быть извещено донором при его жизни или его родственниками о несогласии на посмертное изъятие органов. Модель презумпции согласия действует в таких странах, как Португалия, Испания, Нидерланды, Финляндия, Швеция, Греция и т. д. Такая презумпция была заимствована также законодательствами РА и РФ. Эта модель базируется на так называемом «естественном законе этики», согласно которому каждый человек имеет этические обязательства перед обществом, а общество, в свою очередь, обладает правом на распоряжение индивидом. Несмотря на то, что модель презумпции согласия имеет многочисленных сторонников, отстаивающих необходимость реализации этой модели дефицитом органов и тканей, тем не менее нельзя забывать, что никакой спрос не может быть причиной для нарушения основных прав и свобод человека или для оправдания применения к человеку насилия вопреки его воле. В общей сложности, нельзя согласиться и с утверждением о том, что презумпция несогласия ведет к дефициту трансплантантов. Например, США, где действует такая презумпция, занимает второе место по

количеству доноров на 1 миллион человек.¹ Помимо того, проблему дефицита органов и тканей человека для трансплантации возможно решить посредством международного сотрудничества с иностранными государствами. Например, с целью решения проблемы дефицита источников трансплантации были учреждены такие организации, как «Евротранспланта», членами которого являлись страны Западной Европы, и «Интертранспланта», который был создан на основании соглашения между СССР, Болгарией, Венгрией, Польшей, Германией и Чехословакией. Государства-члены «Интертранспланта» обязывались на безвозмездную передачу и транспортировку органов, предназначенных для донорства. Все расходы, связанные с перевозкой органов человека, должны были нести государства-члены. Государства при осуществлении обмена органов человека вводили в свои законодательства максимальные таможенные льготы².

Как показывает правоприменительная практика, презумпция согласия создает больше проблем, нежели решает их, в связи с чем в последнее время в теории права все больше выражается отрицательное мнение по вопросам посмертного донорства человеческих органов и тканей. Критикует рассматриваемую презумпцию и М. Н. Малеина: «Закон исходит из презумпции согласия человека на изъятие органов и тканей после смерти, в то же время как правильнее исходить из презумпции его несогласия»³. Сторонники признания презумпции несогласия в основном ссылаются на неутешительную правоприменительную практику, сложившуюся как следствие действия этой презумпции согласия. Например, 12 декабря 2016 г. разразился конфликт по поводу трансплантации органов у О. Добровольской в больнице №81. Родственники О. Добровольской уверяли, что изъятие органов

было совершено без их знания или согласия, при этом утверждая, что такое изъятие произошло в то время, когда О. Добровольская была еще жива⁴. В настоящее время на рассмотрении ЕСПЧ находится дело A. Sablina v. Russia⁵. По делу Petrova v. Latvia⁶ ЕСПЧ констатировал нарушение ст. 8 Европейской Конвенции, гарантирующей, в частности, право на уважение личной жизни, в связи с тем, что у заявительницы не спросили, согласна ли она на изъятие для трансплантации почек и селезенки ее сына, скончавшегося от травм, полученных в результате ДТП, и не выразившего прижизненно свою волю по вопросу об изъятии его органов в случае смерти, несмотря на то, что латвийское законодательство, устанавливая презумпцию согласия на это, дает близким родственникам умершего право возражать против изъятия органов. Латвийские власти утверждали, что они не обязаны информировать родственников умерших об изъятии органов и, соответственно, предоставлять им возможность реализовать свое право возражать против этого. Напротив, это сами родственники умерших должны предпринять шаги, направленные на то, чтобы не допустить трансплантацию органов их близких, если они возражают против этого. ЕСПЧ признал, что вмешательство в право на уважение личной жизни не было предусмотрено законом, как того требует ст. 8 Европейской Конвенции, поскольку латвийское законодательство, формально предоставляя близким родственникам умершего право возражать против изъятия его органов, не было сформулировано достаточно конкретно с тем, чтобы защитить лицо от произвола, поскольку оно не обеспечивало надлежащее информирование родственников умершего о трансплантации его органов с тем, чтобы они могли возразить против этого, равно как не запрещало изъятия органов

¹ The Organ Procurement and Transplantation Network (OPTN) // Health Resources and Services Administration// <http://optn.transplant.hrsa.gov/>

² Т.Г. Кудашова, Признание органов и тканей человека объектами гражданского права: за и против, С. 268-270.

³ Малеина М. Н., «Человек и медицина в современном праве», с. 260.

⁴ <http://lifenews.ru/news/147027>

⁵ Sablina and others against Russia - 4460/16 Judgment 21.09.2016// <http://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-167648%22%5D%7D>

⁶ Petrova v. Latvia -4605/05 Judgment 24.6.2014//<http://european-court.ru/tag/petrova-v-latvia/>

без получения согласия на это у родственников, если умерший при жизни не выразил свою волю. Заявительница, формально имея право возражать против изъятия органов ее сына, не была проинформирована о том, как и когда она может реализовать его, не говоря уже о том, чтобы получить надлежащие объяснения. По мнению ЕСПЧ, такая неясная ситуация нарушает принцип законности. Несмотря на то, что родственники имеют право выразить несогласие на посмертное изъятие органов, законодательство Латвии также должен четко закрепить механизм обеспечения правовых и практических возможностей для реализации такого права.

В деле *Elberte v. Latvia*⁷ обстоятельства весьма схожи с делом Саблиных. Согласно делу Элберте, врачи тайно изъяли органы умершего мужа истицы, отправив их в Германию с целью создания биоимплантантов. Мис Элберте была уведомлена об этом спустя два года после смерти мужа. ЕСПЧ признал, что Латвия снова нарушила статью 8 Конвенции о защите прав человека (право на уважение частной и семейной жизни) и статью 3 (бесчеловечное или унижающее достоинство обращение).⁸ Конечно, у этой модели есть положительный аспект: по данной модели задача получения донорских органов существенно облегчается, однако усложняется проблема соблюдения законности при получении трупных биоматериалов, на что неоднократно обращали внимание юристы. Вышеуказанных случаев могло и не произойти, если бы законодательная база была разработана с большей осмотрительностью.

14 сентября 2010 года по делу об определении вопроса соответствия ст. 7 Закона РА «О трансплантации органов и (или) тканей человека» Конституции РА на основании обращения защитника прав человека РА А.Арутюняна вопрос конституционности презумпции согласия был рассмотрен Конституционным судом РА. Сторона-заявитель указывал, что важ-

нейшим основанием защиты человеческого достоинства является свободное и беспрепятственное осуществление его прав. Свобода воли человека, как неотделимая часть его права на достоинство, должна признаваться, защищаться и уважаться, причем как при жизни человека, так и после его смерти. То же самое относится и к праву личной неприкосновенности, которое создает необходимое предварительное условие для достойного обращения с телом человека после его смерти и правовой защиты тела умершего. Человек сам должен распоряжаться своим телом, в том числе решать его судьбу после своей смерти. По мнению стороны-заявителя, в оспариваемой норме указываются два коллизийных принципа правового регулирования общественных отношений, в связи с изъятием у трупного донора органов и тканей – предварительного условия «согласия» и «несогласия», при котором «очевидны правовая неопределенность и путаница», создающие условия для «своевольного толкования, применения» оспариваемой нормы и «злоупотребления» ею в правоприменительной практике. Конституционный Суд РА, рассмотрев конституционность оспариваемой нормы, пришел к выводу, что новый порядок более рискованный и требует дополнительных гарантий предупреждения возможных проявлений. Конституционный Суд признал неконституционным статью 7 закона в той части, которая относится к изъятию органов и тканей трупного донора, если трансплантация этих органов не осуществляется в РА.⁹ Однако, как справедливо указывает Л.Г.Варданян: «...В этом случае анализ постановления Конституционного суда помогает прийти к выводу, что изъятие органа у трупа не является нарушающим его достоинство, если его трансплантация возможна в Республике Армения. Возникает вопрос, насколько человеческое достоинство зависит от возможности или невозможности технической реализации той

⁷ <http://subscribe.ru/archive/law.europeancourt/201505/07110612.html>

⁸ Там же.

⁹ Постановление Конституционного суда Республики Армения по делу об определении вопроса соответствия статьи 7 Закона РА «О трансплантации органов и (или) тканей человека» Конституции Республики Армения на основании обращения защитника прав человека РА /[Электронный ресурс].– Режим доступа: <http://www.concourt.am/russian/decisions/common/index.htm>

или иной операции? Представляется, что не зависит, ибо речь идет о технической возможности выполнения операции, которое не имеет точки соприкосновения с такой морально-правовой категорией, как достоинство человека». ¹⁰ Добавим, что достоинство также не может зависеть от территориального признака, а значит, нарушение достоинства является нарушением, вне зависимости от того, где это нарушение имело место быть.

Для того, чтобы стало возможным полноценное применение Закона о трансплантации, необходимо, в первую очередь, изменить правосознание общества, гарантировать ощущение безопасности человека, который, дав согласие на посмертное донорство, не будет бояться за свою жизнь и спокойно будет воспринимать то обстоятельство, что после смерти его органы и ткани будут использованы в целях спасения жизни другого человека.

Исходя из вышесказанного, можно прийти к выводу, что презумпция согласия идет вразрез

с морально-этическими нормами, поскольку создает потенциальный риск нарушения достоинства умершего человека и является главным «виновником» развития «черной» трансплантации. Такая презумпция создает законный механизм убийства пациентов с целью посмертного изъятия их органов и тканей. Поэтому представляется более приемлемым вариантом переход от презюмированного согласия к модели презюмированного несогласия.

В-третьих, необходимо включить в УК РА нового состава преступления «Незаконная эксплантация органов и тканей у умершего человека» в следующей редакции:

«Незаконная эксплантация органов, тканей, клеток, а также иных анатомических материалов у трупа человека или его мертвого плода или эмбриона, произведенная без законодательно определенных условий и порядка изъятия, а равно – без согласия умершего или его законных представителей, наказывается...».¹¹



¹⁰ Варданян Л.Г., Актуальные правовые проблемы постмортального донорства/Журнал «Оринокантун», №92, 2016, С. 23-30.

¹¹ Там же.

ՆԱՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ՝
ՈՐՊԵՍ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԷՍԿԱՆ ՊԱՅՄԱՆ**

Պետության կարիքների բավարարման նպատակով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն իրականացվում է գնման գործընթացի արդյունքով պետական կարիքների բավարարման համար պայմանագրի կնքմամբ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի¹ և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ:

Պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրին՝ որպես պայմանագրի ինքնուրույն տեսակի, բնորոշ են քաղաքացիաիրավական պայմանագրերի հիմնական հատկանիշները: Մասնավորապես, այլ պայմանագրերի նմանությամբ՝ պետական գնման պայմանագիրն ունի իր բովանդակությունը՝ այն անհրաժեշտ կետերը՝ պայմանները, որոնք պայմանավորում են նշված պայմանագրի գոյությունը:

Ավանդաբար իրավաբանական գրականության մեջ առանձնացվում է պայմանագրի պայմանների երեք հիմնական խումբ՝ էական, սովորական և պատահական: Ընդհանուր մոտեցման համաձայն՝ էական են համարվում այն պայմանները, որոնց առկայությունը տվյալ պայմանագրում անհրաժեշտ է, և պայմանագիրը կնքված կարող է համարվել միայն այն դեպքում, երբ համաձայնություն է կայացվել բոլոր այդ պայմանների շուրջ: Դրանք այն պայմաններն են, որոնք օրենսդրությամբ համարվում են անհրաժեշտ և բավարար՝ այս կամ այն պայմանագրային հարաբերությունների ծագման համար:²

Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայ-

մանների վերաբերյալ: Էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի:

Ընդ որում՝ գնումների ոլորտի առանձնահատկություններով պայմանավորված՝ պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի հիմնական պայմանները, որպես կանոն, հայտնի են լինում նախքան պայմանագրի կնքումը՝ նկատի ունենալով, որ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ կառավարությունը սահմանում է հրավերի և պայմանագրի հիմնական պայմանները, իսկ նույն օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նաև պայմանագրի նախագիծը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168-Ն որոշման վերլուծությամբ պարզ է դառնում, որ պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրերի էական պայմաններ են *պայմանագրի առարկայի մասին պայմանը* (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդված, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված), *պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ժամկետը* («Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ), *ընտրված մասնակցի (մատակարար, կապալառու, կատարող) պա-*

¹ Ընդունվել է 16.12.2016 թվականին, ուժի մեջ է մտել 25.04.2017 թվականին:

² Տես, օրինակ՝ «Гражданское право: в 4 т., том 3: Обязательственное право: учеб. для студентов вузов»; отв. ред. Е.А. Суханов.– 3-е изд., перераб. и доп., М.: Волтерс Клувер, 2005, էջ 188-193, կամ Տ. Բարսեղյան, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, 3-րդ հրատարակություն, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2006, էջ 445-448:

դասխանադրությունը պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար («Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168-Ն որոշման 1-ին հավելվածով սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի»³ 2-րդ կետ և 36-րդ կետի 4-րդ ենթակետ), *պայմանագրի գինը* («Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված):⁴

Գրականության մեջ պետական և համայնքային պայմանագրերի էական պայմանների շարքն են դասվում նաև պայմանագրի կատարման վայրը, օրենսդրությամբ սահմանված պահանջներին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի ցանկը և այլն:⁵

Սույն հոդվածի շրջանակներում պետական գնման պայմանագրի պայմաններից առավել մանրամասն հարկ ենք համարում անդրադառնալ պայմանագրի առարկային:

Պայմանագրի առարկան (գնման առարկան) պետության կարիքի բավարարման նպատակով ձեռք բերվող ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունն է, իսկ գնման առարկայի բնութագիրը՝ գնման առարկայի հատկանիշների, դրանց ձեռքբերման և վճարման պայմանների վերաբերյալ հրապարակվող տեղեկատվությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Գնման գործընթացի գերակա սկզբունքը գնումների անցկացման թափանցիկությունն է,

մասնակիցների համար հավասարություն և հրապարակայնություն ապահովելը: Մասնակիցների համար մրցակցության հավասար պայմանների ապահովման գործիքներից է գնման առարկայի բնութագիրը, որը հնարավորություն է տալիս ի սկզբանե պատկերացում կազմելու պայմանագրի առարկայի մասին: Այդուհանդերձ՝ այս գործիքը թերի կազմելու հետևանքով հաճախ խոչընդոտվում է մրցակցության հավասար պայմանների սկզբունքի իրականացումը, քանի որ գնումների ապակենտրոնացման պայմաններում պետական պատվիրատուների կողմից գնման հայտերը հաստատվում, և գնման ընթացակարգերն իրականացվում են ինքնուրույն, ինչի հետևանքով հաճախ թերի են կազմվում գնման հայտում ներառված գնման առարկայի բնութագրերը: Սա հաճախ պատճառ է դառնում՝ գնման ընթացակարգը չէղյալ հայտարարելու կամ մասնակիցներից նվազագույն գին առաջարկած մասնակցին պարզապես հաղթող ճանաչելու, ինչը որոշակի ռիսկ է պարունակում՝ նկատի ունենալով, որ պատվիրատուն ստիպված է կնքել պայմանագիր հաղթող մասնակցի հետ՝ ձեռք բերելով ապրանք, որը չի բավարարում իրեն իրականում անհրաժեշտ պայմաններին: Նման խնդրի իրական պատճառն այն է, որ պատվիրատուն թերի է ներկայացնում գնման առարկայի բնութագիրը, ինչի պատճառով նմանատիպ համարվող, սակայն պատվիրատուին անհրաժեշտ գնման առարկայի իրական բնութագրին չհամապատասխանող ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը ձեռք է բերվում ցածր գնով, ինչը դեռ չի նշանակում, որ տվյալ գնման առարկան համապատասխանում է անհրաժեշտ կարիքին: Նման թերի տեխնիկական բնութագրով կազմված գնման առարկայի ձեռքբերման հետևանքով միավոր խնայողությունը պատճառ է դառնում հետագայում լրացուցիչ ծախսերի և ֆինանսական չարաշահումների:⁶ Հետևաբար՝ գնման առարկայի բնու-

³ ՀՀ կառավարության 30.01.2015 թվականի թիվ 105-Ն որոշմամբ՝ նշված կարգը շարադրվել է նոր խմբագրությամբ:
⁴ Պայմանագրի նման էական պայմաններ առանձնացրել է նաև ի.գ.թ Պ.Ս. Տարաբաևն իր ատենախոսության մեջ (տես Тарабаев П.С. Гражданско-правовое регулирование поставки товаров для федеральных государственных нужд. Автореф. дисс. ... к.ю.н. Екатеринбург. 2009, էջ 18-19):
⁵ Տեն Добрецов Г.Б. Существенные условия контракта, заключаемого в порядке размещения государственного и муниципального заказа, СПС, «КонсультантПлюс», 2011, 78-89 պարբ.:
⁶ Տեն Գ.Գ. Գաբրիելյան ՀՀ պետական գնումների քաղաքականության հիմնախնդիրները, Ը.00.02, Ը.00.003 մասնագիտություններով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, ՀՊՏՀ, Երևան, 2014, էջ 25-26:

թագրերը կազմելիս անհրաժեշտ է խստորեն հետևել օրենսդրությամբ սահմանված պահանջներին՝ նկատի ունենալով, որ հենց գնման առարկայի բնութագրի մեջ է արտացոլվում պայմանագրի առարկան կամ, այլ կերպ ասած՝ տվյալ գնման հիմք հանդիսացող պետական կարիքը:⁷

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Ինչպես պարզ է դառնում նշված հոդվածից՝ 1-3-րդ պայմանները կոչված են ապահովելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված նպատակների ու սկզբունքների իրականացումը, այն է՝ մրցակցությունը, հավասարությունը և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:⁸ Ինչ վերաբերում է 4-րդ պայմանին՝ դա արդեն վերաբերում է տվյալ կոնկրետ գնման առարկայի մասին անհրաժեշտ տե-

ղեկատվության տրամադրմանը: Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա: Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալելու պայմանագրի առարկան:

Գնման առարկայի բնութագիրը սահմանելու պայմաններից մեկն էլ այն է, որ գնման առարկայի հատկանիշները **չպետք է պահանջ կամ հղում պարունակեն** որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը: Նման պահանջը կոչված է ապահովելու մասնակիցների միջև մրցակցությունը և հավասարությունը՝ բացառելու համար

⁷ Օրինակ՝ թիվ ԵԱԲԴ/0226/02/13 քաղաքացիական գործի շրջանակներում վեճ է առաջացել հենց գնման առարկայի տեխնիկական բնութագրում նշված հատկանիշների տարբեր կերպ մեկնաբանման և ընկալման պատճառով: Նշված գործը տես www.datalex.am դատական տեղեկատվական համակարգից, 10.05.2017 թվականի դրությամբ:

⁸ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ 1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ, 2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ 1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում, 2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում, 3) ցանկացած անձի համար, նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից անկախ, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

կոնկրետ ապրանքի տեսակ սահմանելով մրցակիցների մասնակցության խոչընդոտումը:

Այդուհանդերձ՝ պետք է նշել, որ պրակտիկայում հաճախ խախտվում է նշված պահանջը, ինչի հետևանքով քիչ չեն այնպիսի վեճերը, այդ թվում՝ դատական, երբ մասնակիցներից մեկը վիճարկում է գնման ընթացակարգը հենց վերոնշյալ պայմանի խախտման պատճառով:

Օրինակ՝ հայցվոր ընկերությունը դիմել է դատարան՝ վիճարկելով գնահատող հանձնաժողովի որոշումը՝ մեկ այլ ընկերությանը հաղթող ճանաչելու մասին: Հայցի հիմքում դրված փաստական հանգամանքներին մեկն էլ եղել է այն, որ պատվիրատուն գնման ընթացակարգի հրավերում հստակ նշել է գնման առարկայի կոնկրետ արտադրողի անվանումը և մոդելը՝ «թվային պրոյեկտոր Mitsubishi EX240U»: Հայցվորի կարծիքով՝ նման ձևակերպումը ոչ միայն հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքին, այլ նաև պատվիրատուն զրկված չէր գնման առարկայի հատկանիշներն առանց կոնկրետ մոդելի հղում անելու ներկայացնելուց՝ թեկուզ և նկատի ունենալով այն հանգամանքը, որ ինտերնետային աղբյուրների միջոցով միանշանակ հնարավոր էր ստանալ վերոնշյալ մոդելի հատկանիշները: Նշված հայցին ի պատասխան՝ պատվիրատուն նշել է, որ տեխնիկական բնութագրում օգտագործվել է «կամ համարժեք» արտահայտությունը, ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքը չի խախտվել: Բացի այդ՝ նշել է, որ. «Պրակտիկայում, որպես կանոն, ելնելով գնման գործընթացի արդյունավետ և օգտավետ կազմակերպման՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով ամրագրված նպատակից, հիմք ընդունելով շուկայում առկա անորակ ապրանքների քանակի ներհոսքը և խուսափելու համար հետագայում ծագող խնդիրներից և լրացուցիչ ծախսերից՝ համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի գնման դեպքում հրավերում

հղում է կատարվում կոնկրետ ֆիրմային անվանմանը, մոդելին և այլն: Նշված դեպքում պատասխանողի գնահատող հանձնաժողովի նախօրոք կատարված ուսումնասիրությունների արդյունքով շուկայում առաջատարներից (բարձր որակ և այլն) է համարվել «Mitsubishi EX 240U» պրոյեկտորը, որպիսի ապրանքի գնման ընթացակարգ է կազմակերպվել»: Սույն գործով առաջին ատյանի դատարանը որոշել է, որ հայցվորը չի ապացուցել իր կողմից վկայակոչված այն փաստը, որ գնման առարկան կարող էր բնութագրվել՝ առանց ֆիրմային անվանմանը և մոդելին հղում տալու, և հայցը մերժել է: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը հավելել է, որ գնման առարկայի հատկանիշների բնութագրումը թույլատրվում է, եթե անհնարին է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Այսինքն՝ անհնարինությունը պետք է առաջանա պատվիրատուի կողմից, և ինքն է գնահատում «անհնարինության» առկայության կամ բացակայության հանգամանքը՝ ելնելով կոնկրետ ապրանքի և դրան ներկայացվող որակական չափանիշներից: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը վերաքննիչ բողոքը մերժել է՝ վճիռը թողնելով օրինական ուժի մեջ:⁹ Ընդ որում՝ հարկ է նշել, որ գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ նշված վեճը միակը չէ, և դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է դրանց զգալի քանակի մասին:¹⁰

Մեր կարծիքով՝ գնման առարկան սահմանելիս պետք է նվազագույնի հասցվեն այն դեպքերը, երբ գնման առարկան անհատականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված որևէ եղանակով: Ընդ որում՝ եթե, այդուհանդերձ, պատվիրատուն գնման առարկան սահմանում է այդ եղանակով, կարծում ենք՝ հենց պատվիրատուն էլ պետք է ապացուցի, որ այլ եղանակով հնարավոր չէր ապահովել գնման առարկայի միա-

⁹ Տե՛ս ըստ հայցի «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ընդդեմ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի, Գնումների բողոքարկման խորհրդի բողոքը քննող հանձնաժողովի, «Խ. Արմվյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ի, երրորդ անձ «Դովարո» ՍՊԸ-ի՝ ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8 ծածկագրով ընթացակարգի գնային առաջարկները գնահատող հանձնաժողովի 06.12.2011 թվականի որոշման 5-րդ կետը՝ ընթացակարգի 2-րդ չափաբաժնով «Դովարո» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասով, անվավեր ճանաչելու, Գնումների բողոքարկման խորհրդի բողոքը քննող հանձնաժողովի 30.12.2011 թվականի և 30.01.2012 թվականի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ ԵԿԴ/0309/02/12 քաղաքացիական գործով դատական ակտերը www.datalex.am դատական տեղեկատվական համակարգից, 10.05.2017 թվականի դրությամբ:

¹⁰ Տե՛ս, օրինակ՝ նմանատիպ վեճերից թիվ ԵԱՔԴ/2320/02/12, թիվ ԵԱՔԴ/1807/02/15 քաղաքացիական գործերով դատական ակտերը www.datalex.am դատական տեղեկատվական համակարգից, 10.05.2017 թվականի դրությամբ:

նշանակ ընկալում հնարավոր մասնակիցների համար: Մեր դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ եթե պատվիրատուի վրա թողնենք հայեցողական լիազորություն՝ որոշել «անհնարինության» առկայության կամ բացակայության հանգամանքը, իսկ դրան զուգահեռ մասնակցի վրա դնենք ապացուցման պարտականությունը, ապա ակնհայտորեն մասնակիցը հայտնվում է անբարենպաստ պայմաններում՝ նկատի ունենալով, որ գրեթե անհնար է դառնում ապացուցել պատվիրատուի գործողությունների անհիմն լինելը: Հետևաբար՝ բոլոր այն դեպքերում, երբ պատվիրատուն գնման առարկան անհատականացնում է, պետք է ներկայացնի նաև պատճառաբանված հիմնավորում այն մասին, թե ինչու այլ եղանակով հնարավոր չէր սահմանել գնման առարկան:

Մեր կարծիքով՝ դատական վեճերը նվազեցնելուն կնպաստի գնման առարկայի բնութագրերին ներկայացվող պահանջների նկատմամբ հսկողության ավելացումը: Նախ՝ հարկ ենք համարում նշել, որ ինչպես «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168-Ն որոշմամբ, այնպես էլ 2017 թվականի ապրիլից շրջանառության մեջ գտնվող «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի № 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով¹¹ նախատեսված է գնման առարկայի բնութագրերի հաստատման կարգը: Մասնավորապես՝ գնման առարկայի բնութագրի կազմման և հաստատման պարտականությունը դրված է պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման վրա: Այդուհանդերձ՝ կարծում ենք, որ առկա կարգավորումը բավարար չէ լիարժեք ապահովելու գնման առարկայի բնութագրերի տեխնիկապես բարձր որակը: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ գնման գործընթացում վեճերի մի մասը ծագում է հենց գնման առարկայի բնութագրերի ոչ միանշանակ ընկալման պատճառով, ինչպես նաև կարևորելով լիազորված մարմնի դերը պետական պատվիրատուներին գնումների գործը կազմակերպելիս մեթոդական օժանդակություն ցու-

ցաբերելու հարցում, կարծում ենք, որ լիազորված մարմնի (ներկայումս այդպիսին է ՀՀ ֆինանսների նախարարությունը) դերը պետք է նշանակալից լինի նաև գնման առարկայի բնութագրերի մշակման հարցում: Դա կարող է դրսևորվել կամ լիազորված մարմնի համապատասխան մասնագիտացում ունեցող աշխատակիցներ ներգրավելով և վերջիններիս միջոցով պետական պատվիրատուներին աջակցություն ցուցաբերելով, կամ պետական պատվիրատուների գնումների համակարգողների մասնագիտացումն ապահովելով:

Պետք է նշել, որ «ՀՀ կառավարության 05.06.2008 թվականի N 853-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 17.12.2009 թվականի ՀՀ կառավարության թիվ 1521-Ն որոշման թիվ 1 հավելվածով սահմանված «Գնման առարկայի բնութագրերի հաստատման, նախնական հսկողության և գնումների ֆինանսավորման» կարգի 5-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագիրը հաստատում է պատվիրատուի ղեկավարը: Գնման առարկայի բնութագրի նախագիծը կազմում և պատվիրատուի ղեկավարի հաստատման է ներկայացնում պատվիրատուի համապատասխան ստորաբաժանումը (այսուհետ՝ պատասխանատու ստորաբաժանում): Ընդ որում՝ պատասխանատու ստորաբաժանման՝ գնման առարկայի բնութագրի նախագծման աշխատանքները կազմակերպող անձինք (ներկայացուցիչները) պետք է ունենան գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից: Եթե պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա պատասխանատու ստորաբաժանման աշխատանքների կատարմանն աջակցելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ): Վերջինս պատասխանատվություն է կրում իր կողմից տրված եզրակացությունների և առաջարկների համար:

Գնման առարկայի բնութագրերի հետ կապված խնդիրների լուծում կարող է հանդիսանալ ներդրվող՝ գնումների կատարման մասնակի կենտրոնացված համակարգը, որի շրջանակներում ձեռք են բերվելու ՀՀ կառավարության

¹¹ Տե՛ս <https://www.e-draft.am/projects/158/digest> կայքում, 10.05.2017 թվականի դրությամբ:

կողմից հաստատվող ցուցակում ներառված միանման տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ: Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուների կամ դրանց առանձին խմբերի կարիքների համար գնումները կարող են կատարվել կենտրոնացված եղանակով՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կենտրոնացված եղանակով գնումները կատարվում են ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի կամ իրավաբանական անձի միջոցով: Շրջանառության մեջ գտնվող վերոնշյալ որոշման նախագծի 100-րդ կետի համաձայն՝ կենտրոնացված կարգով գնման գործընթացները կազմակերպում է լիազորված մարմինը կամ ՀՀ ֆինանսների նախարարի կողմից լիազորված պետական հիմնարկը կամ իրավաբանական անձը, ում ղեկավարը հաստատում է կենտրոնացված կարգով ձեռքբերման ենթակա գնման առարկայի տեխնիկական բնութագրերը և մատակարարման պայմաններն ու ժամկետները՝ դրանք նախապես համաձայնեցնելով հանրապետական գործադիր բոլոր մարմինների հետ:

Կարծում ենք՝ կարգավորման նման պարագայում նվազագույնի կհասցվեն գնման այնպիսի առարկաների տեխնիկական բնութագրերում հնարավոր թերությունները, որոնք հիմնականում անհրաժեշտ են բոլոր պետական պատվիրատուների բնականոն գոյության համար: Ինչ վերաբերում է արդեն կոնկրետ պետական պատվիրատուի գործունեության ոլորտին բնորոշ գնման առարկայի բնութագրին՝ ենթադրվում է, որ պետական պատվիրատուն, լինելով տվյալ ոլորտի լիազորված մարմին կամ մասնագիտացված սուբյեկտ, արդեն պետք է լավագույն հնարավորություններն ունենա գնման առարկայի բնութագիրը սահմանելիս, որպիսի պարագայում գնման առարկայի բնութագրման հետ կապված խնդիրներ պետք է չառաջանան՝ նկատի ունենալով մասնագիտացված աշխատակիցների առկայությունը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ոլորտի մասնագետների խորհրդատվությունից օգտվելը:

Այսպիսով՝ պետական գնման պայմանագրի էական պայման հանդիսացող գնման առարկայի հետ կապված հիմնական խնդիրը

ծագում է գնման առարկան սահմանելիս՝ գնման առարկայի բնութագրերի մշակման ընթացքում:

Հետևաբար, հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Գնման պայմանագրի էական պայման հանդիսացող առարկան սահմանվում է գնման առարկայի բնութագրով, որը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրի ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

2. Գնման առարկայի բնութագրերը կազմելիս անհրաժեշտ է դրսևորել առավելագույն զգոնություն՝ նկատի ունենալով վերջիններիս կարևորագույն դերը գնման ողջ գործընթացի համար: Այդ նպատակով անհրաժեշտ է բարձրացնել լիազորված մարմնի դերն այս հարցում, մասնավորապես՝ կամ լիազորված մարմնի՝ համապատասխան մասնագիտացում ունեցող աշխատակիցներ ներգրավելով և վերջիններիս միջոցով պետական պատվիրատուներին աջակցություն ցուցաբերելով, կամ պետական պատվիրատուների գնումների համակարգողների մասնագիտացումը նաև այս հարցում ապահովելով:

3. Գնման առարկայի բնութագրերի հետ կապված խնդիրների լուծում կարող է հանդիսանալ ներդրվող՝ գնումների կատարման մասնակի կենտրոնացված համակարգը, որի շրջանակներում ձեռք են բերվելու ՀՀ կառավարության կողմից հաստատվող ցուցակում ներառված միանման տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ:

4. Եվ, վերջապես՝ գնման առարկան սահմանելիս պետք է նվազագույնի հասցվեն այն դեպքերը, երբ գնման առարկան անհատականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված որևէ եղանակով, իսկ այն դեպքերում, երբ գնման առարկան, այդուհանդերձ, սահմանվում է այդ եղանակով, պատվիրատուն պետք է կրի այլ եղանակով գնման առարկան սահմանելու անհնարինությունն ապացուցելու պարտականությունը:

ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի հայցորդ

ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄԻՆԸ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱՀԱՐԱՔԵՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

Մարդու նոր սերնդի իրավունքներով պայմանավորված, ինչպիսիք են, օրինակ՝ մարդու սոմատիկ իրավունքները, հարց է առաջանում, թե կարող է արդյոք մարդու մարմինը՝ ամբողջությամբ վերցված, կամ մարդու մարմնի առանձին մասը՝ օրգանը¹, կամ մարդու հյուսվածքը², կամ մարդու բջիջը³ լինել իրավահարաբերության օբյեկտ:

Նշենք, որ, մարդու սոմատիկ իրավունքներ ասելով՝ անհրաժեշտ է հասկանալ այն իրավունքների համախումբը, որոնք կապված են մարդու մարմնի՝ որպես ամբողջության, ինչպես նաև այդ ամբողջության առանձին մասերի (օրգաններ, հյուսվածքներ, բջիջներ) նկատմամբ մարդու, ըստ իր հայեցողության, տնօրինման, տիրապետման, օգտագործման, կառավարման հետ, այլ կերպ ասած՝ դրանք մարդուն տրված հնարավորություններ են՝ ազատորեն վերահսկելու իր մարմինը:

Մինչ մարդու մարմինը՝ որպես իրավահարաբերության կենսաբանական օբյեկտ դիտարկելը անհրաժեշտ է հասկանալ, թե նվ է մարդը, որոնք են մարդուն բնորոշ գծերը, ինչ է իրավական հարաբերությունը, որոնք են իրավահարաբերության տարրերը, ինչ է մարդու մարմինը, կենսաբանական օբյեկտը, որոնք են կենսաբանական օբյեկտի հատկանիշները:

Մարդ. սահմանում և բնորոշ գծեր

Մարդը բանական էակ է՝ նյութական և ոչ նյութական արժեքներ կրող: Սոցիալական իմաստով՝ մարդը մտածելու և խոսելու կարողությամբ օժտված, գործիքներ պատրաստող ու հասարակական աշխատանքի գործընթացում դրանք գործադրող կենդանի էակ է⁴, բանական, հոգով ու մարմնով, խոսող, ողնաշարավոր, կաթնաբույծ, ուղիղ կեցվածքով, ամենակեր էակ է⁵: Մարդը ֆիզիկական էակ է, ով ունի երկու բնություն՝ ֆիզիկական և հոգևոր (այդ թվում՝ ոգեղեն⁶): Մարդու ֆիզիկական բնությունն արտահայտվում է մարդու փաստացի գոյությամբ, **մարմնով**, հոգևոր (ոգեղեն) բնությունը՝ **մարդու աշխարհայացքով**, էությամբ, ոգով: Այլ կերպ ասած՝ մարդու ֆիզիկական կողմը վերջինիս ձևական հատկանիշն է, իսկ հոգևոր (ոգեղեն) կողմը՝ բովանդակային, ընդ որում՝ այդ բոլորը փոխկապակցված են, մեկը մյուսով՝ փոխապայմանավորված: Իրավաբանական իմաստով՝ մարդը ֆիզիկական անձ է, իրավահարաբերության սուբյեկտ:

Երբեմն նշվում է, որ էմբրիոնը (embryo) կենդանի օրգանիզմ է (սաղմ), որն սկիզբ է առնում բեղմնավորման պահից և ավարտվում հղիության 8-րդ շաբաթով, սա այն ժամանա-

¹ Օրգան՝ տարբեր հյուսվածքներից բաղկացած (որոնցից մեկը գլխավորն է՝ առաջատարը) և որոշակի ձև ունեցող մարմնի մաս, որը տարբերվում է իր հստակ կառուցվածքով, օրգանիզմում զբաղեցրած որոշակի տեղով և կենսագործունեությամբ:
² Հյուսվածք՝ ծագման, կառուցվածքի և ֆունկցիաների միասնությամբ միավորված, կազմավորված բջիջների և արտաբջջային նյութի ընդհանրություն:
³ Բջիջ (լատ.՝ cellula՝ խորշիկ, փոքր սենյակ, բջիջ, հունարեն՝ ցիտոս՝ անոթ, բջիջ)՝ բոլոր հայտնի կենդանի օրգանիզմների կառուցվածքային, ֆունկցիոնալ և ժառանգական տարրական միավորը: Բջիջը՝ որպես օրգանիզմի կառուցվածքի տարրական միավոր, օժտված է կենդանի նյութին բնորոշ հատկություններով, որոնք պահպանում ու փոխանցվում են հաջորդ սերունդներին:
⁴ Տեն Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 977:
⁵ Տեն Գնել արքեպիսկոպոս Ճերլեճեան, Փարամազ Կ. Տոնիկեան և Արտաշէս Տէր Խաչատուրեան, Հայ լեզուի նոր բառարան, Բեյրութ, 1992, էջ 103:
⁶ Ոգի՝ էություն, բուն իմաստ՝ ըստ ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի (Երևան, 1980, հատոր 4, էջ 97), էություն, ներքին բովանդակություն՝ իմաստ՝ ըստ Արդի հայերենի բացատրական բառարանի (Երևան, 1976, հատոր 2, էջ 1129):

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 101 2017

կահատվածն է, երբ ձևավորվում են ուղեղը, սիրտը, թոքերը, ներքին օրգանները, սկսում են ձևավորվել ոտքերը և ձեռքերը: 8 շաբաթականից մինչև լույս աշխարհ գալը՝ ծնվելը, նա կոչվում է պտուղ (foetus), իսկ ծնվելուց հետո՝ երեխա, նորածին (child, newborn): Երբեմն նշվում է 8-12 շաբաթ: Հետևաբար՝ «մարդ» կատեգորիայի համար կարևոր է սուբյեկտի՝ **նյութական աշխարհում գտնվելը**, ապրելը, որն սկսվում է ծնվելու, լույս աշխարհ գալու պահից և ավարտվում մարդու ուղեղի մահով⁷:

Մարդն ունի ֆիզիկական և հոգեբանական (ոգեղեն) էություն, այսինքն՝ մարդը դիտարկվում է ոչ միայն մարմնական իրավունքների նյութական կրող, այլ նաև հոգևոր-բարոյական, ոգեղեն արժեքներ կրող: Բժշկությանն առավել հետաքրքիր է մարդու ֆիզիկական (բիոլոգիական, կենսաբանական) կողմը: Նշենք, որ մարդը բաղկացած է անատոմիաֆիզիոլոգիական տարրերից, որոնք են՝ երկկողմանի սիմետրիկ մարմինը, ուղիղ կանգնելը, ուղիղ քայլելը, երկկողմանի վերջույթները, մաշկային ծածկույթը, գլուխը, որում առկա են համի, հոտի, տեսողության, լսողության, խոսելու գործոնները, ընդ որում՝ նշվածից բացառությունը (օրինակ՝ մեկ ոտքով ծնվելը) դիտարկվում է անոմալիա: Մարդուն բնութագրող հատկանիշներն են անկրկնելիությունը, անհատականությունը⁸ և սոցիալական, և կենսաբանական առումով, գիտակցումը՝ ճշտի և սխալի, բարոյականությունը, զգացմունքայնությունը՝ սիրո, ատելության զգացումներ ունենալը, ազատությունը, հավասարությունը, ինքնուրույնությունը՝ իր գործողությունները ղեկավարելու, սեփական ապրելաոճն ընտրելու:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք փաստել, որ մարդը բանական էակ է, ֆիզիկական անձ, ով ունի անատոմիաֆիզիկական (նյութական-մարմնական), սոցիալական (հոգևոր-բա-

րոյական) և վերանհատական (ոգի) հատկանիշներ:

Մարդու մարմին

Մարմինն արտահայտում է մարդու նյութական-իրային կողմը: Ֆիզիկական կամ անատոմիական իմաստով մարմինը բնութագրվում է որպես ինչ-որ բանի մաս, օրգանիզմի հիմնական մասերը, հյուսվածքները, բջիջները, օրգանները: Փիլիսոփայական բառարաններում մարմինը բնութագրվում է որպես որևէ օբյեկտիվ ֆիզիկական երևույթի նյութական դրսևորում, օրգանիզմի կյանքի կրող, եռաչափ ֆիզուր:

Մարդը չի կարող գոյություն ունենալ առանց մարմնի՝ ընդհանրապես, թեպետ և մարդը կարող է ապրել առանց մարմնի որոշ ոչ էական օրգանների, օրինակ՝ վերջույթներն անդամահատված մարդը: Մարդու մարմինը չի կարող գոյատևել «փակ» միջավայրում երկար ժամանակահատված: Հետևաբար՝ երբ քննարկում ենք էմբրիոնի, սաղմի կամ պտղի մարմնի մասին, չպետք է մոռանանք, որ խոսքը դեռևս ձևավորման փուլում գտնվող մարմնի մասին է: Ավելին՝ երբեմն նշվում է, որ հենց սաղմը մոր՝ իրավունքի ինքնուրույն սուբյեկտի մարմնի մասնիկն է⁹:

Իրավահարաբերություն

Իրավահարաբերությունները հասարակական հարաբերությունների մի մասն են, որոնք այլ հասարակական հարաբերություններից, նախ և առաջ, տարբերվում են այնքանով, որ իրավահարաբերության կողմերը և նրանց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները հնարավորինս հստակեցված են¹⁰:

Իրավահարաբերությունը բաղկացած է սուբյեկտից, օբյեկտից և բովանդակությունից:

⁷ Ուղեղի մահ՝ գլխուղեղի կենսագործունեության լրիվ և անդառնալի դադարում, որը գրանցվում է աշխատող սրտի և թոքերի արհեստական օդափոխության պայմաններում: Ուղեղի մահը համարժեք է մարդու մահվան:

⁸ Անհատականությունը փիլիսոփայության, հոգեբանության, սոցիոլոգիայի ուսումնասիրման օբյեկտ է, որը ծագում է ճանաչողության և ինքնագիտակցման առաջացման հետ:

⁹ Այս տեսակետը գերակայում է այն տեսաբանների հայացքներում, ովքեր կողմ են արթորտի և համարում են, որ արթորտի սահմանափակումը չպետք է պայմանավորված լինի սաղմի, պտղի, «ապագա երեխայի» շահով, քանզի հենց սաղմը մոր մարմնի մեջ է ձևավորվում և որոշակի ժամանակահատվածում (սովորաբար մինչև 9 ամիս) մոր մարմնի մի մասն է, հետևաբար՝ մոր սեփականությունը, այդ թվում՝ մարմնի անձեռնմխելիության համատեքստում:

¹⁰ Տեն Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, Պետության և իրավունքի տեսություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2016, էջ 340:

Իրավահարաբերության սուբյեկտները լինում են անհատական և կոլեկտիվ: Կոլեկտիվ սուբյեկտներն են պետությունը, կազմակերպությունները, ժողովուրդը, իսկ անհատական սուբյեկտներն են քաղաքացիները, օտարերկրացիները, քաղաքացիություն չունեցող անձինք¹¹:

Իրավահարաբերության բովանդակությունը իրավահարաբերության սուբյեկտների իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է, որն ուղղված է որոշակի իրավիճակի ստեղծմանը, փոփոխմանը կամ դադարմանը:

Իրավահարաբերության օբյեկտի վերաբերյալ մոտեցումները կարելի է դասակարգել երկու խմբի՝ մոնիստական (միայն սուբյեկտի գործողությունը) և պլյուրալիստական (բազում օբյեկտներ), ընդ որում՝ մարդն իրավահարաբերության օբյեկտ չէ, իսկ նրա մարմինն իր ամբողջությամբ օգտվում է հատուկ իրավական պաշտպանությունից¹²:

Մարդու մարմնի, օրգանի, հյուսվածքի՝ որպես իրավական հարաբերության օբյեկտի, այդ թվում՝ կենսաբանական օբյեկտի, առանձնահատկությունները

Հարց է առաջանում, թե՞ կարող է մարդու մարմինը կամ դրա առանձին մասը դառնալ իրավահարաբերության օբյեկտ:

Մարդու մարմնի կամ օրգանի, հյուսվածքի՝ որպես կենսաբանական օբյեկտի հարցի քննարկումը կարևոր է նաև այն տեսանկյունից, որ այդ օբյեկտները համարվում են իրավական հարաբերության օբյեկտ, օրինակ՝ եթե երիկամի փոխպատվաստման վիրահատություն նախապատրաստելիս բուժաշխատողը կամ որևէ այլ անձ վնասել է երիկամը, ինչի պատճառով անիմաստ է դառնում երիկամի փոխ-

պատվաստումը, ով պետք է պատասխանատվություն կրի և ինչի համար: Արդյոք հարցը պետք է դիտարկենք առողջության պատճառված վնասի, թե՞ երիկամին՝ գույքին, պատճառված վնասի, թե՞ իրավական այլ հարթությունում:

Առկա է մոտեցում, որ մարդու օրգանները և հյուսվածքները համարվում են մարդու ոչ գույքային բարիքներ, որոնց շուրջ ծավալվում են դոնորության և փոխպատվաստման քաղաքացիական հարաբերությունները¹³:

Մեկ այլ մոտեցման համաձայն՝ մարդու օրգանները և հյուսվածքները, որոնք առանձնացվում են մարդուց, համարվում են իր՝ սահմանափակ շրջանառությամբ¹⁴:

Նշվում է նաև, որ արյունը, օրինակ, համարվում է իր, գույք, ինչպես մազը՝ վարսավիրական ծառայություն մատուցելիս, և նման դեպքերում հնացած է համարվում բարոյական պահպանողականների այն մոտեցումը, որ մարդու մարմինը չի կարող լինել իրավական հարաբերության օբյեկտ և ծառայել այլ սուբյեկտի¹⁵:

Արյունը, օրինակ, որն առանձնացվում է օրգանիզմից, հատուկ տեսակի իր է, գույք, որն իրականացնում է մարդու կյանքը փրկելու, առողջությունը վերականգնելու գործառույթ՝ ունենալով սպառողական արժեք: Փոխպատվաստման օրգանները և հյուսվածքները նյութական աշխարհի մասնիկներ են, հետևաբար՝ գույք¹⁶:

Երբ մարդու մարմնից առանձնացվում է օրգան կամ հյուսվածք, դա դառնում է գույք, հետևաբար՝ դեռևս պահպանվում է այդ գույքի սեփականատիրոջ՝ անձի իրավունքը:

Երբեմն նշվում է, որ փոխպատվաստելիս դոնորին հատուցում տրամադրելը ոչ թե դոնորական ծառայության վճարն է կամ ապրանքի՝ երիկամի գինը, այլ՝ փոխհատուցումն է դոնորի

¹¹ Տե՛ս Ա. Վաղարշյան, Պետության և իրավունքի տեսություն-2, դասախոսություններ, Երևան, 2011, էջ 258:
¹² Տե՛ս Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, Պետության և իրավունքի տեսություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2016, էջ 353:
¹³ Տե՛ս Красавчикова Л. О. Понятие и система личных неимущественных прав граждан (физических лиц) в гражданском праве Российской Федерации. М., 1994. С. 101.
¹⁴ Տե՛ս Малейна М. Н. Личные неимущественные права граждан: понятие, осуществление, защита. М., 2001. С. 87.
¹⁵ Տե՛ս Суховерхий В. Л. Гражданско-правовое регулирование отношений по здравоохранению// Сов. государство и право. 1975. №6. С. 109.
¹⁶ Տե՛ս Маргацкая Н. Гражданско-правовые вопросы трансплантации и донорства// Вестн. Моск. ун-та. Сер. 11. Право. 1980. №2. С. 89.

կրած անհարմարությունների, ֆիզիկական և հոգեբանական դժվարությունների¹⁷:

Իրավաբանական գրականության մեջ նաև առկա է մոտեցում, որ իրավունքը պետք է հստակ պատասխան տա, թե մարդու մարմնի մասը կամ հյուսվածքը իրավական հարաբերության օբյեկտ է, թե ոչ¹⁸:

Երբեմն նշվում է, որ մարդու կյանքը և առողջությունը, իրավիճակից կախված, և ոչ նյութական, վերացական բարիք են, և նյութական, գույքային բարիք¹⁹:

Խորհրդային գրականության մեջ երբեմն նշվում էր, որ, օրինակ՝ արյունը ոչ թե նյութական աշխարհի տարր է, այլ՝ օրգանիզմի մաս: Արյունը չունի շուկայական համարժեք, հետևաբար՝ չի կարող գործարքի առարկա դառնալ, ուստի և դոնորությունը չի կարելի դիտարկել որպես քաղաքացիաիրավական հարաբերություն²⁰, իսկ, օրինակ, մեկ այլ մոտեցման համաձայն՝ դոնորության շուրջ մարդկանց հարաբերությունները չեն կարող կառուցվել ապրանքային (նյութական) հիմքի վրա²¹:

Մեկ այլ հեղինակ համարում է, որ կենսաբանական (բիոլոգիական) օբյեկտները պետք է բաժանել 2 խմբի: Առաջին խմբի մեջ ներառվում են այն օբյեկտները, որոնց առանձնացումը դոնորի կյանքին կամ առողջության սպառնալիք չի դառնա, օրգանիզմում չի առաջացնի անդառնալի կորուստ, և որոնց առանձնացումը ժամանակավոր բնույթ ունի, քանի որ դրանք վերականգնվող են, օրինակ՝ արյունը, մազը: Երկրորդ խմբի մեջ ներառվում են այն օբյեկտները, որոնց առանձնացումը դոնորի կյանքում անդառնալի հետևանքներ կառաջացնի, ընդհուպ՝ մահ, օրինակ՝ սիրտը, թոքը: Բացի այդ՝ կենսաբանական օբյեկտները չեն կարող համարվել գույք, իր, քանզի քաղաքացիաիրավական հարաբերության օբյեկտի հատկանիշներից են նյութականությունը, հասանելիությունը, օգտակարությունը, մինչդեռ կենսաբանա-

կան օբյեկտները՝ սիրտը, թոքը, փայծաղը, մեզր, արյունը, բոլորը չէ, որ բավարարում են այս չափանիշները²²:

Կենսաբանական օբյեկտ է համարվում կենդանի կամ անկենդան դոնորի՝ մարդու (դիակի) մարմնի մասը՝ օրգանը, կամ հյուսվածքը, որը հանդես է գալիս որպես իրավական հարաբերության առանձին օբյեկտ (երիկամը՝ փոխպատվաստման դեպքում), որի՝ իրավական հարաբերության օբյեկտ հանդես գալը պայմանավորված է իրավահարաբերության սուբյեկտների կամքով և գիտակցությամբ: Ընդ որում՝ անկենդան դոնորը կենդանության օրոք չպետք է մերժած լինի՝ մահից հետո իր մարմինը որպես կենսաբանական օբյեկտ դիտարկել:

Կենսաբանական օբյեկտի հատկանիշներն են եզակիությունը, անկրկնելիությունը, անմիջական կապը դոնորի հետ, ժամանակավոր լինելը, օգտակարությունը, բացարձակ բնույթը, մարմնականությունը, մարմնից ածանցված լինելը, առանձնացվածությունը, արժեքայնությունը՝ ոչ նյութական իմաստով, օգտագործման կարգի հստակությունը:

Կենսաբանական օբյեկտը պետք է դիտարկել իրավական հարաբերության ինքնուրույն օբյեկտ, քաղաքացիական իրավահարաբերության հատուկ օբյեկտ՝ պաշտպանության հստակ մեխանիզմով:

Իրավահարաբերության օբյեկտն այն ամենն է, ինչի կարգավորմանն ուղղված է իրավահարաբերության սուբյեկտների վարքագիծը:

Սուտոգատության դեպքում՝ նպատակադրված ծնողներ-բժշկական հաստատություն-փոխնակ կին (մայր) համատեքստում, **իրավահարաբերության սուբյեկտները** (փոխնակ մայրը, բժշկական հաստատությունը, նպատակադրված ծնողները) մտնում են հասարակական հարաբերության մեջ, ստանձնում իրա-

¹⁷ Տե՛ս Малеина М.Н. Человек и медицина в современном праве. М., 1995. С. 90.

¹⁸ Տե՛ս Клык Н., Соловьев В. Медицинский кодекс России: каким ему быть?// Рос. юстиция. 1997. №9. С. 22.

¹⁹ Տե՛ս Квернадзе Р.А. Некоторые аспекты становления и развития законодательства в области здравоохранения// Государство и право. 2001. №8. С.104.

²⁰ Տե՛ս Волож З. Право на кровь// Вестн. сов. юстиции. 1928. №7. С. 216.

²¹ Տե՛ս Богомолова Л. Г., Гаврилов О. К. Донорство. Л., 1971. С. 22.

²² Տե՛ս Аполинская Н. В. О статусе биологических объектов в гражданском праве РФ, // Сибирский Юридический Вестник.– 2002.– №4.– С. 14.

վունքներ և պարտականություններ (**իրավահարաբերության բովանդակություն**)՝ դրանով իսկ հասարակական հարաբերությունը վերածելով իրավահարաբերության (*փոխնակ մայրը*՝ նախնական բուժզննում անցնելու, հղիության ընթացքում առողջ ապրելակերպ վարելու, ընթացիկ բժշկական ստուգումներ անցնելու, երեխայի ծնվելուց հետո երեխային նպատակադրված ծնողներին հանձնելու, հատուցում ստանալու, *նպատակադրված ծնողները*՝ ծառայությունների համար վճարում կատարելու, փոխնակ մոր մասնավոր կյանքին անհարկի չմիջամտելու, երեխայի ծնվելուց հետո վերջինիս վերցնելու, *բժշկական հաստատությունը*՝ բժշկական ծառայություններ մատուցելու, համապատասխան վճարում ստանալու և այլն), որտեղ որպես **իրավահարաբերության օբյեկտ** հանդես է գալիս համապատասխան ծառայությունների (սաղմի տեղադրում, հղիության ընթացք, երեխայի ծնունդ) մատուցումը, իսկ ինչ վերաբերում է փոխնակ մոր արգանդին, նշենք, որ դա համարվում է ոչ թե իրավահարաբերության օբյեկտ, այլ՝ իրավահարաբերության սուբյեկտների նպատակին հասնելու միջոց: Մոնիստական մոտեցման համաձայն՝ իրավահարաբերության օբյեկտը կոնկրետ գործողությունն է, սույն դեպքում՝ փոխնակ մոր կողմից համապատասխան ծառայություններ մատուցելը: Պլյուրալիստական մոտեցման համաձայն՝ իրավահարաբերության օբյեկտը լայն հասկացություն է, որը ներառում է ոչ միայն իրավահարաբերության սուբյեկտի գործողությունը (սույն դեպքում՝ փոխնակ մոր կողմից համապատասխան ծառայություններ մատուցելը), այլ նաև գույքը, կենսաբանական օբյեկտները, աշխատանքը, ոչ նյութական բարիքները (սույն դեպքում՝ արգանդը): Այսինքն՝ ստացվում է մի իրավիճակ, երբ փոխնակ մայրը՝ կինը, օգտագործելով իր մարմինը, մատուցում է ծառայություններ, հետևաբար՝ սույն իրավիճակում իրավահարաբերության օբյեկտը երկդիմի է՝ ծառայություն և կենսաբանական օբյեկտ:

Այժմ իրավահարաբերության մոդելի օրինակով դիտարկենք երիկամի փոխպատվաստման իրավիճակը: Սույն դեպքում՝

- **իրավահարաբերության սուբյեկտներն են** երիկամի կենդանի դոնորը (ֆիզիկական անձը, ով տրամադրում է իր երիկամը մեկ այլ

անձի՝ փոխպատվաստման նպատակով), ռեցիպիենտը (ֆիզիկական անձը, ում բուժական նպատակով պետք է փոխպատվաստվի օրգան՝ երիկամ) և բժշկական կազմակերպությունը (իրավաբանական անձը, որը կազմակերպում է համապատասխան բժշկական ծառայությունների մատուցումը),

- **իրավահարաբերության օբյեկտն է** նյութական աշխարհի իրը՝ կենսաբանական օբյեկտը՝ երիկամը,

- **իրավահարաբերության բովանդակությունն է** իրավահարաբերության սուբյեկտների (իր երիկամն անհատույց տրամադրող կատարողը՝ դոնորը, երիկամի պատվիրատուն՝ բժշկական հաստատությունը, որոշ դեպքերում նաև՝ ռեցիպիենտը, երիկամն ստացողը կամ պատվիրատուն և ստացողը՝ ռեցիպիենտը) իրավունքների և պարտականությունների ամբողջությունը (ստանալ լիարժեք տեղեկատվություն սպասվելիք վիրահատական միջամտությամբ օրգան վերցնելու հետևանքով ծագող հնարավոր բարդությունների մասին, վիրահատության հետ կապված բարդությունների դեպքում ստանալ անվճար համապատասխան բուժում, տրամադրել երիկամ և այլն) ուղղված է որոշակի իրավիճակի փոփոխմանը (ռեցիպիենտի առողջության վերականգնում, բարելավում՝ առողջապահական ծառայությունների համատեքստում):

Փաստորեն, մարդու մարմինը կամ դրա առանձին մասերը (օրգան, հյուսվածք, բջիջ) հանդես են գալիս որպես իրավահարաբերության օբյեկտ, երբ իրավահարաբերության սուբյեկտների վարքագիծն ուղղված է կոնկրետ ինչ-որ բանի ստեղծմանը, փոփոխմանը կամ դադարմանը: Այսինքն՝ երբ իրավահարաբերության սուբյեկտներն ստանձնում են իրավունքներ, կրում պարտականություններ, դրսևորում որոշակի վարքագիծ, որը կապված է (առընչվում է) մարդու մարմնի մասի՝ օրգանի, հյուսվածքի կամ բջջի հետ, այսինքն՝ կենսաբանական օբյեկտի հետ, որտեղ հենց մարդու մարմնի մասն է (օրգան, հյուսվածք, բջիջ) համարվում իրավահարաբերություն ստեղծող, փոփոխող կամ դադարեցնող գործոնը, կարող ենք փաստել, որ այն ամենը, ինչի շուրջ իրավահարաբերության կողմերը հարաբերության մեջ են մտել, իրավահարաբերության օբյեկտն է:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք փաստել, որ ժամանակի հրամայականն է, որպեսզի արդիականացնենք հին իրավական կառուցակարգերը, որ ունենանք լիարժեք իրավական կարգավորումներ: Նշվածի համատեքստում անհրաժեշտ է փաստել, որ իրավական հարաբերության էությունն իրավահարաբերության մասնակիցների շահերի, պահանջների բավարարումն է, ուստի այն (իրավական հարաբերության օբյեկտ), ինչին ուղղված է իրավահարաբերության մասնակիցների վարքագիծը, պետք է կոնկրետ լինի, որ հնարավոր լինի խոսել շահերի կամ պահանջների բավարարման մասին:

Իրավունքի տեսությունը պատմականորեն չի ուսումնասիրել մարդու մարմինը՝ որպես իրավահարաբերությունների օբյեկտ, այլ՝ շեշտադրումը կատարել է միայն մարդու՝ ֆիզիկական անձի վրա՝ վերջինիս հետ կապված հարցը դիտարկելով իրավահարաբերության սուբյեկտի համատեքստում: Իզուր չէ, որ հաճախ իրավագիտությանը մեղադրում են, որ զբաղվում է «մաքուր» իրավաբանական, դոգմատիկ հարցերով՝ անտեսելով այնպիսի հարցերի ուսումնասիրումը, որոնք միջճյուղային (օրինակ՝ իրավագիտություն և բժշկագիտություն) բնույթ ունեն: Տուրք չտալով իրավական հարաբերության օբյեկտների մասին միասնական կարծիք չլինելուն՝ կարծում ենք, որ ժամանակի հրամայականն է, որպեսզի անդրադառնանք այնպիսի օբյեկտներին, ինչպիսիք են արյունը, երի-

կամը, սիրտը, ոսկրածուծը և այլն, որոնք այլ կերպ՝ բնութագրվում են որպես մարդու կենսաբանական օբյեկտներ, և հստակ կարգավորենք վերջիններիս շուրջ ծավալվող հարաբերությունները:

Մարդու կենսաբանական օբյեկտները որպես իրավական հարաբերության օբյեկտ դիտարկելը բխում է ոչ միայն այդ օբյեկտների էությունից (համապատասխանում է օբյեկտի հիմնական չափանիշներին՝ միևնույն ժամանակ ունենալով իրենց առանձնահատկությունները), այլ նաև այդ օբյեկտների՝ հասարակական շրջանառության մեջ գտնվելու փաստից (օրինակ՝ արյան փոխներարկում կենդանի դոնորից, սրտի փոխպատվաստում, դիակից հյուսվածքներ վերցնել և փոխպատվաստել ռեցիպիենտին)՝ պայմանավորված վերջիններիս օգտակարությամբ, հասարակության մեջ նշանակությամբ, մարդու կյանքի պահպանման կամ առողջության վերականգնման կարևոր գործառնություն:

Վերջինով պայմանավորված՝ կարծում ենք, որ **մարդու կենսաբանական օբյեկտները լիովին իրավական հարաբերության օբյեկտ են**, իսկ մասնավոր-իրավական ոլորտում դրանք անհրաժեշտ է դիտարկել որպես **քաղաքացիական հարաբերություններում հատուկ պաշտպանության տակ գտնվող և սահմանափակ շրջանառություն ունեցող ինքուրույն օբյեկտ**՝ կարգավորելով դրանց օգտագործման առանձնահատկությունները, կարգը:



ՆԱՐԻՆԵ ՄԱՆԱՅԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի նախագահի խորհրդական,
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵՆՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԵՆ ԱՆԲՈՂՈՔԱՐԿԵԼԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգրք) 1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենսգրքը սահմանում է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ դատարանում և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-րդ կետի համաձայն՝ վարչական դատարան կարող են դիմել նաև վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը (այսուհետև՝ բռնագանձման վերաբերյալ գործեր) հարուցվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ Օրենք) 88-րդ հոդվածի 1.1-րդ մասով

նախատեսված հիմքերով՝ այդ ակտն ընդունված վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա:

«Հանրային իրավական դրամական պահանջ» հասկացությունը տրված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում, որի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները, օրենքով սահմանված կարգով, վարչական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջե պարտադիր կարգով դրամական գումարներ վճարելու պահանջներն են (այսուհետ՝ դրամական պահանջներ)¹:

Օրենքի 88-րդ հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ օրինական ուժի մեջ մտած վճռով տրված կատարողական թերթի հիման վրա, եթե՝

ա) անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է երկու հարյուր հազար դրամը,

բ) ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջի հարկադիր կատարումը հնարավոր չէ առանց նրան սեփականության (այդ թվում՝ ընդհանուր սեփականության) իրավունքով պատկանող միակ բնակարանի բռնագանձման,

գ) իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը:

Վերոնշյալ իրավանորմերի մեկնաբանմանությունից պարզ է դառնում, որ Օրենսդիրը,

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 101 2017

¹ Տե՛ս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածը:

սահմանելով հանրային իրավական դրամական պահանջներով դատարան դիմելու վարչական մարմինների և պաշտոնատար անձանց իրավունքը՝ որպես հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման հիմք, սահմանում է վարչական մարմնի կամ պաշտոնատար անձի ընդունած վարչական ակտը²:

ՎԴ օրենսգրքի 216.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բռնագանձման վերաբերյալ գործերով հայցադիմումը ներկայացվում է նույն օրենսգրքի 74-րդ հոդվածին համապատասխան: Հայցադիմումին կցվում է նաև բռնագանձման պահանջով վարչական դատարան դիմելու համար հիմք հանդիսացած վարչական ակտը:

Վերը նշված նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ հանրային իրավական դրամական պահանջի և վարչական մարմնի՝ այդ պահանջի առհասարակ հարկադիր կատարման իրավունքի գոյության համար անհրաժեշտ և պարտադիր նախադրյալ է Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջե պարտադիր կարգով տվյալ դրամական գումարը վճարելու պարտավորություն առաջադրող վարչական ակտի առկայությունը, իսկ դրամական պահանջի, հատկապես՝ դատական կարգով հարկադիր կատարման իրավունքի գոյության համար՝ նաև (բացի անբողոքարկելի դարձած հիշյալ վարչական ակտի գոյությունից) անհրաժեշտ և պարտադիր նախադրյալ է Օրենքի 88-րդ հոդվածի 1.1-րդ մասով նախատեսված հիմքերի (հիմքերից որևէ մեկի) առկայությունը:

Այսպիսով՝ վարչական դատավարության կարգով ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ հատուկ վարույթի գործերը հարուցվում են Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջե պարտադիր կարգով դրամական գումարներ վճարելու վերաբերյալ վարչական ակտ կայացրած վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից Վարչական դատարան ներկայացված հայցա-

դիմումի հիման վրա՝ անբողոքարկելի դարձած վարչական ակտի³ պարտադիր առկայությամբ: Այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջով գործ հարուցելու նպատակով վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք վարչական դատավարության կարգով վարչական դատարան կարող են հայցադիմում ներկայացնել միայն այն դեպքում, երբ օբյեկտիվ իրականության մեջ առկա է հոգուտ Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջեի՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջը հիմնավորող համապատասխան վարչական ակտ, որը դարձել է անբողոքարկելի և, միաժամանակ՝ առկա է Օրենքի 88-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված վերոհիշյալ հիմքերից առնվազն մեկը: Հակառակ պարագայում, այն է՝ եթե հոգուտ Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջեի ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջը հիմնավորող համապատասխան վարչական ակտ օբյեկտիվ իրականության մեջ գոյություն չունի, կամ առկա է համապատասխան վարչական ակտ, սակայն անբողոքարկելի չի դարձել, կամ բացակայում են Օրենքի 88-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված հիմքերը, ներկայացված հայցադիմումը (դրանով պայմանավորվող վեճը) դատարանում քննության ենթակա չի լինի:

Վերոգրյալից հետևում է, որ Օրենսդիրը վարչական մարմինների և պաշտոնատար անձանց՝ ընդդեմ ֆիզիկական կամ իրավաբանական անձի՝ հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջով հայցադիմում ներկայացնելու՝ նշված վեճի լուծման պահանջով վարչական դատարան դիմելու, իրավունքի գոյությունը պայմանավորել է ՎԴ օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-րդ կետով, 216.1-րդ հոդ-

² Վարչական ակտ հասկացությունը տրված է նույն օրենքի 53-րդ հոդվածում:

³ Վարչական ակտն անբողոքարկելի է դառնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով սահմանված ժամկետներում՝ տվյալ վարչական ակտը չբողոքարկելիս:

վածով և Օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով ամրագրված որոշակի պայմանների առկայությամբ, որոնք պետք է դիտարկել դատարան դիմելու իրավունքի դրական նախադրյալների շրջանակներում, քանի որ դրանց բացակայությունն ինքնին պայմանավորում է վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջով դատարան դիմելու և նյութաիրավական պահանջով հանդես գալու հնարավորության՝ հայցադիմում ներկայացնելու իրավունքի, նախադրյալի բացակայությունը:

Վերը նշված նորմերի համադրումից և վերլուծությունից պարզ է դառնում, որ Օրենքի 88-րդ հոդվածի 1.1-րդ մասում կիրառվում է վարչական ակտի հիման վրա գանձման ենթակա գումար հասկացությունը, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.2-րդ հոդվածում՝ բռնագանձման պահանջով վարչական դատարան դիմելու համար հիմք հանդիսացած վարչական ակտը:

Տվյալ դեպքում հարց է առաջանում. ՀՀ վարչական դատարան դիմելու համար արդյոք վարչական ակտով առաջադրված գումարը պետք է գերազանցի 200000 դրամը, թե՛ ակտի հիման վրա առաջադրված գումարը:

Այսպես. վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով նախատեսված հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալու օրվանից կամ տուգանքը նշանակելու մասին որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում գանգատը կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում փաստացի չվճարված տուգանքի չափն ավելանում է 25 տոկոսով:

Սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով նախատեսված հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալու օրվանից կամ տուգանքը նշանակելու մասին որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում գանգատը կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից ստանալու օրվանից 60 օրվա ընթացքում կամ տուգանքը տարաժամկետելու մասին դիմումում նշված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում փաստացի չվճարված տուգանքի չափն ավելանում է 50 տոկոսով:

Նշված նորմի մեկնաբանությունից չի բխում, որ Օրենսդրի կողմից պարտադիր պահանջ է սահմանված գումարի ավելացման դեպքում վարչական ակտ կայացնելը: Այսինքն՝ նշված նորմի մեկնաբանությունից բխում է, որ վարչական տուգանքը չվճարելու դեպքում վրա է հասնում հետևանք՝ 25 կամ 50 տոկոսով տուգանքի գումարն ավելանալու տեսքով: Տվյալ դեպքում հարց է առաջանում. արդյոք վարչական մարմինը տվյալ դեպքում պարտավոր է կայացնել վարչական ակտ՝ տուգանքի գումարը 25 կամ 50 տոկոսով ավելանալու մասին:

Ավելի պատկերավոր լինելու համար ներկայացնենք օրինակով: Այսպես. ճանապարհային երթևեկության կանոնների խախտման պատճառով անձը ենթարկվել է վարչական պատասխանատվության 150000 դրամի չափով: Վարչական մարմինը, տեսնելով, որ տուգանքի գումարը՝ 150000 դրամը, անձի կողմից օրենքով սահմանված ժամկետում չի վճարվել, և վարչական ակտը դարձել է անբողոքարկելի, հայց է ներկայացնում ՀՀ վարչական դատարան՝ 225000 դրամ գումարի բռնագանձման պահանջի մասին՝ հիմնվելով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 4-րդ մասի վրա:

Դատական պրակտիկան սույն գործերով հակասական է⁴:

Անդրադառնալով նշված խնդրին՝ ՀՀ Սահ-

⁴ Դատարանը թիվ ՎԴ/6423/05/15 վարչական գործով 18.07.2016թ. կայացրած վճռով 225000 դրամ բռնագանձելու պահանջի մասին հայցը բավարարել է մասնակիորեն՝ պատասխանողից հօգուտ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության բռնագանձել է 75000 ՀՀ դրամ, իսկ մնացած մասով հայցը մերժել է: Դատարանը թիվ ՎԴ/4265/05/15 վարչական գործով կայացրած վճռով 350000 դրամ բռնագանձելու պահանջի մասին հայցը բավարարել է մասնակիորեն՝ 105000 ՀՀ դրամի մասով, մինչդեռ ՀՀ վարչական վերաքննիչ

մանադրական դատարանն արձանագրել է. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի ուսումնասիրությունից բխում է, որ օրենսգիրքը չի նախատեսում այնպիսի իրավախախտում, ինչպիսին նշանակված տուգանքն օրենքով սահմանված ժամկետում չվճարելն է:

Հիմք ընդունելով նշված հանգամանքը՝ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ նշանակված տուգանքն օրենքով սահմանված ժամկետում չվճարելը վարչական իրավախախտում չէ, հետևաբար՝ օրենսգրքի տվյալ դրույթով սահմանված տուգանքի չափի ավելացման դեպքում բացառվում է վարչական վարույթի հարուցումը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Տուգանքի չափի ավելացումը վարչական տույժի տեսակ և վարչական պատասխանատվության միջոց չէ, այլ կոչված է կանխարգելելու օրենքով սահմանված կարգով նշանակված տույժերը սահմանված ժամկետում չվճարելու հնարավոր դեպքերը և բարձրացնելու անձանց կարգապահությունը պետության առջև պարտավորությունների բարեխիղճ կատարման գործում⁵:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության և ՀՀ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման համադրումից պարզ է դառնում, որ Օրենսդիրը

տուգանքի չափի ավելացումը սահմանել է որպես նշված ժամանակամիջոցի լրանալու հետևանքով ինքնաբերաբար տեղի ունեցող իրադարձություն, այսինքն՝ տուգանքի չափի ավելացման փաստը վարչական վարույթի առարկա չի կարող դառնալ, քանի որ ավելացումը տեղի է ունենում օրենքի ուժով, և այդ կապակցությամբ վարչական ակտ ընդունելու անհրաժեշտություն չկա:

Հետևաբար, կարծում ենք՝ եթե գանձման ենթակա գումարը գերազանցում է 200000 դրամը և ավելացել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի ուժով, ապա տվյալ դեպքում վարչական մարմնի վրա ավելորդ պարտականություն դնելն իրավաչափ չէ: Միաժամանակ, հարկ է նշել, որ տվյալ դեպքում հարց է առաջանում. եթե վարչական մարմինը կայացրեց նոր վարչական ակտ՝ հիմնվելով հիմնական վարչական ակտի վրա, ապա տվյալ վարչական ակտով կարող է արդյոք վերացնել մայր վարչական ակտը. եթե՝ այո, ապա չի՞ ստացվում արդյոք մի իրավիճակ, երբ գանձման մասին որոշման հիմքում ընկած վարչական ակտն արդեն իսկ վերացված է, իսկ հակառակ պարագայում ստացվում է, որ նույն իրավախախտման վերաբերյալ առկա են 2 տարբեր վարչական ակտեր՝ մայր վարչական ակտը և դրա հիման վրա տուգանքի գումարի

դատարանի կողմից 10.03.2017 թվականի որոշմամբ տվյալ դատական ակտի մերժված մասի դեմ բերված վերաքննիչ բողոքը բավարարվել է: Վերաքննիչ դատարանը որոշել է, որ գործի վարույթը ենթակա է կարճման՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ. «245000 ՀՀ դրամի մասով հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջը հիմնավորող համապատասխան վարչական ակտ օբյեկտիվ իրականության մեջ գոյություն չունի»:

Թիվ ՎԴ3/0013/05/17 վարչական գործով Դատարանը հայցադիմումի ընդունումը մերժել է՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ. «...Ապահովված չէ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասի «ա» կետով նախատեսված պարտադիր հիմքը, քանի որ 16.05.2016 թվականի թիվ ԱԹ-792020 որոշմամբ նշանակված տուգանքի գումարը՝ ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը, ինքնին չի գերազանցում է երկու հարյուր հազար դրամը»:

Դատարանը թիվ ՎԴ/7757/05/16 վարչական գործով հայցադիմումը՝ 250000 դրամ բռնագանձելու պահանջի մասով, ընդունել է վարույթ, իսկ 125000 դրամի մասով՝ հայցադիմումի ընդունումը մերժել է՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ 375000 ՀՀ դրամի չափով հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջը հիմնավորող համապատասխան վարչական ակտը բացակայում է, վերջինս կայացվել է 250000 դրամի մասով:

Թիվ ՎԴ/8880/05/16 վարչական գործով ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության հայցը՝ 225000 դրամ գումարի բռնագանձման պահանջի մասին, բավարարվել է:

⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 13.11.2012 թվականի թիվ ՍԴՈ-1056 որոշումը: ՀՀ Սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ թիվ ՍԴՈ-1007 որոշմամբ քննել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի առաջին պարբերության սահմանադրականության հարցը, որը վերաբերում է վարչական ակտով նախատեսված տուգանքի չվճարման հետևանքով դրա կրկնապատկման հարցին:

Որոշման պատճառաբանական մասի 6-րդ կետում Սահմանադրական դատարանը նշել է, որ նշված կարգը սահմանված է օրենքով՝ որպես համապատասխան վիճակը վրա հասնելու դեպքում ինքնաբերաբար, իրավունքի ուժով գործող կանոն, և դրա համար լրացուցիչ չի պահանջվում վարչական ակտի ընդունում:

գանձման վերաբերյալ կայացված վարչական ակտը: Տվյալ դեպքում չեն բացառվում իրավիճակները, երբ երկու վարչական ակտերն էլ դառնան անբողոքարկելի, և վարչական մարմինը 2 դեպքում էլ դիմի գումարի գանձման պահանջով:

Հարկ ենք համարում նշել, որ նշված խնդիրը վերաբերում է նաև հարկային մարմինների կողմից կայացվող վարչական ակտերին: Այսպես՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Նշված նորմի վերլուծությունից պարզ է դառնում, որ հարկային պարտավորությունների վճարման ուշացման դեպքում հարկային մարմինը կարող է նշված գումարները գանձել միայն այն դեպքում, երբ կայացրել է վարչական ակտ ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0,15 տոկոսի չափով:

Սույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկ վճարողները թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար հարկի գումարը, ինչպես նաև սույն օրենքի 13.13-րդ հոդվածի 1-ին մասի, 23-27, 28.5 և 31 հոդվածների համաձայն հաշվարկված հարկային պարտավորությունները և սույն օրենքի 26-րդ հոդվածի երրորդ պարբերությամբ սահմանված վնասի հատուցման գումարները, բյուջե են վճարում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում: Ստուգման ակտով առաջադրված հարկի գումարների նկատմամբ նշված 10-օրյա ժամկետում սույն օրենքի 23 հոդվածով սահմանված տույժերը չեն հաշվարկվում:

Այդ ժամկետը լրանալուց հետո ստուգման ակտով առաջադրված հարկի գումարների չվճարման կամ մասնակի վճարման դեպքում սույն օրենքի 23 հոդվածով սահմանված տույժերի հաշվարկը վերսկսելիս նշված 10-օրյա ժամկետը հաշվի չի առնվում:

Նշված նորմի մեկնաբանումից պարզ է դառնում, որ ստուգման ակտով առաջադրված հարկի գումարի վճարման համար սահմանված է 10-օրյա ժամկետ, որի ընթացքում վճարելով առաջադրված գումարը՝ անձն ազատվում է օրենքով սահմանված տույժերի վճարումից, այսինքն՝ նշված ժամկետով վարչական (ստուգման) ակտով առաջադրված հարկային պարտավորության նկատմամբ տույժերի հաշվարկը կասեցվում է՝ առաջադրված գումարն ամբողջությամբ վճարելու դեպքում:

Մինչդեռ, ինչպես արդեն նշվել է՝ եթե վարչական մարմինը նպատակ է հետապնդում գանձելու ստուգման ակտով առաջադրված հարկային պարտավորությունը, ապա պարտավոր է սպասել մինչև տվյալ վարչական ակտի անբողոքարկելի դառնալը, որն օրենսդրի կողմից սահմանված պարտադիր պահանջ է:

Փաստորեն, նկարագրված իրավիճակում ստուգանքի գումարը կրկնապատկվում է արդեն օրենքի ուժով, և առանձին վարչական ակտի կայացում կրկնապատկման համար օրենքով սահմանված չէ, մինչդեռ առկա իրավակարգավորման վերլուծությունից պարզ է դառնում, որ և՛ ստուգման ակտով առաջադրված գումարի, և՛ տույժերի գանձման համար հարկ վճարողներից տուգանքի և դրա կրկնապատկված չափի գանձման համար վարչական մարմնի կողմից անհրաժեշտ է վարչական ակտի (գումար գանձելու մասին որոշում) ընդունում՝ հիմքում դնելով ստուգման ակտը, տուգանքի մասին վարչական ակտը, իսկ առաջադրված հարկային պարտավորությունը կարող է գանձման ներկայացվել՝ ժամանակին չվճարված գումարը գանձելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո միայն:

Սույն գործերով պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նմանատիպ իրավիճակներում վարչական մարմնի կողմից կայացվում է 2 որոշում, այսինքն՝ եթե թիվ 1 վարչական ակտով անձին առաջադրվել է 150000 դրամի հարկային պարտավորություն,

● ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ № 101 2017

և օրենքով սահմանված ժամկետում նրա կողմից պարտավորությունը չի կատարվել, ապա վարչական մարմինը կայացնում է թիվ 2 վարչական ակտը՝ հիմքում դնելով թիվ 1 վարչական ակտը, և դրանով առաջադրված պարտավորության նկատմամբ հաշվարկում տույժ և տուգանք, որն էլ անբողոքարկելի դառնալուց հետո ներկայացնում է կատարման:

Այսինքն՝ ստացվում է, որ նույնատիպ իրավիճակներում տարբեր վարչական մարմիններ տարբեր գործելաոճ են որդեգրել, ինչի պատճառով մի մարմնի կողմից կայացվում է գումարի գանձման մասին որոշում՝ հիմքում դնելով մայր վարչական ակտը, մյուսի կողմից՝ ոչ:

Բացի վերը նշվածից՝ կարծում ենք, որ տվյալ հոդվածի շրջանակներում անհրաժեշտ է վերլուծության առարկա դարձնել նաև Օրենքի 88-րդ հոդվածի 1.1-րդ մասի «գ» կետը:

Այսպես՝ նշված նորմի «գ» կետի՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի համապատասխան, տառացի մեկնաբանելիս ակնհայտ է դառնում, որ իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գումարի բռնագանձման պահանջով վարչական մարմինը կարող է դիմել դատարան միայն այն դեպքում, եթե տվյալ անձին պատկանող գույքի արժեքն ավելի քիչ է (չի բավարարում), քան անբողոքարկելի ակտի հիման վրա բռնագանձման ենթակա գումարը:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ նշված նորմի «ա» և «բ» կետերով սահմանված պայմանները տարածելի չեն «գ» կետի նկատմամբ այն հիմնավորմամբ, որ տվյալ կետերում խոսքը վերաբերում է բացառապես ֆիզիկական անձին, իսկ «գ» կետի կարգավորումները վերաբերում են անհատ ձեռնարկատիրոջն ու իրավաբանական անձին, որպիսին չէ ֆիզիկական անձը:

Նշվածի շնորհիվ հանգում ենք այն հետևության, որ եթե բռնագանձման ենթակա գումարը գերազանցում է 200000 դրամը, կամ կատարողական վարույթն ավարտվել է այն հիմքով, որ բռնագանձում պետք է տարածվի միակ բնակարանի վրա, ապա վարչական մարմինը կարող է դիմել դատարան բացառապես այն դեպքում, երբ պարտապանը ֆիզիկական անձ է:

Այսինքն՝ այն դեպքում, օրինակ, երբ բռնագանձման ենթակա գումարը գերազանցում է 200000 դրամը, սակայն պարտապանն անհատ ձեռնարկատեր է կամ իրավաբանական անձ, վարչական մարմինը չի կարող վկայակոչել Օրենքի 88-րդ հոդվածը, քանի որ նշված գումարի չափը վերաբերելի է միայն ֆիզիկական անձանց, իսկ անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց համար գումարային որևէ սահմանափակում առկա չէ, և վարչական մարմինը նշված անձանցից գումար բռնագանձելու պահանջով կարող է դատարան դիմել միայն Օրենքի 88-րդ հոդվածի 1.1-րդ մասի «գ» կետով սահմանված հիմքի առկայության դեպքում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածում սպառնիչ կերպով շարադրված են կատարողական վարույթն ավարտելու դեպքերը: Այդ հոդվածում որպես կատարողական վարույթն ավարտելու հիմք նշված է ինչպես պարտապանի գույք կամ եկամուտներ չունենալը (1-ին մասի 3-րդ կետ), այնպես էլ պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար պարտապանի գույքի բավարար չլինելը (1-ին մասի 4-րդ կետ):

Այսինքն՝ հարկադիր կատարողը յուրաքանչյուր դեպքում, երբ հայտնաբերում է վերը նշված հիմքերից որևէ մեկը (պարտապանի որևէ գույք չի հայտնաբերվել, կամ հայտնաբերված գույքը բավարար չէ պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար) պարտավոր է ավարտել կատարողական վարույթը, մինչդեռ Օրենքի 88-րդ հոդվածի 1.1-րդ մասի «գ» կետում՝ որպես դատարան դիմելու հիմք, նշված է միայն այն դեպքը, որի համաձայն՝ իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը, այսինքն՝ վարչական մարմինը դատարան կարող է դիմել միայն այն դեպքում, եթե կատարողական վարույթի ընթացքում պարզվել է, որ իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է նրա գույքի արժեքը, այսինքն՝ պարտապանն ունի գույք, սակայն տվյալ գույքի արժեքը պակաս է պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար, և

հարկադիր կատարողն ավարտել է կատարողական վարույթը նշված հիմքով:

Կարծում ենք, որ նշված դեպքում Օրենսդրի կողմից միայն նշված հիմքով դատարան դիմելու իրավունք սահմանելը պայմանավորված է այն տրամաբանությամբ, որ անձի գույքի անբավարարության դեպքում միայն դատարանն է իրավասու անձին զրկելու սեփականությունից⁶, իսկ տվյալ դեպքում հայցի հնարավոր բավարարման դեպքում անձը կարող է զրկվել իր միակ գույքից:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 1952 թվականի մարտի 20-ի արձանագրության (այսուհետ՝ Կոնվենցիայի 1-ին արձանագրության) 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր սեփականությունից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր սեփականությունից, բացառությամբ՝ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Այսինքն՝ անձը կարող է զրկվել սեփականությունից միայն նշված հիմքերի առկայության դեպքում:

Նշվածից ելնելով՝ կարծում ենք, որ Օրենսդրի կողմից սահմանվել են կատարողական վարույթն ավարտելու տարբեր հիմքեր, և նշված հիմքերից միայն պարտապանի գույքի անբավարարության հիմքով կատարողական վարույթն ավարտելու դեպքում վարչական մարմինը կարող է դիմել դատարան՝ գումարի բռնագանձման պահանջով, իսկ պարտապանի գույքի չհայտնաբերելը որևէ կերպ չի կարող մեկնաբանվել՝ որպես պարտապանի գույքի անբավարարություն:

Ավելին՝ պարտապանի գույքի չհայտնաբերման հիմքով կատարողական վարույթն ավարտելով՝ վարչական մարմինը հստակ նշում է, որ տվյալ պարտապանը չունի որևէ գույք, հետևաբար՝ անհնաստ է նշված հարցի հետ կապված կրկին դատարան դիմելը: Նշված դեպքում ստացվում է շրջապտույտ, որի պատճառով ծանրաբեռնվում է դատարանը՝ քննության առարկա դարձնելով իրեն ոչ ընդդատյա վեճեր, և հարկադիր կատարման ծառայությունը՝ ստիպված լինելով նույն հարցի վերաբերյալ կրկին հարուցել կատարողական վարույթ և կրկին նշել, որ պարտապանին պատկանող որևէ գույք չի հայտնաբերվել:

Վերը նշվածից հանգում ենք այն հետևության, որ այն պարագայում, երբ կատարողական վարույթն ավարտվել է այն հիմքով, որ հնարավոր չի եղել հայտնաբերել պարտապանին պատկանող որևէ գույք, անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա գումարի բռնագանձման պահանջը չի կարող քննության առարկա դառնալ ՀՀ վարչական դատարանում:

Անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա գումարի բռնագանձման վերաբերյալ գործերով դատական պրակտիկայի ուսումնասիրությունից հանգում ենք այն հետևության, որ, թեև առկա դիրքորոշումները տարբեր են, սակայն, այնուամենայնիվ, գերիշխում է այն տեսակետը, որ վարչական ակտով նախատեսված տուգանքի չվճարման պատճառով ավելացված գումարի գանձման համար պետք է ընդունվի առանձին վարչական ակտ, հակառակ դեպքում վարչական ակտը պետք է կատարման ենթարկվի արտադատական կարգով:

Միաժամանակ, հարկ է նշել, որ միջազգային փորձի⁷ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վարչական ակտերի հիման վրա գումարի բռնագանձման վարույթների առկայությունը տարածված երևույթ չէ⁸:

⁶ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մաս:

⁷ Ուսումնասիրության առարկա են դարձվել Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Հունաստանի, Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի, Վրաստանի վարչական դատավարության օրենսգրքերը:

⁸ Գումարի բռնագանձման պահանջով դատարան դիմելու իրավունք սահմանված է Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգրքի 286-րդ հոդվածով: Ղազախստանի վարչական դատավարության օրենսգրքում խոսվում է դատական ծախսերի բռնագանձման հայցերի մասին:

ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՀՀ ԱԺ պատգամավոր, ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցիչ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ (ԳԻՏԱԿԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)

Հոդվածը նվիրված է միջազգային իրավունքի «հայեցողության սահմաններ» սկզբունքին, խորը վերլուծության է ենթարկված նշված սկզբունքը, բացահայտված են դրա կիրառման լայն սահմանները ոչ միայն պետությունների, այլև միջազգային կազմակերպությունների կողմից: Հոդվածում վեր են հանված սկզբունքի կիրառման սահմանները՝ դրա կիրառման կոնկրետ ոլորտներից կախված, մանրամասն անդրադարձ է կատարված Եվրոպական դատարանի կողմից քննարկվող սկզբունքի կիրառման համար իր նախադեպային իրավունքով ձևավորված հիմնական եղանակներին և հիմքերին, ինչի շնորհիվ ձևավորվել են մի շարք չափանիշներ, որոնց գործադրմամբ Դատարանը որոշում է յուրաքանչյուր պետության հայեցողության սահմանները:

Բանալի բառեր. միջազգային իրավունք, հայեցողության սահմաններ, հայեցողության ազատություն, միջազգային կազմակերպություններ, տրիբունալներ, Եվրոպական դատարան:

ГЕВОРГ КОСТЯНИ

Депутат парламента РА,
представитель РА в Европейском
суде по правам человека,
кандидат юридических наук, доцент

ПРИМЕНЕНИЕ ПРИНЦИПА ГРАНИЦ ДИСКРЕЦИЙ В МЕЖДУНАРОДНОМ ПРАВЕ И ЕГО НАПРАВЛЕННОСТЬ (НАУЧНО-АНАЛИТИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

Статья посвящена принципу «границ дискреции (усмотрения)» в международном праве, в ней данный принцип подвергнут тщательному анализу, раскрыты широкие границы его применения не только государствами, но и международными организациями. В статье выявлены границы применения принципа, в зависимости от конкретной сферы его применения, тщательно представлены сформированные Европейским судом основные способы и основания применения данного принципа в своей судебной практике, в результате которой был сформирован ряд критериев, посредством которых суд устанавливает границы дискреционных полномочий каждого государства.

Ключевые слова: международное право, границы дискреции, свобода усмотрения, международные организации, трибуналы, Европейский суд.

GEVORG KOSTANYAN

Member of the National Assembly of RA,
Government Representation Before the
European Court Of Human Rights, PhD in Law

APPLICATION OF THE PRINCIPLE OF “THE SCOPE OF DISCRETION” IN INTERNATIONAL LAW AND ITS TENDENCY (SCIENTIFIC-ANALYTICAL RESEARCH)

The article is dedicated to the principle of “the scope of discretion” in international law. It deeply discusses current principle, and reveals the scope of its wide application not only by the states but also by the international organizations. As well as it explores the scope of application of the principle depending on the specific field of its application. A detailed analysis is demonstrated regarding the case-law of the European Court of Human Rights on the main manners and grounds of application thereof, according to which the Court has set standards on deciding the scope of state discretion.

Keywords: international law; scope of discretion; international organizations; tribunals; European Court of Human Rights.

ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ԱՆՁԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Սույն հոդվածում քննարկվել են անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության նյութական արժեքների էությունը, բովանդակությունը և բնութագրական հատկանիշները:

Հոդվածում լայնորեն օգտագործվել են մասնագիտական գրականության, դատական պրակտիկայի և նորմատիվ նյութերը, որոնց համակողմանի վերլուծության արդյունքների հիման վրա հեղինակը ձևակերպել է գիտական-գործնական նշանակություն ունեցող առաջարկություններ և եզրահանգումներ:

Բանալի բառեր. անձի անվտանգություն, քրեաիրավական պաշտպանություն, պատիվ, արժանապատվություն, նյութական արժեքներ, կյանքի իրավունք:

ВАРДГЕС САРГСЯН

Соискатель

МАТЕРИАЛЬНЫЕ БЛАГА УГОЛОВНО-ПРАВОВОЙ ЗАЩИТЫ БЕЗОПАСНОСТИ ЛИЧНОСТИ

В данной статье были рассмотрены сущность, содержание и характерные черты материальных благ уголовно-правовой защиты безопасности личности.

В статье широко использовались профессиональная литература, материалы судебной практики и нормативные материалы, на основании результатов анализа которых автор сформулировал предложения и выводы научно-практического значения.

Ключевые слова: безопасность личности, уголовно-правовая защита, честь, достоинство, материальные блага, право на жизнь.

YARDGES SARGSYAN

Research Applicant

MATERIAL VALUES OF THE CRIMINAL-LAW PROTECTION OF THE SECURITY OF PERSON

In this article, the essence, content and characteristic features of the material values of the criminal-law protection of the personal security are examined.

Professional literature, materials of judicial practice and normative materials have been widely used in this article, based on the results of analysis of which the author has formulated proposals and conclusions of scientific and practical importance.

Keywords: personal security, criminal-law protection, honour, dignity, material values, right to life.

* * *

ԱՐԳԻՇՏԻ ՔՅԱՐԱՄՅԱՆ

Երևան քաղաքի դատախազության դատախազ

ՀԱՅԿ ԵՐԵՄՅԱՆ

Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազ

ԳՈՐԾՈՒՆ ԶԴՋԱԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հոդվածում անդրադարձ է կատարվել գործուն զրջալու ինստիտուտի քրեաիրավական և քրեադատավարական վերլուծությանը: Քննարկվել և մեկնաբանվել են հիշյալ ինստիտուտի կիրառման նախապայմանները, ներկայացվել են ինչպես տեսական մակարդակում քննարկվող, այնպես էլ գործնականում ընդունված մոտեցումներից տարբերվող դիրքորոշումներ: Անդրադարձ է կատարվել նաև քննարկվող ինստիտուտի կիրառման կարգին, այդ առումով իրավական կարգավորման բացակայության պայմաններում կիրառելի պրակտիկային:

Հոդվածում մոտեցումներ են առաջադրվել առ այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածով նախատեսված դրական պայմանները կատարած անձը պետք է պարտադիր ազատվի քրեական պատասխանատվությունից, և այդ հարցը չպետք է թողնվի վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը: Այս համատեքստում անդրադարձ է կատարվել անգլոսաքսոնական իրավական համակարգում լայն կիրառում ստացած՝ արդարադատության հետ գործարքի ինստիտուտին:

Հոդվածում ներկայացվել և մեկնաբանվել են նաև առաջին անգամ հանցանք կատարած անձ, մեղայականով կամովին ներկայանալ, հանցագործությունը բացահայտելուն աջակցել, հանցագործությամբ պատճառված վնասը հատուցել կամ հարթել հասկացությունները:

Բանալի բառեր. գործուն զրջալ, ինստիտուտի կիրառման նախապայմաններ, կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, արդարադատության հետ գործարք, մեղմացնող հանգամանք, վնասը հատուցել կամ հարթել, հանցագործությունը բացահայտելուն աջակցել, մեղայականով կամովին ներկայանալ:

● ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ № 101 2017

АРГИШТИ КЯРАМЯН

Прокурор прокуратуры города Еревана

ԱՅԿ ԵՐԵՄՅԱՆ

Прокурор прокуратуры Гегаркуникской области

УГОЛОВНО-ПРАВОВОЙ И УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНЫЙ АНАЛИЗ ИНСТИТУТА ДЕЯТЕЛЬНОГО РАСКАЯНИЯ

В статье совершен уголовно-правовой и уголовно-процессуальный анализ института деятельного раскаяния. Обсуждены и прокомментированы предварительные условия данного института, продемонстрированы как на теоретическом уровне обсужденные, так и отличающиеся от общепризнанных практических подходов позиции. Также представлены порядок применения данного института, существующая практика при условиях отсутствия правового урегулирования в данной сфере.

В статье представлена позиция о том, что лицо, обеспечившее положительные условия статьи 72-ой Уголовного кодекса РА, в обязательном порядке должно быть освобождено от уголовной ответственности, и решение данного вопроса не должно оставаться на предусмотрение органа, осуществляющего уголовное производство. В данном контексте проанализирован институт сделки с правосудием, который обладает широкой применимостью в англосаксонской правовой системе.

В статье также представлены и прокомментированы понятия «лицо, впервые совершившее преступление», «добровольная явка с повинной», «способствование раскрытию преступления», «возмещение или заглаживание ущерба, причиненного преступлением».

Ключевые слова: деятельное раскаяние, предпосылки применения института, может быть освобождено от уголовной ответственности, сделка с правосудием, смягчающее обстоятельство, возмещение или заглаживание ущерба, способствование раскрытию преступления, добровольная явка с повинной.

ARGISHTI KYARAMYAN

Prosecutor at Prosecutor's Office of Yerevan City

HAYK YEREMYAN

Prosecutor at Prosecutor's Office of Gegharkunik Region

THE CRIMINAL AND CRIMINAL PROCEDURE ASPECTS OF THE INSTITUTE OF REPENTANCE

The criminal and criminal procedure aspects of the institute of repentance are discussed in this Article. The following issues have been discussed and commented: preconditions for the implementation of the above mentioned institute, both issues which are being discussed at the theoretical level and different approaches from those being accepted in practice have been presented. This Article also analyzes the procedure for the implementation of the above mentioned institute and in the sense of the lack of legal regulation the implemented practice.

It is suggested in the Article, that a person who fulfilled all the positive conditions mentioned in the Article 72 to the Criminal Code of RA shall be exempted from criminal liability and this question shall not be left on the discretion of the body conducting criminal proceedings. In this context, reference has been made to the well-accepted institute of plea-bargaining in the Anglo Saxon legal system.

The concepts of “a person committed a criminal offence for the first time”, “voluntary surrender”, “assisting to the revelation of the crime”, “compensation or mitigation of the damages caused by crime” has been presented and analyzed in the Article.

Keywords: Repentance, preconditions for the implementation of the institute, may be exempted for the criminal liability, plea bargaining, mitigation factor, compensation or mitigation of the damage, assisting to the revelation of the crime, surrender.

* * *

ԲԱԳՐԱՏ ՂԱԶԻՆՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական,
արդարադատության երկրորդ դասի խորհրդական,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Սույն հոդվածի շրջանակներում հեղինակը քննարկման առարկա է դարձրել Հանրապետության գործադիր իշխանության մարմինների համակարգը՝ հաշվի առնելով մինչ օրս տեղի ունեցած սահմանադրական զարգացումների արդյունքները:

Համադրված դիտարկելով սահմանադրական և օրենսդրական իրավակարգավորման կառուցակարգերը՝ հեղինակը դիտարկել է սկզբունքային երկու հարցադրում, այն է՝

ա) գործադիր իշխանության մարմինների համակարգի սահմանման նորմատիվ-իրավական հիմքը, դրա ազդեցությունը համակարգի կայունության վրա,

բ) հանրապետական գործադիր մարմինների իրավական կարգավիճակի և գործառնական տարանջատման անհանահատկությունները:

Կատարված ուսումնասիրության արդյունքով հեղինակը, հաշվի առնելով նոր սահմանադրական լուծումները, առաջարկել է որոշակի օրենսդրական լուծումներ, որոնք հնարավորություն կտան հստակեցնելու հանրապետական գործադիր մարմինների գործառնական դերակատարումը պետական կառավարման համակարգում:

Բանալի բառեր. կառավարություն, նախարարություն, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմին, հանրապետական գործադիր մարմին, գործադիր իշխանության մարմինների համակարգ, գործառնությանին տարանջատում

БАГРАТ КАЗИНЯН

Советник министра юстиции РА,
кандидат юридических наук, доцент,
Советник юстиции 2-го класса

СИСТЕМА ОРГАНОВ ИСПОЛНИТЕЛЬНОЙ ВЛАСТИ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННОГО РАЗВИТИЯ

В рамках данной статьи автор исследовал систему органов исполнительной власти, принимая во внимание результаты конституционного развития.

Исследуя конституционные и законодательные механизмы правового регулирования, автор рассмотрел два основных вопроса, а именно:

- а) нормативно-правовая база создания системы органов исполнительной власти, ее влияние на стабильность системы;
- б) правовой статус и особенности функционального разделения республиканских органов исполнительной власти.

Учитывая новые конституционные решения, автором предложены некоторые законодательные решения, которые помогут разъяснить функциональную роль республиканских органов исполнительной власти в системе государственного управления.

Ключевые слова: правительство, министерство, орган государственного управления при правительстве, республиканский исполнительный орган, система органов исполнительной власти, функциональное разделение

BAGRAT GHAZINYAN

Advisor to the Minister of Justice of the RA, PhD in Law,
Associate Professor, Second class councillor of Justice

SYSTEM OF THE EXECUTIVE POWER INSTITUTIONS IN THE CONTEXT OF CONSTITUTIONAL DEVELOPMENT

The author of this article has made the subject of discussion within the system of executive power institutions, taking into account the results of the constitutional developments so far.

Considering the combination of constitutional and legal mechanisms of regulation, the author observed two fundamental questions, namely,

- a) normative legal basis for establishing the system of executive power institutions, its impact on the stability of the system.
- b) the legal status and functional separation features of the republican executive institutions.

Taking into account the new constitutional solutions author proposed certain legislative solutions, which can clarify functional role of executive institutions in the system of public administration.

Key words: Government, ministry, state administration institution under government, republican executive institution, system of the executive power institutions, functional separation

* * *

ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի
իրավագիտության ամբիոնի ասպիրանտ,
Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ,
իրավաբանական վարչություն, առաջատար մասնագետ

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՎԵՃԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածի շրջանակներում ուսումնասիրության առարկա են հանդիսացել պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության ապահովման հետ կապված խնդիրները և պետական իշխանության մարմինների միջև իրենց լիազորությունների իրականացման հետ կապված վեճերի էությունը: Կատարված ուսումնասիրության արդյունքով ներկայացվել են պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հա-

վասարակշռության ապահովման մեխանիզմները և պետական իշխանության մարմինների միջև առաջացած վեճերի լուծման ուղղությունները:

Հիմնական բառեր. իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունք, սահմանադրական հավասարակշռություն, իրավական բնույթի վեճեր, քաղաքական բնույթի վեճեր:

АЙК КЕСОЯН

Аспирант Академии государственного управления Республики Армения, Аппарат Президента Республики Армения, юридическое управление, ведущий специалист

ОБЕСПЕЧЕНИЕ КОНСТИТУЦИОННОГО БАЛАНСА МЕЖДУ ОРГАНАМИ ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ И ХАРАКТЕР СПОРОВ, ВОЗНИКАЮЩИХ МЕЖДУ ОРГАНАМИ ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ

В рамках статьи предметом исследования стали задачи, связанные с обеспечением конституционного баланса между органами государственной власти и характер споров, возникающих между органами государственной власти в связи с исполнением своих полномочий. В результате осуществленного исследования, представлены механизмы обеспечения конституционного баланса между органами государственной власти и направления решения споров, возникающих между органами государственной власти.

Ключевые слова: принцип сбалансирования и разделения власти, конституционный баланс, споры правового характера, споры политического характера.

HAYK KESOYAN

Phd student of public administration academy of the Republic of Armenia Staff of the President of Armenia, legal department, leading specialist

THE PROVISION OF CONSTITUTIONAL BALANCE AMONG STATE GOVERNMENT BODIES AND THE ESSENCE OF DISPUTES RISEN BETWEEN STATE GOVERNMENT BODIES

Issues connected with the provision of Constitutional balance among state government bodies and the essence of disputes between state government bodies connected with the implementation of their competencies are the subject of the research in the framework of the article. Mechanisms of constitutional balance provision between state government bodies and directions of disputes' resolving risen between state government bodies have been presented in the framework of the research.

Keywords: principle of power division and balance, constitutional balance, disputes of legal essence, disputes of political essence.

* * *

ԱՐՄԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի ասպիրանտ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՀԱՅՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Տարբեր կառավարման ձև ունեցող պետություններում, բնականաբար, պետության գլուխների թե՛ գործառույթները, թե՛ ինստիտուտները տարբերակվում են. մի դեպքում առկա է նախագահի ինստիտուտ իր լիազորություններով, մյուս դեպքում՝ միապետ կամ հոգևոր առաջնորդ իրենց լիազորություններով: ՀՀ Նախագահի կարևորագույն խնդիրներից մեկն է ՀՀ Սահմանադրության պահպանմանը հետևելը: Այդ նորմի իրացումն առաջարկվում է դիտարկել սահմանադրական մշտադիտարկման պարադիգմայի շրջանակներում՝ հաշվի առնելով հատկապես 2018 թվականից ՀՀ Սահմանադրության՝ ամբողջությամբ ուժի մեջ մտնելու հանգամանքը:

Բանալի բառեր. Սահմանադրություն, պետության գլուխ, սահմանադրական մշտադիտարկում, նախագահ, սահմանադրական վերահսկողություն:

АРМАН СТЕПАНИЯН

Аспирант Российско-Армянского университета

ПРОБЛЕМА РАСКРЫТИЯ РЕАЛЬНОГО СОДЕРЖАНИЯ ПОЛНОМОЧИЙ ПРЕЗИДЕНТА РА

В странах с различными формами правления различаются не только функции глав государств, но также их институты: в одном случае имеется институт президента с его полномочиями, в другом – монарх или духовный лидер со своими полномочиями. Одной из наиболее важных функций Президента РА является, то, что Президент РА следит

за соблюдением Конституции. Реализацию этой нормы предлагается рассматривать в парадигме конституционного мониторинга, особо учитывая полное вступление в силу с 2018 года изменений в Конституции РА.

Ключевые слова: Конституция, глава государства, конституционного контроля, президент, конституционный контроль

ARMAN STEPANYAN

PhD student, Russian-Armenian university

CONTENT OF THE RA PRESIDENT'S POWERS

In countries with strange forms of government there are different not only functions of heads of States, but also their institutions: in one case there is an Institute of the President with his powers, and on the other hand the monarch or a spiritual leader with their powers. One of the most important function of the President of RA is that the RA President shall observe the compliance with the Constitution. The implementation of this provision is proposed to consider in the paradigm of constitutional monitoring, particularly in view of the full entry into force in 2018 changes in the RA Constitution.

Keywords: Constitution, head of state, constitutional monitoring, president, constitutional control.

* * *

ԼԻԼԻԹ ՂԱԶԱՆՉՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ Փաստաբանական պալատի անդամ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի դոկտորանտ

**ԱՆՁԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Տվյալ գիտական հոդվածում հեղինակը հանգամանորեն դիտարկում է անձի իրավական դրության իրացման իրավաբանական երաշխիքների էությունը, բովանդակությունն ու առանձնահատկությունները: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ անձի իրավունքների և պարտականությունների սահմանների հստակեցումը, իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և պարտականությունների իրացման դատավարական-ընթացակարգային եղանակը, ինչպես նաև արտոնություններն ու խրախուսման միջոցները, որոնք խթանում են անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի արդյունավետ իրականացումը, երաշխավորում են անձի իրավական դրության իրացումը ժողովրդավարական, իրավական պետությունում:

Բանալի բառեր. անձի իրավական դրություն, երաշխիքներ, շահեր, անձի իրավունքներ և պարտականություններ, պետություն, ժողովրդավարություն:

ЛИЛИТ КАЗАНЧЯН

Старший научный сотрудник Института философии, социологии и права НАН РА,
кандидат юридических наук,
член Палаты адвокатов Республики Армения,
докторант Института философии, социологии и права НАН РА

ОСОБЕННОСТИ РЕАЛИЗАЦИИ ЮРИДИЧЕСКИХ ГАРАНТИЙ ПРАВОВОГО ПОЛОЖЕНИЯ ЛИЧНОСТИ

В данной научной статье автор обстоятельно рассматривает сущность, содержание и особенности юридических гарантий правового положения личности. Проведенные исследования указывают, что конкретизация пределов прав и обязанностей личности, процессуально-процедурные формы реализации прав, свобод, законных интересов личности, а также меры поощрения и льготы для стимулирования реализации данных прав и свобод, обеспечивают реализацию правового положения личности в демократическом, правовом государстве.

Ключевые слова: правовое положение личности, гарантии, интересы, права и обязанности личности, государство, демократия.

LILIT KAZANCHIAN

Senior Researcher of The Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA, PhD in Law,
Member of the Chamber of the Advocates
of the Republic of Armenia,
Doctoral candidate of The Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

PECULIARITIES OF IMPLEMENTATION OF LEGAL GUARANTEES OF LEGAL POSITION OF PERSONALITY

In the given scientific article the author thoroughly examines the essence, content and features of legal guarantees of the legal status of the individual. The conducted researches indicates, that the specification of limits of the rights and duties of the individual, the procedural forms of realizing the rights, freedoms and legal interests of the individual, as well as incentives and benefits which stimulate the realization of these rights and freedoms, ensure the realization of the legal status of the individual in a democratic, legal state.

Keywords: legal status of the individual, guarantees, interests, rights and obligations of the individual, the state, democracy.

* * *

ԿԱՐԵՆ ԱՄԻՐՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՀԱՆՐԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հեղինակի կողմից քննարկման առարկա են դարձել հանրային-իրավական պատասխանատվության տեսական հիմնախնդիրները, տրվել են այնպիսի հասկացությունների սահմանումներ, ինչպիսիք են «հանրային-իրավական պատասխանատվություն», «պաշտոնատար անձ»:

Բացի այդ՝ առաջադրվել է այն գաղափարը, որ պետության (պետական իշխանության և պաշտոնատար անձանց) պատասխանատվությունը կոչվում է հանրային-իրավական, քանի որ առաջանում է հանրային իրավահարաբերությունների ոլորտում պետական իշխանության ներկայացուցչի կողմից պետաիշխանական լիազորությունների իրացման շրջանակներում և կարող է գոյություն ունենալ միայն իրավական կարգավորման շրջանակներում:

Բանալի բառեր. պատասխանատվություն, իրավական պատասխանատվություն, հանրային-իրավական պատասխանատվություն, պետական իշխանության պատասխանատվություն, պաշտոնատար անձանց պատասխանատվություն:

КАРЕН АМИРЯН

Аспирант кафедры теории и истории государства и права ЕГУ

ПУБЛИЧНО-ПРАВОВАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ ГОСУДАРСТВЕННЫХ ОРГАНОВ И ДОЛЖНОСТНЫХ ЛИЦ В КОНТЕКСТЕ СОЦИАЛЬНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ

Автором рассмотрены теоретические проблемы публично-правовой ответственности, даны определения таких понятий, как «публично-правовая ответственность», «должностное лицо».

Кроме того, автор выдвинул идею о том, что ответственность государства (государственных органов и должностных лиц) является публично-правовой, так как она возникает в рамках реализации представителем государственной власти государственно-властных полномочий в сфере общественно-правовых отношений и может существовать только в рамках правового регулирования.

Ключевые слова: ответственность, правовая ответственность, публично-правовая ответственность, ответственность государственной власти, ответственность должностных лиц.

KAREN AMIRYAN

PhD Student of the YSU Chair of Theory and History of State and Law

PUBLIC LEGAL RESPONSIBILITY OF THE STATE AND OFFICIALS IN THE CONTEXT OF SOCIAL RESPONSIBILITY

The author considered theoretical issues of public legal responsibility, and defined such concepts as “public legal responsibility” and “official”.

In addition, the author put forward the idea that the responsibility of the State (State authorities and officials) is public legal, since it arises within the framework of realization of the powers by the representative of state power in the sphere of public legal relations, and it can exist only within the framework of a legal settlement.

Keywords: responsibility, legal responsibility, public legal responsibility, responsibility of the State, responsibility of officials.

* * *

ՀՈՎԱՅՓ ՔՈՉԱՐՅԱՆ

Իրավաբան

ՀԵՏՄԱՀՈՒ ՓՈԽՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածում դիտարկվում են հետմահու փոխապատվաստման համաձայնության կանխավարկածի որոշ հիմնախնդիրներ Հայաստանի Հանրապետությունում: Հեղինակը, ուսումնասիրելով արտասահմանյան պետությունների փորձը և ՄԻԵԴ-ի դիրքորոշումները, հանգում է այն եզրակացության, որ անհրաժեշտ է համաձայնության կանխավարկածը փոխարինել անհամաձայնության կանխավարկածով:

Բանալի բառեր. համաձայնության կանխավարկած, անհամաձայնության կանխավարկած, օրգաններ, փոխապատվաստում, արժանապատվություն:

ОВСЕП КОЧАРЯН

Юрист

НЕКОТОРЫЕ ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ПРЕЗУМПЦИИ СОГЛАСИЯ НА ПОСМЕРТНОЕ ДОНОРСТВО В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

В статье рассматриваются правовые проблемы презумпции согласия на посмертное донорство в РА. Автор, исследуя практику зарубежных государств и позиции ЕСПЧ, пришел к выводу о необходимости изменения презумпции согласия на модель презюмируемого несогласия на посмертное донорство.

Ключевые слова: презумпция согласия, презумпция несогласия, органы, донорство, достоинство.

OWSEP KOCHARYAN

Lawyer

SOME LEGAL PROBLEMS OF PRESUMED AGREEMENT OF POSTMORTAL DONATION IN REPUBLIC OF ARMENIA

The article deals with the legal problems of presumed agreement of postmortal donation in Republic of Armenia. The author, exploring the legal practice of foreign states and the positions of ECHR, came to the conclusion about the necessity of replacing the presumption of agreement to the presumed disagreement of postmortal donation in Republic of Armenia.

Keywords: presumption of agreement, presumption of disagreement, organs, donation, dignity.

* * *

ՆԱՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ՝ ՈՐՊԵՍ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ

Սույն հոդվածի շրջանակներում հետազոտվել են պետական գնման պայմանագրի էական պայմանները, մասնավորապես՝ պայմանագրի առարկան՝ որպես էական պայման: Ներկայացվել է գնման առարկայի բնութագրի նշանակությունը գնումների գործընթացում՝ առաջարկելով մեխանիզմներ՝ գնման առարկայի բնութագրի կազմման և հաստատման գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու համար: Հոդվածում քննարկվել են նաև գնման առարկայի անհատականացման դեպքերը և դրանցով պայմանավորված խնդիրները, առաջարկվել է նման խնդիրների լուծման մեխանիզմ:

Բանալի բառեր. պետական գնում, պետական պայմանագրի էական պայմաններ, պետական գնման պայմանագրի առարկա, գնման առարկայի բնութագրեր, գնման առարկայի բնութագրերի հաստատում, գնման առարկայի անհատականացում:

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 101 2017

НАНЭ СААКЯН

Аспирант кафедры гражданского права ЕГУ

ПРЕДМЕТ ДОГОВОРА О ГОСУДАРСТВЕННЫХ ЗАКУПКАХ КАК СУЩЕСТВЕННОЕ УСЛОВИЕ ДОГОВОРА

В данной статье исследованы существенные условия государственного договора, включая предмет договора о государственных закупках. В статье представлена роль характеристики предмета закупки и предложены механизмы для ее более эффективной подготовки и утверждения. В статье также рассмотрены случаи идентификации предмета закупок и проблемы, возникающие в подобных случаях, и предложены механизмы разрешения подобных проблем.

Ключевые слова: государственные закупки, существенные условия государственного договора, предмет договора о государственных закупках, спецификация предмета закупки, утверждение спецификации предмета закупки, идентификация предмета закупки

NANE SAHAKYAN

PHD Student of the YSU Chair of Civil Law of YSU

THE SUBJECT OF THE CONTRACT ON PUBLIC PROCUREMENT AS AN ESSENTIAL TERM OF THE CONTRACT

This article studies essential terms of the contract on public procurement particularly the subject of the contract. The article presents the role of the characteristics of the subject of procurement and suggests mechanisms for more efficient preparation and approval of them. The article also examines the cases and some problems of identification of the subject of procurement. The mechanism for resolving such problems has been proposed.

Keywords: public procurement, essential terms of the contract on public procurement, the subject of the contract on public procurement, characteristics of the subject of procurement, approval of the characteristics of the subject of procurement, identification of the subject of procurement

* * *

ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի հայցորդ

ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄԻՆԸ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏ

Սույն գիտական հոդվածում, մարդու սոմատիկ իրավունքների լույսի ներքո, ուսումնասիրվել են այն հարցերը, թե ինչ է իրավական հարաբերությունը, որոնք են իրավական հարաբերության տարրերը, ինչ է մարդու մարմինը, երբ է մարդու մարմինը դառնում իրավական հարաբերության օբյեկտ, ինչ է կենսաբանական օբյեկտը, որոնք են կենսաբանական օբյեկտի հատկանիշները, ինչպես նաև ուսումնասիրվել են կենսաբանական օբյեկտի հիմնահարցերն իրավական հարաբերությունների համատեքստում:

Բանալի բառեր. իրավական հարաբերություն, իրավական հարաբերության օբյեկտ, կենսաբանական օբյեկտ, մարդու մարմին:

АРТАК ГЕВОРГЯН

Соискатель Российско-Армянского (Славянского) университета

ЧЕЛОВЕЧЕСКОЕ ТЕЛО КАК ОБЪЕКТ ПРАВООТНОШЕНИЯ

В данной научной статье, при свете соматических прав человека, были изучены следующие вопросы: что такое правоотношение, элементы правоотношения, что такое человеческое тело, когда человеческое тело становится объектом правоотношения, что такое биологический объект, особенности биологического объекта, а также правовые отношения в контексте проблем биологических объектов.

Ключевые слова: правоотношение, объект правоотношений, биологический объект, человеческое тело.

ARTAK GEVORGYAN

Post-graduate researcher of Russian-Armenian (Slavonic) University

HUMAN BODY AS OBJECT OF LEGAL RELATION

In the given research paper, under the light of somatic rights of person, have been studied: what is legal relation, which are the elements of legal relation, what is human body, in which circumstances human body considers as object of

legal relation, what is biological object, which are the elements of biological objects: Besides, under the legal relations the basic issues of biological objects have been studied.

Keywords: legal relation, object of the legal relation, biological object, human body

* * *

ՆԱՐԻՆԵ ՄԱՆԱՍՅԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի նախագահի խորհրդական,
ԵՀՊ քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՆԲՈՂՈՔԱՐԿԵԼԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Այս հոդվածում ներկայացված է անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից գումար գանձելու պահանջով ՀՀ վարչական դատարան դիմելու իրավագործության մասին վերլուծություն:

Մասնավորապես՝ ուսումնասիրման առարկա է եղել այն հարցը, թե՛ երբ բռնագանձման մասին գործերով հայցադիմումը կարող է տրվել վարչական դատարան:

Ուսումնասիրված են տվյալ ոլորտի միջազգային փորձը, ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները, որոնց արդյունքով տրված է իրավական գնահատական, թե երբ վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք իրավունք ունեն դիմելու վարչական դատարան:

Բանալի բառեր. հանրային իրավական դրամական պահանջ, գումարի բռնագանձում, անբողոքարկելի վարչական ակտ, դատարան դիմելու իրավունք:

НАРИНЕ МАНАСЯН

Советник председателя административного апелляционного суда РА,
соискатель кафедры гражданского процесса ЕГУ

ПРАВО НА ОБРАЩЕНИЕ В АДМИНИСТРАТИВНЫЙ СУД НА ОСНОВАНИИ НЕОПРОТЕСТУЕМОГО АДМИНИСТРАТИВНОГО АКТА

В данной статье представлен анализ относительно правомочий на обращение в Административный суд Республики Армения с требованием о взыскании с физического или юридического лица суммы, предусматриваемой публично-правовыми денежными требованиями, на основании неопротестуемого административного акта. В частности, предметом изучения является тот вопрос, когда исковое заявление по делам о взыскании может подаваться в Административный суд.

Были изучены международный опыт в данной сфере, решения Конституционного суда РА, в результате чего дана правовая оценка относительно того, когда административные органы или должностные лица вправе обращаться в Административный суд.

Ключевые слова: публично-правовые денежные требования, взыскания, неоспоримый административный акт, право обратиться в суд,

NARINE MANASYAN

Adviser to the president of the administrative court of appeal of RA
An applicant of the civil proceedings chair of the YSU

THE RIGHT TO APPEAL TO THE ADMINISTRATIVE COURT OF RA ON THE BASIS OF AN INDISPUTABLE ADMINISTRATIVE ACT

The article presents an analysis about the jurisdiction of applying to the Administrative Court of RA with the requirement to recover from citizens and legal entities the amount provided for by public-legal monetary claims, on the basis of an indisputable administrative act. Particularly, the subject of study is the question, when the statement of claim on the levy cases can be submitted to the Administrative Court.

The article covers research of the international experience in the respective field, the decisions of the Constitutional Court of RA and as a result is given a legal assessment when administrative bodies or officials have the right to appeal to the Administrative Court of RA.

Keywords: public-legal monetary claims, levy, indisputable administrative act, the right to appeal to court.

ՀՀ ՊԱՏԱՆԱԶՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՓԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԳԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՆՎՈՂ ՊԱՀԱՆՑՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել.

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցվածը թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պարտավորված չէ կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 101 2017